- աշխատանքներ են տարվել միջազգային կազմակերպություններում և ծրագրերում ուսանողների ներգրավման ուղղությամբ,
- իրականացվել է ամառային ճամբարի շրջանակում ուսանողների ներգրավման և մասնակցության գործընթացը,
- ցուցաբերվել է ակտիվ մասնակցություն ամբիոններում անցկացվող ասպիրանտների և հայցորդների ամենամյա ատեստացիաներին, հաշվետվություններին, ատենախոսությունների քննարկումներին:

Գիտական գրադարանի ֆոնդը համալրվել է նվիրատվությամբ և համալսարանի կողմից գնված 6450 միավոր գրականությամբ, որից զուտ գրքերը՝ 5750: Բուհը բաժանորդագրվել է 7 անուն թերթի: Էլեկտրոնային ծրագրում մուտքագրվել է հաշվետու տարում ձեռք բերված գրականությունը: Էլեկտրոնային գրադարանից օգտվել է 1400 ընթերցող:

Գիտական կադրերի պատրաստման գործում կարևոր է գիտական հետազոտողի ինստիտուտի կայացումը: 2021-2022 ուսումնական տարում ասպիրանտուրա են ընդունվել 1 և հայցորդ ձևակերպվել 3 շրջանավարտներ: Ատեստավորվել են 13 ասպիրանտներ (3-ինը՝ ավարտական ատեստավորում), 8 հայցորդներ:

Կազմակերպվել և իրականացվել են հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված պարտադիր և ընտրովի հետևյալ դասընթացները. «Օտար լեզու», «Գիտության փիլիսոփայություն», «Հոգեբանություն և մանկավարժություն», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», «Հետազոտական աշխատանքի կազմակերպման սկզբունքներ»:

2021թ. դեկտեմբեր ամսում լույս են ընծայվել բնական գիտությունների գծով՝ 40, հասարակական գիտությունների գծով՝ 56 գիտական հոդվածներ, իսկ 2022թ. հունիս ամսում՝ բնական գիտությունների գծով՝ 33, հասարակական գիտությունների գծով՝ 34 գիտական հոդվածներ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

Յարամիշյան Վիտյա Բենիկի, հ.գ.թ., դոցենտ

2021-2022 ուսումնական տարում ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքները, հանրային կապերն ու կարիերայի ուղղությամբ աշխատանքները ԱրՊՀ-ում իրականացվել են՝ ելնելով այդ ուղղություններով մշակված համապատասխան պլաններից, ինչպես նաև ստեղծված իրավիճակից, այն մարտահրավերներից ու խնդիրների բարդության աստիճանից, որոնք ձևակերպվել էին որպես միջնաժամկետ նպատակներ:

Առհասարակ, յուրաքանչյուր գործում հաջողության գլխավոր գրավականը գրագետ և ճիշտ պլանավորումն է, ինչի շնորհիվ ամրապնդվում են ձեռքբերումները, ստեղծվում են նոր հնարավորություններ՝ զարգացման համար:

Պլաններ մշակելու ժամանակ ստեղծված իրավիճակը մենք դիտարկել ենք ոչ թե որպես խոչընդոտ, այլ որպես հնարավորություն՝ նոր ուղղություններ ընտրելու համար: Թվարկված խնդիրների որակյալ կատարման գործին նպաստել է այն հանգամանքը, որ համալսարանում հաջողությամբ գործել են ինչպես ուսանողների հետ տարվող աշխատանքների հաստիքային համակարգը, այնպես էլ ուսանողական ինքնավար կառույցները՝ ուսանողական խորհուրդները, գիտական ընկերությունը, նախասիրական ակումբները, ակտիվը: Հաշվի են առնվել օբյեկտիվ դժվարությունները՝ պարապմունքների կազմակերպման երկհերթ բնույթը և լսարանային պայմանների ու դահլիճների սակավությունը:

Մարտահրավերներից մեկը, թերևս, կորոնավիրուսային համավարակի երկրորդ ալիքն էր, որն իր ազդեցությունն ունեցավ համալսարանական ստորաբաժանումների կոլեկտիվ տրամադրությունների ու կարծիքների վրա՝ պահանջելով ոչ ստանդարտ լուծումներ: Լուծումներից մեկը եղավ հեռավար ուսուցման կազմակերպումը՝ որպես այլընտրանք առկա ուսուցմանը: Ի պատիվ համալսարանականների՝ այդ միջոցառումն իրականացվեց պատշաճ մակարդակով՝ ապահովելով կրթության շարունակականությունը և նվազագույն որակական պահանջները:

Որպես շարունակական մարտահրավերներ՝ դիտարկել ենք նաև տարածքային ու բարոյափոխության կորուստներ կրած երկրում ստեղծված դժվարին իրավիճակը՝ սահմանային սրացումները, էլեկտրական էներգիայի, ինտերնետի, ջրուցման պարբերական անջատումները, խստաշունչ ձմեռը, ինչպես նաև չղադարող հոգեբանական և տեղեկատվական հարձակումները, կեղծ լուրերը, էթնիկական հաշվեհարդարի սպառնալիքները: Համալսարանի ղեկավարությունը հընթացս լուծվում էր նաև բռնատեղահանված ուսանողների սոցիալ-կենցաղային բնույթի հարցերը, ընկճվածության, հուսահատության, անորոշության, վաղվա օրը պլանավորելու անկարողություն և այլ բացասական իրավիճակների մեղմացման խնդիրները: Այդ ենթատեքստում կարևոր էր նաև թվով քսանվեց նահատակված ուսանողների պատվին տպագրված «Ձեզ բացակա չենք դնի» ժողովածուն և կազմակերպված հուշ-ցերեկոյաները ֆակուլտետներում և համալսարանական մակարդակով: Ինչպես նախորդ ուսումնական տարում, հաշվետու տարում ևս ԱրՊՀ ղեկավարությունը զգալի ջանքեր գործադրեց՝ ուսանողների մոտ հետպատերազմյան սինդրոմները մեղմելու և համալսարանական գործունեությունը բնականոն հունի մեջ վերադարձնելու ուղղությամբ: Այդպիսի միջոցառումներից էին լավագույն հոգեբանների ներգրավմամբ խմբային և անհատական միջոցառումների անցկացումը, ուսանողական արշավներն ու ամառային միջազգային վրանային ճամբարը:

Միջազգային հավատարմագրման գործընթացի իրականացումը փաստեց («Ուսանողները» և «Հանրային կապեր» չափանիշները հավատարմագրման հանձնաժողովի կողմից արժանացել էին բարձր գնահատականի), որ դրանց ուղղվածությունը, բնույթը և որակը համահունչ են միջազգային պահանջներին և հենված են ակտիվության, նախաձեռնողականության, համալսարանի կառավարման գործընթացում ուսանողների ներգրավվածության, որոշումների ընդունման ժամանակ նրանց կարծիքների ուսումնասիրման և հաշվառման վրա:

Աշխատանքի արդյունքում հանրային կապերն ու հասարակայնության հետ տարվող աշխատանքները կազմակերպվել են այնպես, որ «Արցախի համալսարան» պաշտոնաթերթը, «Քո

Ժամանակը» ուսանողական թերթը, ԱրՊՀ պաշտոնական կայքէջը, սոցիալական ցանցերում համապատասխան էջերը ակտիվորեն ու օպերատիվորեն ներկայացնեն համալսարանը հանրության լայն շրջանակներին: ԱրՊՀ ներքին և արտաքին կյանքը նաև լայնորեն լուսաբանվել է հանրապետության ամենատարբեր լրատվամիջոցների, այդ թվում՝ հանրային հեռուստատեսության և ռադիոյի միջոցով:

Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների, ինչպես նաև հանրային կապերի ու տեղեկատվության ուղղությամբ 2021-2022թթ. ուստարում զբանցված արդյունքները հիմք են տալիս եզրակացնելու, որ ԱրՊՀ-ն շարունակել է պատվով կատարել իր հիմնական և պատվավոր առաքելությունը՝ որակյալ բարձրագույն կրթություն ունեցող և երկրի ներկայի ու ապագայի նկատմամբ պատասխանատվություն կրող բարձրակարգ մասնագետ-քաղաքացու ձևավորումը:

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ

2021-2022 ֆինանսական տարում շարունակվել են համալսարանի նյութատեխնիկական բազայի հարստացման, մասնաշենքերի ընթացիկ նորոգման, ԱրՊՀ ճամբարի կառուցման, ուսանողների և աշխատակիցների համար ավելի անվտանգ և ապահով միջավայրի ստեղծման աշխատանքները:

2021 թ. նոյեմբերից, ուսանողների կեցության պայմանները բարելավելու նպատակով, սկսվել են հանրակացարանի 2-րդ մուտքի 2-րդ հարկի երկու մասնաբաժինների և միջանցքների վերանորոգման աշխատանքները, որոնք ավարտին են հասցվել 2022թ. ապրիլին և կահավորվել 2022թ. հունիսին՝ 3548.0 հազ. դրամի գույքով:

2022 թ. ընթացիկ վերանորոգումներ են կատարվել բոլոր մասնաշենքերի լսարաններում, աշխատասենյակներում, միջանցքներում, պահակակետերում, կաթսայատներում, տանիքներում և նկուղներում:

Աշխատանքներ են իրականացվել սեփական ջեռուցման ցանցի և կաթսայի նորոգման, կաթսայատան և ներքին էլեկտրական ցանցի անխափան աշխատանքների ապահովման ուղղությամբ:

Բոլոր մասնաշենքերում կատարվել են վնասված ապակիների փոխարինման աշխատանքներ:

2022 թ. հունվարի 17-ին ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտի համաձայն՝ ԱրՊՀ 1-ին մասնաշենքը հանձնվել է շահագործման, որից հետո սկսվել է կահավորման գործընթացը:

2021-2022 ֆինանսական տարում ձեռք են բերվել նաև 117314.9 հազ. դրամի տնտեսական գույք և սարքավորումներ, 296.5 հազ. դրամ արժողությամբ դեղորայք:

ԱրՊՀ ամառային ճամբարի տարածքում կատարվել են տարածքի մաքրման և հարդարման աշխատանքները: Հարավային Կովկասի շվեյցարական հիմնադրամի ֆինանսավորմամբ, «ԱրՊՀ ճամբարի կառուցում» ծրագրի շրջանակներում, ավարտին են հասցվել աղբյուրի և խաղահրապարակի կառուցման աշխատանքները:

Անձնակազմի սպասարկման բաժնի միջոցով մշտական աշխատանքներ են տարվում համալսարանի մաքրության, սանիտարահիգիենիկ վիճակի, կարգուկանոնի պահպանության, անվտանգության ապահովման և բակի ու պարտեզների բարեկարգման ուղղությամբ:

ԱրՊՀ հյուրասենյակներում բնակվում են ԱՀ Հաղորդի շրջանից տեղահանված ընտանիքներ:

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Մարգարյան Գայանե Գեորգիի, կ.գ.թ., դոցենտ

2021-2022 ուսումնական տարում ԱրՊՀ-ում հրավիրվել է գիտական խորհրդի 8 նիստ և քննարկվել օրակարգային 44 հարց, որից 4-ը՝ կանոնակարգային: Համալսարանում կատարվող կանոնակարգային փոփոխությունները, նոր կարգերի մշակումը, ընդունումը և կիրառումը միտված են ուսումնագիտական գործունեության բարելավմանը: Գիտխորհրդի կողմից ընդունված բոլոր որոշումները հասանելի էին ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմին և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներին:

Համալսարանի զարգացման ծրագրի շրջանակներում կատարված կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև մի շարք ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնավարման ժամկետների ավարտամբ պայմանավորված՝ կազմակերպվել են ամբիոնի վարիչների (6) և դեկանների (3) ընտրություններ և վերընտրություններ, համակարգվել դրանց ընթացակարգն ու արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում ԱրՊՀ-ում երկու անգամ հայտարարվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների մրցույթ, ըստ որի կազմակերպվել և անց են կացվել ընտրություններ՝ ավագ դասախոսի (16), դոցենտի (29) և պրոֆեսորի (8) թափուր պաշտոնների համար:

2021-2022 ուսումնական տարում շարունակվել է ակտիվ համագործակցությունը համալսարանի ստորաբաժանումների և ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի հետ: Դոցենտի գիտական կոչումները հաստատելու, ինչպես նաև համապատասխան դիպլոմներով ամրագրելու նպատակով ՀՀ ԲՈԿ է ներկայացվել 4 հայտ: Ներկայացված բոլոր հայտերը բավարարվել են, և հայտատուների գիտական կոչումները հաստատվել ու ամրագրվել են դիպլոմներով:

ԱրՊՀ զարգացման գործում ունեցած ավանդի համար ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Մերգելի Ղազինյանին շնորհվել է ԱրՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Արցախի Հանրապետության, մասնավորապես ԱրՊՀ կայացման և զարգացման գործում ունեցած ավանդի համար հայ լեզվաբան, արևելագետ, իրանագետ, հասարակական գործիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գուրգեն Վրեժի Մելիքյանին և փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեքսանդր Սարգսի Սանասյանին շնորհվել է ԱրՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

ԱրՊՀ-ում երկարամյա գիտական գործունեության համար և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր Վիտյա Բենիկի Յարամիշյանը պարգևատրվել է «ԱրՊՀ Ոսկե մեդալով»:

ԱրՊՀ-ում կայացման և զարգացման գործում ունեցած ավանդի համար ֆիզմաթ.գ.դ., պրոֆեսոր Ալեքսանդր Մովսեսի Խաչատրյանը պարգևատրվել է «ԱրՊՀ Ոսկե մեդալով»:

Տպագրության է երաշխավորվել «ԱրՊՀ գիտական տեղեկագրի» (բնական և հասարակական գիտություններ) հոդվածների ժողովածուն: Գիտական խորհրդի կողմից երաշխավորվել են մեկ տասնյակ և ավելի գիտական, ինչպես նաև ուսումնամեթոդական աշխատանքներ:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են հայցորդների և ասպիրանտների գիտահետազոտական գործունեությունը խթանելուն ուղղված աշխատանքները: Հաստատվել են ԱրՊՀ հայցորդների և ասպիրանտների ուսումնահետազոտական աշխատանքների անհատական պլանները (5):

Ակտիվ և թափանցիկ էր ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող մշտական հանձնաժողովների աշխատանքը:

ԱրՊՀ մի շարք դասախոսներ և ուսանողներ ներգրավված են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտական պետական կոմիտեի և ԱՀ ԿԳՄՄ նախարարության կողմից ֆինանսավորվող թեմաների կատարման խմբերում:

Կատարված աշխատանքները միտված էին համալսարանի գիտական ներուժի բացահայտմանը, գիտական մտքի ձևավորմանն ու զարգացմանը:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Մրցութային հանձնաժողով

ԱրՊՀ-ում գործող ընթացակարգերի համապատասխան՝ մրցութային հանձնաժողովը 2021-2022 ուսումնական տարում իրականացրել է հետևյալ աշխատանքը.

ա) վերահսկել է հայտարարության օրվանից սահմանված ժամկետում մրցույթի փաստաթղթերի ներկայացման ժամկետներն ու ցանկը.

բ) վերահսկել է մրցույթի մասնակցի փաստաթղթերի որակավորման մանդատային հանձնաժողովի կողմից ուսումնասիրման ու համապատասխան եզրակացության տրամադրման գործընթացը.

գ) վերահսկել է համապատասխան ամբիոնի նիստում հավակնորդի փաստաթղթերի քննարկման և քննարկման արդյունքում ընդունված կարծիքի (որոշման) տրամադրման գործընթացը.

դ) վերահսկել է ֆակուլտետի խորհրդում մրցույթի մասնակցի փաստաթղթերի ուսումնասիրման և գրավոր կարծիքի համապատասխանությունը սահմանված պահանջներին.

ե) ընդունել է որոշում ԱրՊՀ գիտական խորհրդի նիստում մրցույթի հավակնորդի թեկնածությունը քննարկման ներկայացնելու կամ քննարկումից հանելու մասին:

Ըստ այդմ՝ թափուր պաշտոնների տեղակալման համար ընթացքավորվել և իրականացվել է՝

- դոցենտի թափուր պաշտոնի 8 մրցույթ,
- ավագ դասախոսի թափուր պաշտոնի 5 մրցույթ՝ հայտարարված 16-ից,
- ամբիոնի վարիչի 1 մրցույթ՝ հայտարարված 6-ից:

Մրցութային հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքը պայմանավորված էր ԱրՊՀ-ում պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթներով:

Ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողով

Հանձնաժողովը 2021-22 ուսումնական տարվա գործունեությունը կազմակերպել է համաձայն հաստատված պլանի՝ համագործակցելով գիտխորհրդին կից գործող այլ հանձնաժողովների հետ: Աշխատանքները նպատակաուղղվել են ԱրՊՀ նոր կարգերի ու կանոնադրությունների նախագծերի մշակմանը, գործող կարգերն ու կանոնադրությունները արդի խնդիրների պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են.

ա) **գործող կարգերում ու կանոնադրություններում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.**

1. 2014թ. հունվարի 31-ի ԱրՊՀ գիտխորհրդի N 1-Լ որոշմամբ հաստատված «Կուրսային (դասընթացային-գիտական) աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության», «Ավարտական աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության» ու «Մագիստրոսական թեզի նախապատրաստման ու պաշտպանության» կանոնակարգերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություն. (հաստատվել է ԱրՊՀ գիտխորհրդի 2021թ. դեկտեմբերի 21-ի N 11-Լ որոշմամբ):

2. 2014թ. փետրվարի 26-ի ԱրՊՀ գիտխորհրդի N 2-Լ որոշմամբ հաստատված «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» կարգապահական կանոններում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություն (հաստատվել է ԱրՊՀ գիտխորհրդի 2022թ. փետրվարի 1-ի N 1-Լ որոշմամբ):

3. 2013թ. դեկտեմբերի 25-ին ԱրՊՀ գիտխորհրդի N 10-Լ որոշմամբ հաստատված «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի կողմից 2004թ. մայիսի 15-ին հաստատված կարգն ուժն կորցրած ճանաչելու մասին» ընթացակարգում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություն (հաստատվել է ԱրՊՀ գիտխորհրդի 2022թ. փետրվարի 28-ի N 2-Լ որոշմամբ):

4. 2015թ. հուլիսի 3-ի ԱրՊՀ գիտխորհրդի N 16-L որոշմամբ հաստատված «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգը և ուսումնական աշխատանքների հաշվառման նորմերը հաստատելու մասին» կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություն (հաստատվել է ԱրՊՀ գիտխորհրդի 2022թ. օգոստոսի 29-ի N 5-L որոշմամբ)։

բ/ նոր կարգերի նախագծերի մշակման ուղղությամբ.

5. «Ընթացակարգ Արցախի պետական համալսարանի ՊՈԱԿ առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման»։ Ընդունվել է ԱրՊՀ գիտխորհրդի 2021թ.դեկտեմբերի 21-ի N 12-L որոշմամբ.

6. «Ձևաթերթ դասախոսների անցկացման և արդյունքների գնահատման»։ Ընդունվել է ԱրՊՀ գիտխորհրդի 2021թ.դեկտեմբերի 21-ի N 13-L որոշմամբ.

Ներքին կանոնակարգերի մշակման հանձնաժողովը ուսումնամեթոդական աշխատանքների հանձնաժողովի հետ համատեղ քննարկել է հետևյալ կարգերի նախագծերը, որոնք դեռևս վերջնական ձևակերպումներ չեն ստացել.

- «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ դեկանների տարբերակված հավելավճարների կարգը հաստատելու մասին:

- «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ ամբիոնի վարիչների տարբերակված հավելավճարների կարգը հաստատելու մասին.

Ուսումնամեթոդական աշխատանքների հանձնաժողով

1. Քննարկվել և եզրակացություն է տրվել մասնագիտությունների ուսումնական պլանների փոփոխությունների վերաբերյալ:

2. Իրականացվել է ուսումնական ստորաբաժանումների ուսումնամեթոդական գործընթացին առնչվող աշխատանքների նկատմամբ վերահսկողություն:

3. Քննարկվել են կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման նոր չափանիշներ:

4. Մշակվել է դասախոսության անցկացման և արդյունքների գնահատման ձևաթերթը:

5. Քննարկվել են ԱրՊՀ գիտխորհրդի հաստատմանը ներկայացվող ուսումնամեթոդական աշխատանքներին առնչվող ներքին իրավական ակտերի նախագծերը:

6. Մշակվել են ամբիոնների վարիչների և դեկանների տարբերակված հավելավճարների կարգերը

7. Եզրակացություններ են տրվել գիտխորհրդի երաշխավորությանը ներկայացվող 4 ուսումնամեթոդական աշխատանքների տպագրության հիմնավորվածության մասին: Դրանք են

- ԱրՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ավագ դասախոս Գոհար Սարգսյանի «Տնտեսական գործունեության վերլուծության տեսություն (դասախոսությունների ժողովածու)» ուսումնամեթոդական ձեռնարկը,

- ԱրՊՀ Իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ի.գ.թ., ավագ դասախոսի պաշտոնակատար Տաթևիկ Գևորգյանի «Հանցագործությունների բազմակիության հիմնախնդիրները» ուսումնական ձեռնարկը,

- ԱրՊՀ Ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Հասմիկ Ղազարյանի «Լեզվաբանություն. գործնական աշխատանքների ձեռնարկ ուսանողների համար» ուսումնամեթոդական ձեռնարկը,

- ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի ավագ դասախոս, բ.գ.թ. Նոնա Դավթյանի «Միջուկային գրականության դասավանդման մի քանի հարցերի շուրջ» ուսումնամեթոդական ձեռնարկ:

Գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողով

Հաշվետու ժամանակահատվածում գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրման հանձնաժողովի կողմից գումարվել է յոթ նիստ, որոնցում քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Հասմիկ Սուրենի Ղազարյանի «Լեզվաբանություն. գործնական աշխատանքների ձեռնարկ ուսանողների համար» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին (արձ. թ.07):

2. Սիլվա Եղիշեի Խաչատրյանի «Արցախի ազնվագույն գրիչը. Վազգեն Օվյան քաղաքացին և բանաստեղծը» մենագրության տպագրության երաշխավորման մասին (արձ. թ.08):

3. Գեղեցիկ Սերգեյի Բաբայանի «Կենսաբանության որոշ թեմաների դասավանդման մեթոդական մշակում» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին (արձ. թ.09):

4. Տաթևիկ Արմենի Գևորգյանի «Հանցագործությունների բազմակիության հիմնախնդիրները» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին (արձ. թ.10):

5. ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի ժամավճարային հիմունքներով աշխատող ասիստենտ Համլետ Մարտիրոսյանի «Յուզաներկ արևի ջերմությունը» գրքի տպագրության երաշխավորման հարցը (արձ. թ.11):

6. ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Նարինե Արարատի Հովհաննիսյանի/Ավանեսյանի «Ազգային հիմնախնդիրները սփյուռքահայ գրականության մեջ» գիտական ուսումնասիրության տպագրության երաշխավորման հարցը (արձ. թ.12):

7. Գոհար Գավրուշի Սարգսյանի «Տնտեսական գործունեության վերլուծության տեսություն» (դասախոսությունների ժողովածու) ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին (արձ. թ.13):

ՐՈՒՀ-գործատու համագործակցությունն ապահովող հանձնաժողով

ԱրՊՀ գիտխորհրդին կից գործող ԱրՊՀ-գործատու համագործակցությունն ապահովող հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հանձնաժողովի գործունեության աշխատակարգի¹ և ԱրՊՀ ռազմավարական ծրագրի շրջանակներում:

Հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովի կողմից պլանավորվել և իրականացվել է.

1. *ԱրՊՀ-գործատու* համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի 2021-2022 ուս. տարվա աշխատանքների պլանի մշակում և հաստատում,

2. *ՐՈՒՀ-գործատու* կապի զարգացման ապահովում ԱրՊՀ ՌԻՀՏՍ և կարիերայի բաժնի հետ համատեղ,

3. ԱրՊՀ բոլոր ֆակուլտետներում գործող ֆակուլտետի խորհրդին կից գործատուների հետ համագործակցության հանձնաժողովների պլանների մշակում և հաստատում,

4. Շարունակվում է ամբիոնների կողմից գործատուների ներկայացուցիչների ներգրավումը կրթական ծրագրերի մշակման, հաստատման և մոնիթորինգի գործընթացներում,

5. Շարունակվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում գործատուների ներկայացուցիչների ներառումը,

6. Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և մասնագիտական աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով ՌԻՀՏՍ և կարիերայի բաժնի կողմից կատարվել են աշխատանքներ (ներառված են բաժնի հաշվետվության մեջ):

7. ՌԻՀՏՍ և կարիերայի բաժնի կողմից մշակված ծրագրով մուտքագրվել են շրջանավարտների տվյալները, նրանց աշխատավայրերը, ըստ ֆակուլտետների, կազմվել է 2021-2022 ուսումնական տարվա վիճակագրական տվյալների աղյուսակ՝ «Շրջանավարտների բազա»:

Այսպիսով, 2021-2022 ուսումնական տարում հանձնաժողովն իրականացրել է գործողություններ, որոնք ամրապնդել են համալսարանի կապը գործատուների հետ:

Որակի ապահովման մշտական հանձնաժողով

1. ԱրՊՀ գիտխորհրդի հաստատմանը ենթակա որակի ներքին ապահովման ոլորտի կարգերի, նախագծերի մշակման աշխատանքներին նպաստելուն էին ուղղված *ՄԿԾ հաստատման, ՄԿԾ ղեկավարման* կարգերի, *Առաջավոր փորձի համեմատական վերլուծության*

¹ ԱրՊՀ գիտական խորհրդի 2018թ.փետրվարի 23-ի N8 -L որոշմում

(բենչմարքինգի) իրականացման ընթացակարգի քննարկումները և համապատասխան առաջարկություններ ներկայացնելը:

2. Քննարկվել է նաև ՄԿԾ որակի ապահովման այլ գործիք՝ ՄԿԾ ընթացիկ մշտադիտարկման հաշվետվության ձևաթղթի նմուշը:

3. Իրականացվել է որոշակի հարցաթերթերի մանրամասն վերլուծություն՝ դասընթացից բավարարվածության հարցման հարցաթերթ, բակալավրիատի ՄԿԾ որակից ՊԴ կազմի բավարարվածության աստիճանը պարզող հարցաթերթ, բակալավրիատի ՄԿԾ որակից արտաքին շահակիցների՝ գործատուների, շրջանավարտների բավարարվածության աստիճանը պարզող հարցաթերթեր, SWOT աղյուսակ:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների մշտական հանձնաժողով

2011-2022 ուսումնական տարում ԱրՊՀ գիտական խորհրդին կից գործող ուսանողների հետ տարվող աշխատանքների մշտական հանձնաժողովն իր աշխատանքի հիմքում ունեցել է համալսարանի առջև դրված ռազմավարական նպատակներն ու խնդիրները: Գլխավոր մարտահրավերներն, անշուշտ, կորոնավիրուսային համավարակի երկրորդ ալիքի և հետպատերազմյան իրավիճակի պայմաններում ուսանողների հետ տարվող աշխատանքների շարունակականության ապահովումն էր: Այդ տրամաբանության մեջ կարևորվել են.

- բարդ իրավիճակներում ուսանողների հանրային ակտիվության պահպանումը,
- դպրոցների շրջանավարտների միջավայրում համալսարանի վարկանիշի պահպանումը,
- համալսարանի հանրային պատասխանատվության ընդլայնումը:

Հետպատերազմյան շրջանում ուսումնական գործընթացի կազմակերպմանը խոչընդոտում էին սահմանային չդադարող միջադեպերը, էլեկտրաէներգիայի, ինտերնետի, գազամատակարարման խափանումները, ցրտաշունչ և ձյունառատ ձմեռը, որոնք փոխեցին աշխատանքի կազմակերպման տրամաբանությունը: Առաջնահերթ պլանում հայտնվեցին շարունակվող զանգվածային սթրեսի պայմաններում սոցիալ-կենցաղային և հոգեբանական խնդիրների կարգավորումը:

Ուսումնական տարվա ընթացքում ՌԻՀՏԱ հանձնաժողովի նիստերում քննարկվել են հրատապ հարցեր, պլանավորվել և հրավիրվել են ուսանողների պարբերական հանդիպումներ դեկանների, պրոռեկտորների, ռեկտորի հետ, բարձրացված խնդիրների վերաբերյալ ընդունվել են որոշումներ,

- աշխատանք է կատարվել հակակորոնավիրուսային պայքարի պայմաններում ԱրՊՀ նահատակված ուսանողների հիշատակին նվիրված հուշ-միջոցառումների, շրջանավարտների թողարկման միջոցառումների և մագիստրոսների դիպլոմների հանձնման արարողությունների կազմակերպման ուղղությամբ,

- մեթոդապես կառավարվել և ուղղորդվել է ուսանողական համապատասխան բաժնի, ուսանողական ինքնավար կառույցների, ֆակուլտետների մեթոդիստների, կուրսղեկների աշխատանքը,

- ուսանողների շրջանում բացատրական աշխատանք է կատարվել՝ հետպատերազմյա շրջանում և համաճարակի պայմաններում հեռավար կրթության հնարավորությունների լիարժեք օգտագործման, ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման ուղղությամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Մարգարյան Լուսինե Գեորգիի, բ.գ.թ., դոցենտ

Ֆակուլտետի կառուցվածքը և կառավարման համակարգը

2021-2022 ուսումնական տարում ֆակուլտետում ուսումնագիտական գործունեությունն իրականացվել է 4 ամբիոններում:

Ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 39799 ակադեմիական ժամ, որը բաշխվել է 4 ամբիոնների միջև հետևյալ համամասնությամբ՝

Ակ. Մ. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 8816 ակադեմիական ժամ (2020-2021 ուստարում՝ 10130 ժամ), որը բաշխվել է 12 հիմնական, 3 համատեղությամբ և 1 ժամավճարային հիմունքով աշխատող դասախոսների միջև: 1 դրույքով ապահովվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի 5 դասախոս, 7 դասախոս՝ 0.39-0.75 հաստիքով:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 6865 ակադեմիական ժամ (2020-2021 ուստարում՝ 7544 ժամ), որը բաշխվել է 10 հիմնական և 12 ժամավճարային, 1 համատեղությամբ հիմունքով աշխատող դասախոսների միջև: 1 դրույքով ապահովվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի 2 դասախոս, 8 դասախոս՝ 0.25-0.64 հաստիքով:

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 8375 ակադեմիական ժամ (2020-2021 ուստարում՝ 8675 ժամ), որը բաշխվել է 12 հիմնական և 3 ժամավճարային հիմունքով աշխատող դասախոսների միջև: 1 դրույքով ապահովվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի 4 դասախոս, 8 դասախոս՝ 0.51-0.94 հաստիքով:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 15743 (2020-2021 ուստարում՝ 17092 ժամ), որը բաշխվել է 20 հիմնական և 5 ժամավճարային հիմունքով աշխատող դասախոսների միջև: 1 դրույքով ապահովվել է ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի 14 դասախոս, 6 դասախոս՝ 0.38 - 0.88 հաստիքով:

Վերջին 5 տարիների ընթացքում, սկսած 2017-2018 ուսումնական տարվանից, ֆակուլտետի ուսումնական ծանրաբեռնվածությունը նվազել է 8990 ակադեմիական ժամով:

Ֆակուլտետի աշխատակազմն է .

հիմնական աշխատող՝ 54 հոգի,

համատեղությամբ՝ 4 հոգի,

ժամավճարային՝ 21 հոգի,

ուսումնասօժանդակ անձնակազմ՝ 8 հոգի:

Կրթական գործունեություն

2021-2022 ուստարվա մեկնարկին ֆակուլտետն ուներ 468 ուսանող, որից 350-ը՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգում, 67-ը՝ հեռակա ուսուցման համակարգում, 51-ը՝ մագիստրատուրայում: Ֆակուլտետում ձևավորվել էր 32 խումբ. բակալավրիատի 5 կրթական ծրագրերից՝ 24 խումբ, որից 17-ը՝ առկա, 7-ը՝ հեռակա, մագիստրատուրայի 6 կրթական ծրագրերից՝ 8 խումբ:

2021-2022 ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետն ուներ 453 (2020-2021 ուստարում՝ 543, 2017-2018 ուստարում՝ 648) սովորող, որից 339-ը՝ բակալավրիատի առկա ուսուցման համակարգում, 71-ը՝ հեռակա ուսուցման համակարգում, 43-ը՝ մագիստրատուրայում:

Զմեռային քննաշրջանին մասնակցել է 466 սովորող, անբավարար գնահատված ուսանողների թիվը կազմել է 15: Ամառային քննաշրջանին մասնակցել է 432 սովորող՝ բացի 2-րդ կուրսի մագիստրանտներից. անբավարար գնահատված ուսանողների թիվը կազմել է 12, գերազանցությամբ սովորողներին՝ 45: Ամփոփիչ ատեստավորման արդյունքները ներկայացված են հետևյալ աղյուսակում:

	Մասնագիտություն	Ուս.թ.	Գերազանց	Լավ	Բավ.	Չներկ.
Բակալավրիատ						
Առկա ուսուցում						
1.	Հայոց լեզու և գրականություն	19				
	Ավարտական աշխատ. պաշտ.	8	8	-	-	-
	Ամփոփիչ ատեստավորման քնն.	11	-	1	10	-
2.	Ռուսաց լեզու և գրականություն	6				
	Ավարտական աշխատ. պաշտ.	3	3	-	-	-
	Ամփոփիչ ատեստավորման քնն.	3	-	-	3	-
3.	Լրագրություն	10				
	Ավարտական աշխատ. պաշտ.	7	5	2	-	-
	Ամփոփիչ ատեստավորման քնն.	3	-	2	1	-
4	Անգլերեն լեզու և գրականություն	17				
	Ավարտական աշխատ. պաշտ.	11	8	3	-	-
	Ամփոփիչ ատեստավորման քնն.	6	-	6	-	-
Հեռակա ուսուցում						
1	Հայոց լեզու և գրականություն	8	-	2	6	-
2	Ռուսաց լեզու և գրականություն	4	-	2	2	-
Մագիստրատուրա						
1	Անգլերեն լեզու	6	6	-	-	-
2	Հայ գրականության պատմություն	3	3	-	-	-
3	Հայոց լեզվի պատմ. և գրաքննադատ.	4	4	-	-	-
4	Ռուսաց լեզու և գրականություն	3	3	-	-	-
5	Լրագրություն	6	5	1	-	-
	Բակալավրիատ	64	24	18	22	-
	Մագիստրատուրա	22	21	1	-	-
	Ընդհանուրը	86	45	19	22	-

Բակալավրիատում գերազանցության վկայագիր ստացել է բակալավրիատի սովորողների ընդհանուր թվի 18.46%-ը, իսկ մագիստրատուրայի կրթական աստիճանում՝ սովորողների 31.81% -ը:

Հաշվետու ուստարում հաջորդ կուրս է փոխադրվել 347 սովորող, ուսանողության շարքերից հեռացվել կամ ազատվել է 51 ուսանող, 3-ը՝ մագիստրատուրայի, 30-ը՝ առկա ուսուցման համակարգից, 18-ը՝ հեռակա: 16 սովորող ձևակերպել է ակադեմիական արձակուրդ, որից 8-ը՝ հեռակա ուսուցման համակարգից, 7-ը՝ առկա ուսուցման համակարգից, 1-ը՝ մագիստրատուրայի կրթական աստիճանից:

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 4:

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն *Ամբիոնի վարիչ՝ Ղազարյան Հասմիկ Սուրենի, բ.գ.թ., դոցենտ*

Ակադեմիկոս Ս. Աբրահամյանի անվան հայոցլեզվի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 1 պրոֆեսոր, 9 դոցենտ, 3 ավագ դասախոս, 1 դասախոս, 1 ասիստենտ և 1 բ.գ.թ., ասիստենտ՝ որպես ժամավճարային աշխատող:

Հիմնական աշխատողներ՝

1. Ղազարյան Հասմիկ Սուրենի-բ.գ.թ., դոցենտ
2. Բաբայան Օֆելյա Ենոքի-բ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ
3. Մինասյան Սիլվա Աշոտի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
4. Յարամիշյան Միրա Բենիկի-մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
5. Մինասյան Շողեր Մադլենտի-բ.գ.թ., դոցենտ
6. Խաչատրյան Նունե Գեորգիի-բ.գ.թ., դոցենտ
7. Զաքարյան Աիդա Սարգսի-մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
8. Հասրաթյան Ծովինար Ալեքսանդրի-ավագ դասախոսի պաշտոնակատար
9. Սարգսյան Վեհանուշ Լևոնի-ավագ դասախոսի պաշտոնակատար
10. Հայրապետյան Լիանա Բենիկի-ավագ դասախոսի պաշտոնակատար
11. Մինասյան Լիանա Սեյրանի-դասախոս
12. Արզումանյան Արմինե Վարդանի-ասիստենտ

Ժամավճարային հիմունքով աշխատող՝

Մովսեսյան Ռենա Անդրանիկի-բ.գ.թ., ասիստենտ

Համատեղությամբ աշխատողներ՝

1. Սարգսյան Արմեն Յուրիկի-բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ
2. Մարգարյան Լուսինե Գեորգիի-բ.գ.թ., դոցենտ
3. Սաղյան Շուշանիկ Պավլիկի-բ.գ.թ., դոցենտ

Ամբիոնն ունեւ մեկ ասպիրանտ՝ Ալթունյան Էդիտա Ռոբերտի:
Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 8843 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալել և այժմ էլ ծավալում է արևելահայերենի և արևմտահայերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության, պատմահամեմատական քերականության, բարբառագիտության, ընդհանուր և կիրառական լեզվաբանության, խոսքի մշակույթի և ոճաբանության, հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի ուղղություններով:

Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, կազմել մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թեստեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ:

Հրատարակությունների ցանկ

1. Սարգսյան Ա. Յու., *Արցախի բանահյուսության գրառման համառոտ պատմություն*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 7-19:
2. Սարգսյան Ա. Յու., *Արցախի ժողովրդագիտությունը. Ազգագրություն (Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի)*, հ. 7, Ստեփանակերտ, 2022, 736 էջ:
3. Սարգսյան Ա. Յու., *Արցախի ժողովրդագիտությունը. բանահյուսություն (աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի)*, հ. 8, Ստեփանակերտ, 2022, 688 էջ:
4. Սարգսյան Ա. Յու., *Արցախի ազգագրությունը (աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ Ա. Յու. Սարգսյանի)*, Ստեփանակերտ, 2022, 820 էջ:
5. Ղազարյան Հ.Ս., Մինասյան Շ.Ս., *Ժամանակակից հայերենի շարահյուսական անկանոնությունները պարզ նախադասության սահմաններում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 9-18:
6. Ղազարյան Հ.Ս., *Լեզվաբանության. գործնական առաջադրանքների ձեռնարկ ուսանողների համար*, Ստեփանակերտ, 2022, 210 էջ:
7. Մինասյան Շ.Ս., Ղազարյան Հ.Ս., *Շարահյուսական անկանոնությունները ժամանակակից հայերենում (բարդ ստորադասական նախադասություն)* «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 20-31:
8. Սարգսյան Լ.Գ., *Անկախության շրջանի Արցախի բառարանագրությունը*, 2021թ., ԵՊՄՀ, լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիա. «Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարը» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 8-9 հուլիսի, 2021, էջ 103-110:
9. Սարգսյան Լ.Գ., *Արցախի «Անկախություն» համանուն բնականությունների ստուգաբանության հարցի շուրջ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022 Ստեփանակերտ, էջ 33-39:
10. Մինասյան Ս.Ա., *Հատուկ անուններից կերտված նորակազմությունների կադապարները Հովհաննես Շիրազի ստեղծագործություններում*, «Պատմաբանասիրական հանդես» 3 (218), Երևան, 2021, էջ 173-187:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Զրույցներ լեզվաբանության արդիական խնդիրների շուրջ:
2. Դասախոսների կողմից գիտական սեմինարների և ընթերցումների անցկացում և քննարկում (6 գիտական սեմինար, 4 գիտական ընթերցում):
3. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:
4. Դպրոցական օլիմպիադայի կազմակերպում:
5. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
6. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
7. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:
8. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Համագործակցություն՝ ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարանի հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի 2022թ. փետրվարի 21-ին կազմակերպած առցանց գիտաժողով (1 զեկուցում), Խ.Աբովյանի անվան ԵՊՄՀ մարտի 11 –ին կազմակերպած միջազգային առցանց գիտաժողով (1 զեկուցում), ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հունիսի 16-ին կազմակերպած առցանց հայերենագիտական գիտաժողով (1 զեկուցում), հունիսի 24-ին կազմակերպած առցանց հանրապետական գիտաժողով (2 զեկուցում):

Վերահսկողական աշխատանքներ

- 1.Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
- 2.Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
- 3.Փոխադարձ դասալսումների անցկացում և քննարկում (5 դասալսում):
- 4.Թեստերի, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն և դրանց համապատասխանելիության վերահսկում ստուգումների և քննությունների համար սահմանված ընթացակարգին:
- 5.Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
- 6.Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
- 7.Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

- 1.Փորձուսուցման հաշվետու միջոցառում:
- 2.Դպրոցական առարկայական օլիմպիադա:
- 3.Դաս-միջոցառում՝ ուսանողների և աշակերտների մասնակցությամբ:
- 4.Ներֆակուլտետային միջոցառում՝ նվիրված մայրենի լեզվի օրվան:
- 5.Ասմունքի մրցույթ՝ նվիրված մայրենի լեզվի օրվան:
- 6.«Մեր մեծերը» խորագրով հուշ-միջոցառում՝ նվիրված Հր. Աճառյանի 145-ամյակին:

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Դավթյան Նոնա Ռաֆիկի, բ.գ.թ., ավագ դասախոս

Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 2 պրոֆեսոր, 5 դոցենտ, որից մեկը՝ ժամավճարային հիմունքներով աշխատող, մեկը՝ համատեղությամբ, 6 ավագ դասախոս, 10 ասիստենտ:

Հիմնական աշխատողներ՝

1. Խանյան Սոկրատ Աղալարի-բ.գ.դ., պրոֆեսորի պաշտոնակատար
2. Աթայան Անահիտ Միքայելի-բ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
3. Դավթյան Նոնա Ռաֆիկի-բ.գ.թ., ավագ դասախոս
4. Ավանեսյան Նարինե Արարատի-բ.գ.թ., դոցենտ
5. Խաչատրյան Սիլվա Եղիշեի-բ.գ.թ., դոցենտ
6. Բալայան Զինաիդա Վանիի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
7. Առաքելյան Վալյա Արտաշեսի-բ.գ.թ., ավագ դասախոսի պաշտոնակատար
8. Լալայան Գայանե Ստեփանի-ավագ դասախոսի պաշտոնակատար
9. Աբրահամյան Օֆելյա Ներսեսի-ավագ դասախոսի պաշտոնակատար

10. Սողոմոնյան Տաթևիկ Գառնիկի-բ.գ.թ., ավագ դասախոս

Համատեղությամբ աշխատող՝

Սառաջյան Զարինե Գարեգինի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Ղուլյան Արտակ Կամոյի-բ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
2. Գաբրիելյան Կիմ Եղիշեի-բ.գ.թ., ավագ դասախոսի պաշտոնակատար
3. Ավետիսյան Հրայր Համլետի-ասիստենտ
4. Բալայան Սամվել Կիմայի-ասիստենտ
5. Դուլիսյան Անուշ Վլադիմիրի-ասիստենտ
6. Պողոսյան Տաթևիկ Կարոյի-ասիստենտ
7. Դավթյան Մերի Ռոբիկի-ասիստենտ
8. Մարտիրոսյան Համլետ Անդրանիկի-ասիստենտ
9. Իվանիդիս Սոֆի Կոստանտինի-ասիստենտ
10. Սարգսյան Արմեն Բադալի-ասիստենտ
11. Սարգսյան Մարիամ Յուրիի-ասիստենտ
12. Սաֆարյան Մարիամ Գրիգորիի-ասիստենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 6865 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարած գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝ հայ գրականությունը և նրա դասավանդման մեթոդիկա, ռուս և արտասահմանյան գրականություն, լրագրություն: Գրականության ուղղվածությամբ ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալում է հայ գրականության պատմության, սփյուռքահայ գրականության, արտասահմանյան և ռուս գրականության պատմության, գրաքննադատության պատմության, գրականագիտության և գրականության դասավանդման մեթոդիկայի ուղղություններով:

Լրագրության ուղղվածությամբ ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալում է ԶԼՄ տեխնիկայի, լրագրության էթիկայի և ժանրերի, ռադիոժուռնալիստիկայի, հեռուստաժուռնալիստիկայի, ռազմական լրագրության, մշակութային լրագրության, հայ մամուլի պատմության, համացանցային ԶԼՄ-ների, մեդիաազդեցության ժամանակակից տեսությունների, մեդիայի և քաղաքական տեխնոլոգիաների, հանրային կապերի և հաղորդակցության, *մեդիա և մշակույթ* փոխհարաբերությունների հիմնական ուղղություններով:

Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել, կատարվել են մասնակի փոփոխություններ և մշակվել նոր դասընթացների ծրագրեր ինչպես առկա, այնպես և հեռակա ուսուցման բակալավրիատի ուսպլաններում:

Ամբիոնի դասախոսները տպագրել են գիտական հոդվածներ, մենագրություններ և ուսումնամեթոդական ձեռնարկներ, մասնագիտական հոդվածներով և էլոյթներով հանդես եկել միջազգային գիտաժողովներում, գրական-գեղարվեստական տարաբնույթ միջոցառումներում, այդ թվում՝ համալսարանական և արտահամալսարանական, տպագրվել տեղական և արտասահմանյան մամուլում:

Հրատարակությունների ցանկ I. Մենագրություններ, ձեռնարկներ

1. Խանյան Ս. Ա., *Ղևոնդ Ալիշան-200*, Ստեփանակերտ, 2021, 64 էջ:
2. Խանյան Ս. Ա., *Էդվարդ Միլիտոնյանի ստեղծագործությունը*, Եր., 2021, 188 էջ:
3. Բալայան Զ. Վ., *Արցախը XIX դարի հայ գրականության մեջ* (գրականագիտական ուսումնասիրություն), Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս» հր., 2021, 832 էջ:
4. Դավթյան Ն. Ռ., *Սփյուռքահայ գրականության դասավանդման մի քանի հարցերի շուրջ* (ուսումնամեթոդական ձեռնարկ), Ստեփանակերտ, 2022, 198 էջ:

5. Խաչատրյան Ս. Ե., **Վազգեն Օվյանի քնարերգությունը**, ԱրՊՀ, Ստեփանակերտ, 2022, 112 էջ:

II. Ձեռնարկներ

1. Բալայան Ջ. Վ., **Առաքել Կոստանյանցի «Պատմություն Արցախի» երկասիրության գրականագիտական անդրադարձերը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 81-99 :
2. Բալայան Ջ. Վ., **Միլլոգիզմի փիլիսոփայական, պատմահոգեբանական պարադիգմները և Մուրացանի գեղարվեստը**, «Անդրեաս Երեց», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 100-111 :
3. BALAYAN, Z. (2021). *Literary, Methodological Paradigms: The Theme of Artsakh in the Works by Raffi and Muratsan*. WISDOM, 18(2), 176-187.
4. Բալայան Ս. Կ., **Աղբրեջանի տեղեկատվական ագրեսիան սոցիալական մեդիայում 2020թ սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմից հետո**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/ 2022, Ստեփանակերտ, էջ 25-30:
5. Դավթյան Ն. Ռ., **Կ. Ջարյանի կենսագրության և «Նավը լեռան վրա» վեպի ուսուցումը հանրակրթական ավագ դպրոցում**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 31-40:
6. Դավթյան Ն. Ռ., **Վերհուշը սփյուռքահայ վեպում**, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, «Կեանքը եւ վեպի ընդգրկումները. ազդեցություններ եւ զարգացման ուղենիշներ» / միջազգային գիտաժողովի նիւթեր, Երևան, 2022, էջ 153-161:
7. Դոլուխանյան Ա. Վ., **Հարությունյան Մ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանման տիպաբանությունը «Regnum» լրատվական գործակալությունում (Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի օրինակով)**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 41-45:
8. Դոլուխանյան Ա. Վ., Աղամյան Ս., **Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հանրային հաղորդակցման համակարգը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 46-52:
9. Դոլուխանյան Ա. Վ., **Տեղեկատվական քաղաքականության նախադրյալները Արցախի Հանրապետությունում**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 53-61:
10. Խանյան Ս. Ա., **Հայագիտական բարձրաժեռ ուսումնասիրություններ՝ ծրարված գալիքին**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 445-451:
11. Խանյան Ս. Ա., **Հայ ժողովրդի պատմության քառուղիների մարզարեն (Եղիշե Չարենց-125)**, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, Երևան, 2022-1(27), էջ 336-341:
12. Հովհաննիսյան Ն. Ա., **Մշակույթների բախման և ինքնության կորուստի հիմնախնդիրները Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպում**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 72-88:
13. Հովհաննիսյան Ն. Ա., **Գեղարվեստական ժամանակի և տարածության խնդիրը Համաստեղի արձակում**, «Գրական հորիզոն», Կանադա, 2021, թիվ 9, էջ 9-12:
14. Հովհաննիսյան Ն. Ա., **Արամ Հայկազի «Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը» գիրքը**, «Գրական հորիզոն», Կանադա, 2021, թիվ 10, էջ 9-14:
15. Հովհաննիսյան Ն. Ա., **Հայրենի տան ոգին Մուշեղ Բշիսանի պոեզիայում՝ որպես կյանքի բացարձակ գոյություն**, Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, թիվ 2, Ստեփանակերտ, 2021, էջ 160-168:
16. Հովհաննիսյան Ն. Ա., **Ոգու և ճանապարհի պատմափիլիսոփայությունը Կոստան Ջարյանի «Նավը լեռան վրա» վեպում**, Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, թիվ 2, 2021, էջ 149-163:
17. Հովհաննիսյան Ն. Ա., **Մասունում և Մասունից անդին. Ռոլանդ Շառոյանի «Էրզրի աստվածները» գիրքը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 460-464:
18. Հովհաննիսյան Ն. Ա., **Աքսորը և հիշողությունների ներհոսքը Վազգեն Շուշանյանի ստեղծագործության մեջ**, «Մթին պատանություն», «Երկիր յիշատակաց», Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու, թիվ 1, Ստեփանակերտ, 2022, էջ 228-239:
19. Հովհաննիսյան Ն. Ա., **Կորուսյալ ծննդավայրի երազային և առկա վերընկալումները սփյուռքահայ կարոտի արձակում**, **Շավարշ Նարդունի, Բենիամին Նուրիկյան**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, 2022, էջ 61-70:

20. Հովհաննիսյան Ն. Ա., *Ազգային ճակատագրի դրաման Վահե Հայկի «Հայրենի ծխան» հինգ հատորյակում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, 2022, էջ 48-60:
21. Մառաջյան Զ. Գ., *«Հնչող ձայներ» գրքի գեղարվեստական պոլիֆոնիան*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփ. 2021, պրակ 2, էջ 452-459:
22. Մառաջյան Զ. Գ., *Ազգային գոյաբանության հիմքերը՝ ըստ Մուրացանի*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 120-126 :
23. Մառաջյան Զ. Գ., *«Արցախի համալսարան» թերթի գործունեությունը 2010-2022 թթ.*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2022, Ստեփանակերտ, էջ 127-135:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Քննարկումներ գրականագիտության և լրագրագիտության արդիական խնդիրների շուրջ:
2. Գիտական սեմինարների անցկացում և քննարկում:
3. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:
4. Ուսանողների գիտական աշխատանքների կատարման վերահսկում:
5. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
6. Ուսումնամեթոդական ձեռնարկների, աշխատությունների քննարկում և տպագրության երաշխավորում:
7. Գիտական հոդվածների քննարկումներ և տպագրության երաշխավորում:
8. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Ամբիոնը համագործակցում է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, ՀՀ Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ:

Հայաստանի հանրապետական հեռուստառնկերության հետ. ուսումնական պրակտիկայի համագործակցության հուշագիր է ստորագրվել, որի շրջանակում Լրագրություն 4-րդ կուրսը արտադրական փորձուսումնական մեկ շաբաթն անց է կացրել Հայաստանի հանրային հեռուստառնկերությունում և հանրային ռադիոյում:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Մեսրոպ Մաշտոց համալսարանի կողմից կազմակերպված «Նորակազմ պետությունները պատերազմից հետո. խնդիրներն ու դրանց լուծման ուղիները» խորագրով միջազգային գիտաժողով (1 զեկուցում):
2. Մեսրոպ Մաշտոց համալսարանի կողմից կազմակերպված «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները. հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով միջազգային գիտաժողով (3 զեկուցում):
3. Գրիգոր Նարեկացի համալսարանի կողմից կազմակերպված «Եղիշե Չարենց-125» խորագրով հանրապետական գիտաժողով (2 զեկուցում):
4. Գրիգոր Նարեկացի համալսարանի կողմից կազմակերպված «Ազգային միաբանության գաղափարի մուրացանյան ընկալումները՝ որպես հայրենիքի լինելիության առաջնային նախապայման. գրականությունը և ժամանակի մարտահրավերները» խորագրով հանրապետական գիտաժողով (2 զեկուցում):

Վերահսկողական աշխատանքներ

1. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
3. Փոխադարձ դասալսումների անցկացում և քննարկում:

4. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում:
5. Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:
6. Դասընթացների՝ հեռավար կազմակերպման վերահսկողական աշխատանքներ:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Արձակագիր Սամվել Միքայանի գրքերի արցախյան շնորհանդես:
2. Գիտական ընթերցումներ՝ նվիրված Հ. Սահյանի պոեզիային:
3. Միջոցառում՝ նվիրված գիրք նվիրելու օրվան:
4. Հուշ-միջոցառում՝ նվիրված արցախյան 44-օրյա պատերազմում զոհված ուսանող-նահատակների հիշատակին:
5. Զ. Բալայանի «Արցախը 19-րդ դարի հայ գրականության մեջ» ուսումնասիրության շնորհանդես:
6. Ճանաչողական դասախոսությունների շարք՝ «Արվեստի դերը մարդու կյանքում» խորագրով:
7. Գիտական սեմինար՝ «Օտարալեզու գրականություն. հիմնահարցեր, պատմություն, դեմքեր» խորագրով:
8. Հուշ-միջոցառում՝ նվիրված Եղիշե Չարենցի 125-ամյակին:
9. «Հայ գրականության պատմություն» ներբուհական գիտամրցույթ:
10. Փորձուսուցման հաշվետու միջոցառում:

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոն *Ամբիոնի վարիչ՝ Հակոբյան Ինգա Համլետի, մ.գ.թ., դոցենտ*

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնում 2021-2022 ուսումնական տարում կատարած ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները իրականացրել են 5 դոցենտ, 3 դոցենտի պաշտոնակատար, 6 ավագ դասախոս, 1 դասախոս:

Հիմնական աշխատողներ՝

1. Հակոբյան Ինգա Համլետի-մ.գ.թ., դոցենտ
2. Առաքելյան Նունե Վազգենի-բ.գ.թ., դոցենտ
3. Մկրտչյան Սուսաննա Երվանդի-մ.գ.թ., դոցենտ
4. Հայրապետյան Լիանա Սերժի-մ.գ.թ., դոցենտ
5. Սարգսյան Ռուզաննա Ալեքսանդրի-բ.գ.թ., դոցենտ
6. Հովսեփյան Գայանե Յուրիի-մ.գ.թ., ավագ դասախոս
7. Մարգարյան Նաիրա Յուրիի-ավագ դասախոս
8. Ամիրջանյան Աիդա Արտաշեսի-ավագ դասախոս
9. Հովսեփյան Նելլի Բորիսի-ավագ դասախոս
10. Ավագյան Նունե Նոբելի-ավագ դասախոս
11. Ադամյան Իննա Ռոբերտի-ավագ դասախոս
12. Կոստանդյան Լիլիթ Վալերիկի-դասախոս

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

13. Անաստասյան Ժաննա Զալալի-դոցենտի պաշտոնակատար
14. Արզումանյան Մելանյա Ավանեսի-դոցենտի պաշտոնակատար
15. Բեգլարյան Լիլյա Ռոբերտի-դոցենտի պաշտոնակատար

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է **8375** ժամ:

Ամփոփում ամբիոնի կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալում է ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանության, բառագիտության, քերականության, համեմատական քերականության, ընդհանուր լեզվաբանության, ոճաբանության, ռուս գրականության պատմության, հայ և արտասահմանյան գրականության պատմության, ռուս բանահյուսության քննության, ռուսաց լեզվի և ռուս գրականության դասավանդման մեթոդիկայի ուղղություններով: Հաշվետու ժամանակահատվածում, նկատի առնելով մանկավարժական և մասնագիտական կատարելագործման տեղական պահանջները, բակալավրիատի առկա ուսուցման համակարգի ուսումնական պլաններում կատարվել են մասնակի փոփոխություններ:

Ամբիոնը հատուկ ուշադրություն է դարձրել մասնագիտության արդիական հարցերին առնչվող ծրագրերի մշակմանը և դասընթացների կազմակերպմանը: Ամբիոնի դասախոսները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են գիտական, ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքներ:

Հրատարակությունների ցանկ

1. Հակոբյան Ի.Հ., *Об активной словообразовательной адаптации заимствованных слов в молодежном сленге*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» 2/2021, Ստեփանակերտ, էջ 108-114:
2. Հակոբյան Ի.Հ., *Об особенностях обучения русскому языку как неродному в вузах Арцаха*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 155-162:
3. Առաքելյան Ն.Վ., *Дворовая романтика раннего творчества Владимира Высоцкого*, «Вестник РАУ», 2021, էջ 144-149:
4. Առաքելյան Ն.Վ., *Еще раз о двойственности некоторых персонажей Ф.М. Достоевского* (к 200-летию со дня рождения писателя). «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 148-154:
5. Սարգսյան Ռ.Ա., *Об интертекстуальности в рассказах и новеллах К. Паустовского.*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/ 2022, Ստեփանակերտ, էջ 177-185:
6. Հայրապետյան Լ.Ս., *Диалог культур при изучении русского языка на гуманитарном факультете в АРГУ*, Славянская культура: истоки, традиции, взаимодействие. XXIII Кирилло-Мефодиевские чтения (24 мая 2022, Москва): Материалы Международной научно-практической конференции: сборник статей [Электронный ресурс] / гл. ред. В. И. Карасик. Москва : Гос. ИРЯ им. А. С. Пушкина, 2022. էջ 91-96:
7. Հովսեփյան Գ. Յու., *Об особенностях изучения фонетико-фонологической системы русского языка в армянской общеобразовательной школе: анализ программ и учебников*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», №1, 2022, Ստեփանակերտ, էջ 164-175:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Քննարկումներ ժամանակակից ռուսաց լեզվի և ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման առանձնահատկությունների մասին:
2. Քննարկումներ ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի խնդիրների և խոսքի զարգացման հնարավորությունների մասին:
3. Ռուսաց լեզվի և մշակույթի ուսուցման հարցերը մասնագիտական և ոչ մասնագիտական խմբերում:
4. Մասնագիտական հոդվածների քննարկում և տպագրության երաշխավորում:
5. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
6. Մագիստրանտների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:
7. Դպրոցական օլիմպիադայի կազմակերպում:
8. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԲԳՎ բաժնին:
9. Առարկայական նկարագրերի հաստատում, վերահաստատում և տեղադրում էլեկտրոնային հարթակում:

Համագործակցություն

Ամբիոնը համագործակցում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բուհերի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնների հետ:

Կարևորելով բուհ-հանրակրթություն կապը՝ որպես ապագա ուսուցիչների նախապատրաստման կարևոր պայման՝ ամբիոնը գործնական կապեր է հաստատել հանրապետության մի շարք դպրոցների ռուսաց լեզվի մեթոդական միավորումների հետ, համագործակցել քաղաքի հիմնական դպրոցների հետ և ընթացիկ տարում իրականացրել մանկավարժական փորձաշարերը Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7, Հերիերի Ալիս Սիսեոյանի անվ. միջնակարգ, Բերքաձորի միջնակարգ դպրոցներում:

Ամբիոնի դասախոսներ Ի.Հ. Հակոբյանը, Ռ. Ա. Սարգսյանը, Ս.Ե. Մկրտիչյանը, Ի.Ռ.Ադամյանը, Ա.Ա. Ամիրջանյանը 2021թ. նոյեմբերի 21-ին մասնակցել են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կողմից առցանց կազմակերպված *«Русское культурное пространство сквозь призму языка»* կոնֆերանսին, և *«Русский язык как инструмент профессиональной мобильности: традиции и инновации»* վերապատրաստման դասընթացներին և ստացել են համապատասխան պատվոգրեր ու վկայագրեր:

Ամբիոնի դասախոս Ս.Ե.Մկրտիչյանը 2021թ. դեկտեմբերի 6-ից – 20-ը մասնակցել է Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի կողմից կազմակերպված *«Современные методы преподавания русского языка как иностранного»* (16 ժամ) վերապատրաստման դասընթացներին և ստացել համապատասխան վկայագիր: 2021թ. նոյեմբերի 27-ին Ս.Ե.Մկրտիչյանը մասնակցել է Ղազախստանում կազմակերպված առցանց *«Русский язык как инструмент профессиональной мобильности: традиции и инновации»* միջազգային ֆորումի միջոցառումներին (9 ժամ) և ստացել համապատասխան վկայագիր:

Ամբիոնի դասախոս Լ. Ս. Հայրապետյանը 2022թ. մայիսի 24-25-ը ՌԴ Մոսկվայի Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի կողմից կազմակերպված *«Второй Костомаровский форум»* -ում և ստացել համապատասխան վկայագիր:

Ամբիոնի դասախոս Ն.Վ. Առաքելյանը մասնակցել է Երևանի Հայ-ռուսական համալսարանի և Մոսկվայի Ռուսական արվեստի թանգարանի կողմից կազմակերպված *«Всемирная отзывчивость русской души»* վերինարին և ստացել համապատասխան վկայագիր:

Ամբիոնի դասախոսներ Ի.Հ. Հակոբյանը, Գ. Յու Հովսեփյանը, Ս.Ե. Մկրտիչյանը, Ն. Յու Մարգարյանը, Ի.Ռ.Ադամյանը, Ա.Ա. Ամիրջանյանը 2022թ. հունիսի 22-23-ը մասնակցել են Մոսկվայի Հումանիտար գիտությունների ինստիտուտի և Երևանի Հայ-ռուսական համալսարանի ռուսաց լեզվի և մասնագիտական հաղորդակցության ամբիոնի կողմից առցանց կազմակերպված *«Инновационные и информационные технологии в методике преподавания РКИ»* վեր-սեմինարին՝ ստանալով համապատասխան վկայագրեր:

Ամբիոնի դասախոս Ռ. Ա. Սարգսյանը մասնակցել է «Մերոպ Մաշտոց» համալսարանի, Արցախի ռուսական համայնքի և ԱՀ ռազմավարական հետազոտությունների անկախ կենտրոնի կողմից կազմակերպված «Россия-Карабах: историко-культурные связи» կլոր սեղանին *«Карабахский след в русской литературе 19 века»* զեկույցով:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Մոսկվայի Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի 2022թ. մայիսի 24-25-ին կազմակերպված *«Второй Костомаровский форум»* խորագրով միջազգային կոնֆերանս (1 զեկույցում):

2. «Մերոպ Մաշտոց» համալսարանի, Արցախի ռուսական համայնքի և ԱՀ ռազմավարական հետազոտությունների անկախ կենտրոնի 2022թ. մայիսի 6-ին կազմակերպված *«Россия-Карабах: историко-культурные связи»* խորագրով կլոր սեղան (1 զեկույցում):

Վերահսկողական աշխատանքներ

1. Իրականացվել է պարապմունքների ընթացքի հետևողական վերահսկողություն:

2. Վերահսկվել է ուսձանրաբեռնվածության կատարումը, ստուգումների և քննությունների ընթացքը, կազմակերպվել է ինքնուրույն աշխատանքների ստուգում, անցկացվել գիտական սեմինարներ և խորհրդատվություններ:

3. Ամբիոնում պարբերաբար անցկացվել են գիտական դասընթացներ, որոնք ուղղված էին մասնագիտության արդի խնդիրների լուսաբանմանը, լեզվաբանության և գրականագիտության բնագավառների նորությունների քննարկմանը:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Կլոր սեղան-քննարկում *«Современные подходы к преподаванию русского языка в АрГУ»* թեմայով ԱրՊՀ և այլ բուհերի դասախոսների մասնակցությամբ:
2. Դպրոցական օլիմպիադա՝ ռուսաց լեզվից և գրականությունից՝ *«Русский язык как язык культуры»* թեմայով (9-րդ, 10-րդ դասարանցիների համար):
3. Ն. Նեկրասովի տարեդարձին նվիրված պոեզիայի երեկո:
4. 44-օրյա պատերազմում զոհված՝ ԱրՊՀ ուսանողներին նվիրված հուշ-երեկո:
5. Առցանց էքսկուրսիա Տրետյակովյան պատկերասրահում և արդյունքների ամփոփում խաղ-մրցույթով:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Պետրոսյան Ռիտա Սուրենի, մ.գ.թ., դոցենտ

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքներ են իրականացնում 8 դոցենտ, 1 ավագ դասախոս, 9 ավագ դասախոս, 3 դասախոս և 6 ասիստենտ:

Հիմնական աշխատողներ՝

1. Պետրոսյան Ռիտա Սուրենի-մ.գ.թ., դոցենտ
2. Պետրոսյան Դորոթեյա Սամվելի-դոցենտի պաշտոնակատար
3. Հայրապետյան Արեգա Էդուարդի-ավագ դասախոսի պաշտոնակատար
4. Այվազովա Ֆլորա Ռոբերտի-ավագ դասախոսի պաշտոնակատար
5. Մկրտչյան Աիդա Լենտրուշի-ավագ դասախոսի պաշտոնակատար
6. Գաբրիելյան Վարդուհի Գրիգորի-ավագ դասախոսի պաշտոնակատար
7. Մելքումյան Էլմիրա Էդուարդի- ավագ դասախոսի պաշտոնակատար
8. Մինասյան Նարինե Ստանիսլավի-բ.գ.թ., դոցենտ
9. Հարությունյան Քրիստինա Վլադիմիրի-ավագ դասախոսի պաշտոնակատար
10. Ղարախանյան Լիա Լեոնսերի-ավագ դասախոսի պաշտոնակատար
11. Ամիրյան Նարինե Մելքոնի-բ.գ.թ., դոցենտ
12. Դուրասանյան Նարինե Վաչագանի-մ.գ.թ., դոցենտ
13. Թովմասյան Լուսինե Սուրենի- բ.գ.թ., դոցենտ
14. Վանյան Լուսինե Վասիլի-ավագ դասախոս
15. Աղաբաբյան Կարինա Վլադիմիրի-ավագ դասախոսի պաշտոնակատար
16. Սարգսյան Կարինե Գերասիմի-դասախոս
17. Շահնազարովա Արգենտինա Միքայելի-դոցենտի պաշտոնակատար
18. Ստեփանյան Սիրվարդ Ալբերտի-բ.գ.թ., դոցենտ
19. Պողոսյան Սվետլանա Բորիսի-դասախոս
20. Ավանեսյան Նելլի Սերգեյի-ասիստենտ
21. Քարամյան Էդիտա Սերժիկի-ասիստենտ

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Գասպարյան Գոհար Էդուարդի-ասիստենտ
2. Գրիգորյան Զարուհի Սերգեյի-ասիստենտ
3. Միրզոյան Իրինա Վալենտինի-ասիստենտ
4. Մկրտչյան Յանա Կարենի-դասախոս
5. Ալեքսանյան Արմինե Ղարիբի-ասիստենտ

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուս.տարում կազմել է **15 744** ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի մեթոդական աշխատանքն ուղղված է ԱրՊՀ բանասիրական և ոչ բանասիրական կրթական ծրագրերում ուսանողների օտար լեզվի կոմպետենցիաների զարգացմանը: Աշխատանքն իրականացվում է տարաբնույթ համալիր դասընթացների միջոցով, որոնց ծրագրերը մշակվել են ամբիոնի դասախոսների կողմից: Ուսուցման ձևերն ընդգրկում են մանկավարժական ստեղծագործական մտքի բազմապիսի տեսակներ՝ հաղորդակցական խմբային, անհատական ստեղծագործական աշխատանք, տեղեկությունների հավաքում, մշակում և քննարկում:

Ամբիոնի գիտական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝

1. Անգլերեն/գերմաներեն/ֆրանսերեն խոսքի մշակույթ և հաղորդակցություն
2. Թարգմանչական արվեստ. խնդիրներ և միտումներ
3. Անգլերենի բառագիտություն. դարձվածաբանություն:

Հրատարակությունների ցանկ

1. Թովմասյան Լ.Ս., *Rhetorical Tropes in Fairy Tale Narrative*, «Դպրատուն» գիտական հոդվածների ժողովածու, «Դիզակ պլյուս» հր., 2022, Ստեփանակերտ, էջ 84-97:
2. Մինասյան Ն.Ս., *Роль метафоры в кризисном политическом дискурсе*. Вестник Российско-Армянского университета (серия: гуманитарные и общественные науки); (40) Издательство РАУ № 1/2022, էջ 154-159/:
3. Դուրասանյան Ն.Վ., *Europaisches Sprachenportfolio als Mittel der Kompetenzbeurteilung und Seldsteinschatzung von Fremdsprachenstudenten*, Beiträge der internationalen konferenz “Profilanalyse für” Deutsch als frendsprache, 14-15, 10.2019, Երևան «Դիջի Պրինտ» 2021, էջ 53-56:
4. Դուրասանյան Ն.Վ., *«Контроль и оценка в системе языкового образования»*, Երևանի պետական համալսարան, Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Երևանի պետական Համալսարանի հրատարակչություն, Երևան, N1(19) 2021, էջ 148-159:
5. Ամիրյան Ն.Ս., *«On Some Micro-and Macrolinguistic Featrures of English Football Commentary»*, Foreign Languages for Special Purposes N 1(19), Yerevan State University Press, 2021, էջ 62-72:
6. Վանյան Լ.Վ., *«On Some Micro-and Macrolinguistic Featrures of English Football Commentary»*, Foreign Languages for Special Purposes N 1(19), Yerevan State University Press, 2021, էջ 62-72:
7. Ամիրյան Ն.Ս., *Strategies of Translating Anthroponyms in J.R. Tolkien’s “The Lord of the Rings” (comparison of English and Armenian Versions of the Epic)* Foreign Languages for Special Purposes N 1(19), Yerevan State University Press, 2021, էջ 72-86:
8. Վանյան Լ.Վ., *Strategies of Translating Anthroponyms in J.R. Tolkien’s “The Lord of the Rings” (comparison of English and Armenian Versions of the Epic)* Foreign Languages for Special Purposes N 1(19), Yerevan State University Press, 2021, էջ 72-86:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Դասախոսների կողմից գիտական սեմինարների անցկացում և քննարկում (2 գիտական սեմինար):
2. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:
3. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
4. Մագիստրանտների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:
5. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
6. Ակնկալվող և ուսանողների ձեռքբերած գիտելիքների ամփոփիչ ստուգում:
7. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

1. Ռումանագերմանական լեզուների ամբիոնի դասախոս Արմինե Ալեքսանյանի անմիջական ղեկավարությամբ և Չիկագոյի հայ համայնքի ներկայացուցիչ Գառնիկ Քերթնեանի նախաձեռնությամբ ստեղծվել էր էլիարթակով առցանց հանդիպումների շարք, որը ֆակուլտետի ուսանողության և Չիկագոյի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ շարունակվել է ուսումնական տարվա ողջ ընթացքում:
2. *Թարգմանչական գործ* կրթական ծրագրի 2-րդ, 3-րդ կուրսերի 4 ուսանողներ Erasmus + ծրագրի շրջանակներում մասնակցել են մասնագիտական դասընթացների: 2 ուսանողներ այդ ծրագրի շրջանակներում ՀՀ-ում՝ ղեկավար Լուսինե Վանյանի նախաձեռնությամբ, մասնակցել են *մշակութային խաչմերուկ* դասընթաց-քննարկմանը, 2 ուսանողներ Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում, Վրաստանում տարբեր ժամանակներում մասնակցել են այդօրինակ նախագծերի:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Մասնակցություն բաց հարթակում կազմակերպված միջազգային գիտաժողովներին ու շնորհանդեսներին:
 2. Վիլֆրիդ Էգերսի <<Հայոց դարպաս>> վեպի՝ Մշակութային վարչության կողմից բաց հարթակում կազմակերպված շնորհանդեսին:
- Переводческие пятницы с Марией Степановой /онлайн/ /Ամիրյան Ն. Ս. / 2022, 5 встреч/.
 - The Online 2nd English language EXPO 2022.
 - English Teachers Bridging Global Education with 21-st Century skills.
 - Nile TESOL 2022 Virtual Conference 26th Annual Conference.
 - Sao Paulo Pontifical Catholic University (Prof. Antonietta Celani Distinguished Lecture Series), (Applied Linguistics, Technology and Advances in Language Pedagogy).
 - Nile TESOL TEYL SIG October Webinar 29.

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասալսումներ են իրականացվել դեկանի և ամբիոնի վարիչի մասնակցությամբ: Դասալսումների արդյունքները քննարկվել և արձանագրվել են:
2. Ամբիոնի դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
3. Մշտապես հետևողական է իրականացվում ստուգումների և քննությունների ընթացակարգը, հսկվում են ինքնուրույն աշխատանքները, անց են կացվում դասախոսների կողմից խորհրդատվություններ՝ դրանք համապատասխանեցնելով նախօրոք սահմանված գրաֆիկին:
4. Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
5. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Ուսուցչի օրվան նվիրված միջոցառում՝ ամբիոնի նախաձեռնությամբ:
2. Եղենի օրվան նվիրված միջոցառում՝ ամբիոնի նախաձեռնությամբ, բակալավրիատի ուսանողների և մագիստրանտների մասնակցությամբ:
3. Միջոցառում՝ թարգմանչական տոնին նվիրված՝ *Անգլերեն լեզու և գրականություն*, *Թարգմանչական գործ* (ըստ լեզուների) կրթական ծրագրերի ուսանողների մասնակցությամբ:
4. Կանանց միջազգային տոնին նվիրված միջոցառում՝ ամբիոնի անդամների և ուսանողների մասնակցությամբ:
5. Միջոցառում «Զատիկի տոն (լեզվամշակութային խաչմերուկ)» անվանումով՝ ամբիոնի նախաձեռնությամբ, ուսանողների մասնակցությամբ:
6. «Պատվիր, պատվիր, կարուսել» տեղանական ոճի գրական-գեղարվեստական միջոցառման կազմակերպում:
7. Թարգմանության թեմայով վիկտորինայի կազմակերպում *Թարգմանչական գործ* (ըստ լեզուների), *Անգլերեն լեզու և գրականություն* կրթական ծրագրերի երրորդ կուրսերի ուսանողների միջև:

8. Միջամբիոնային գիտաճանաչողական սեմինար «Հայոց ցեղասպանությունը արտասահմանյան գրականության մեջ»՝ «Հիշողությունը որպես ինքնության հենասյուն» խորագրով:

9. Մագիստրանտների կողմից կազմակերպված գիտաճանաչողական միջոցառում (փորձուսուցման ամփոփում):

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Միրզոյան Վալոդյա Միմոնի, ք.գ.թ., ԱրՊՀ պրոֆեսորի պաշտոնակատար

Բնագիտական ֆակուլտետում աշխատանքները տարվում են ըստ ֆակուլտետի խորհրդի կողմից ընդունված և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատված ծրագրի և ֆակուլտետի ռազմավարության:

Բնագիտական ֆակուլտետի առաքելությունը մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, ազգայինը կարևորող, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մասնագետների պատրաստումն է:

Բնագիտական ֆակուլտետի տեսլականն է՝ բարձրացնել ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, նպաստել ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը, ապահովել կրթական բարձրորակ մշակույթի ձևավորումը, մատուցվող կրթական ծառայությունների համապատասխանությունը և համադրելիությունը միջազգային չափանիշներին: Բնագիտական ֆակուլտետի շրջանավարտը պետք է լինի համակողմանի զարգացած, պետական մտածելակերպով օժտված քաղաքացի և հարգի պետական խորհրդանիշները:

Ֆակուլտետի կառուցվածքը և կառավարման համակարգը

2021-22 ուս.տարում ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություն տեղի չի ունեցել: Գործում է 4 ամբիոն, 3 լաբորատորիա, 4 համակարգչային կաբինետ. վերջիններս սպասարկում է 8 ուսումնառության աշխատող: Դեկանատում աշխատանքային գործունեություն է վարում 2 տեսուչ, 1 գործակարգավորիչ:

Ֆակուլտետի մեծ խորհրդի կազմում ընգրկված է 61 աշխատող, 11 ուսանող (ընդամենը 72 անդամ): 2021-2022 ուստարում կազմակերպվել է ֆակուլտետի խորհրդի 13 նիստ, որտեղ քննարկվել են ֆակուլտետի վերաբերյալ բազմաթիվ հարցեր և կայացվել որոշումներ:

Դեկանատի նիստերը կայացել են երկու շաբաթը մեկ անգամ, յուրաքանչյուր ռեկտորատի նիստից հետո, որտեղ ամբիոնի վարիչները տեղեկացվել են ռեկտորատի որոշումներին և ստացել համապատասխան հանձնարարականներ:

Ֆակուլտետում կազմակերպվել է ուսանողական խմբերի ավագների խորհրդակցություն՝ ամիսը 2-3 անգամ, որտեղ ուսանողները տեղեկացվել են համալսարանում կատարվող աշխատանքների և միջոցառումների, ինչպես նաև ռեկտորատի որոշ հարցերի մասին: Ավագներից ստացվել են համապատասխան տեղեկություններ:

Հաշվետու տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- կազմակերպվել է հանդիպում ուսանողական խմբերի հետ, կատարվել փոխադարձ լսումներ, առաջարկություններ՝ ուսման որակի բարձրացման, քննությունների կազմակերպման ձևերի վերաբերյալ,
- պարբերաբար իրականացվել են հանդիպումներ աշխատողների, ասպիրանտների, մագիստրատուրայի ավարտական կուրսերի հետ,
- պարբերաբար կատարվել է դասախոսների և ուսանողների հաճախումների ստուգում,- տարվա ընթացքում վերանայվել են ուսումնական պլանները, կատարվել բարելավման առաջարկություններ:

Հաշվետու ժամկետում իրականացվել են որոշակի աշխատանքներ՝ կոլեկտիվում առողջ աշխատանքային մթնոլորտի ձևավորման, ուսանողական խմբերում կարգապահության և պարապմունքների հաճախման բարձրացման ուղղությամբ:

Ուսումնական գործընթացին զուգահեռ իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ ուղղված ուսանողների հայրենասիրական, գիտական, մարզական, դաստիարակչական մակարդակի բարձրացմանը: Ընդհանուր առմամբ, ֆակուլտետում կարգապահությունը գտնվում է բավարար վիճակում:

Կրթական գործունեության կազմակերպում

Հաշվետու տարում ուսումնական գործընթացը կազմակերպվել է բակալավրիատի, մագիստրատուրայի առկա և հեռակա ուսումնական ծրագրերով: 2021-2022 ուստարում բնագիտական ֆակուլտետի ուսանողների քանակը 480 էր (48 խումբ), որից՝ առկա բաժնի բակալավրիատում՝ 245, հեռակա բաժնում՝ 173, մագիստրատուրայի բաժնում՝ 62: Ունեցել ենք 8 մասնագիտություններով 127 շրջանավարտ, որից՝ բակալավրիատի 55 առկա, 34 հեռակա, մագիստրատուրայի՝ 38: Գերազանցիկների քանակը՝ 37. 11՝ բակալավր, 26՝ մագիստրոս: Տարվա կտրվածքով հեռացվել է 40 ուսանող՝ 13՝ առկա, 20՝ հեռակա, 7՝ մագիստրատուրա: 82 ուսանողի տրվել է կրթաթոշակ, այդ թվում՝ 26 գերազանցության:

Ուսումնական գործընթացի համար ամբիոններում ժամանակին բաշխվել և հաստատվել է պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածությունը, կազմվել են օրացուցային թեմատիկ պլանները: Գործող կարգի համաձայն՝ դասախոսների կողմից տրվել են քննական հարցաշարերը, ժամանակին հանձնարարվել են ինքնուրույն աշխատանքների թեմաները: Կիսամյակի կտրվածքով դեկանատում կազմվել, ժամանակին հաստատման են ներկայացվել բոլոր կարգի ժամանակացույցները: Կատարված աշխատանքում, այնուամենայնիվ, կան որոշ բացթողումներ, մասնավորապես, դեռևս բավարար չեն ինքնուրույն աշխատանքի հանձնարարման, վերահսկման աշխատանքները:

Ըստ ընդունված կարգի՝ ԱրՊՀ-ում դասընթացները, ըստ ստուգման ձևի, լինում են՝ եզրափակիչ գնահատումով և առանց եզրափակիչ գնահատման, ստուգումներն իրականացվում են համակարգչով, բանավոր և գրավոր ձևերով: Դեկանատում տարվա ընթացքում կատարվում են մանրամասն քննարկումներ՝ ստացված արդյունքների վերաբերյալ:

Հաշվետու տարում անց է կացվել ամփոփիչ՝ ատեստավորում: Դիտարկված խնդիրներից կարևորել ենք այն, որ հայաստանյան բուհերի մասնագետների մասնակցությունը, այնուամենայնիվ, կարևոր է: Սա նպաստում է նաև համագործակցության աշխատանքների արդյունավետությանը: Ատեստավորման հանձնաժողովի կողմից լուրջ դիտողություններ չեն արձանագրվել, բոլորը տվել են դրական եզրակացություն: Միայն առաջարկություններ են արվել՝ ավելի պարզեցնելու առաջադրված հարցերը: Այս հարցը քննարկվել է ֆակուլտետի խորհրդում, որտեղ հնչեցվել են տարբեր կարծիքներ՝ հարցաշարերի և հարցատոմսերի վերաբերյալ:

Ուսումնառության կարևոր մասն են կազմում ուսումնական և արտադրական փորձուսուցումները: Նշվածների կազմակերպման գործում ունենք դեռևս շատ անելիքներ, որոնցից կարևորվում է այն, որ պետք է ճիշտ ընտրել փորձուսուցման ղեկավարին և փորձուսուցման վայրը, որտեղ կլինեն համապատասխան պայմաններ:

Խնդիրների դիտարկում

Բնագիտական ֆակուլտետի զարգացման և մրցակցության բարձրացման համար առաջարկում են՝

-համալրել և կատարելագործել պրոֆեսորադասախոսական կազմը՝ մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան:

-ձևավորել գիտական հանձնախմբեր՝ արցախյան իրականությանը վերաբերող մասնագիտական խնդիրների ուսումնասիրման համար:

-տանել համապատասխան աշխատանքներ կողմնորոշված դիմորդների և ուսումնառողների շրջանում:

-ապահովել սովորողներին (հատկապես հեռակայի) հիմնարար գիտելիքներն ամբողջացնող մասնագիտական ուղեցույցներով:

-ֆակուլտետի հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:

-ուսանողներին մասնակից դարձնել գիտական հետազոտություններին:

-խրախուսել ՈԻԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքները:

-նպաստել հրավիրյալ դասախոսների ինստիտուտի կայացմանը:

-հատուկ ուշադրություն դարձնել մագիստրատուրայի դասընթացների կազմակերպմանը:

Մեր կողմից դիտարկված խնդիրներն են՝

- բարձր որակի դասախոսությունների կազմակերպում,

- որակյալ թեստերի կազմում,

- նյութատեխնիկական բազայի համալրում,
- լաբորատորիաների հզորացում,
- հեռակա բաժնի հետ տարվող աշխատանքների ուժեղացում,
- ուսանողների շրջանում գիտական աշխատանքների կատարում:

Հաշվետու տարում ֆակուլտետը համագործակցել է բոլոր ստորաբաժանումների հետ և այսուհետև ևս պարտավորվում է այն շարունակելու: Բնագիտական ֆակուլտետը պատրաստ է կատարելու իր պարտականությունները, ապահովելու ուսման ավելի բարձր որակ և ակտիվորեն մասնակցելու բոլոր միջոցառումներին:

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը` 4:

Կենսաբանության և քիմիայի ամբիոն

Ամբիոնի վարիչ` Թորոսյան Սիդա Հայրապետի, կ.գ.թ., դոցենտ

Կենսաբանության և քիմիայի ամբիոնում ուսումնամանկավարժական ու գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 1 պրոֆեսոր` համատեղությամբ աշխատող, 1 պրոֆեսոր ժամավճարային աշխատող, 15 դոցենտ, որից 2-ը` ժամավճարային, 1-ը` համատեղությամբ աշխատող, 3 ավագ դասախոս, 2 դասախոսի պաշտոնակատար և 1 ասիստենտ:

Հիմնական աշխատողներ`

- 1.Թորոսյան Սիդա Հայրապետի - կ.գ.թ., դոցենտ
- 2.Աղասյան Սուսաննա Արամայիսի - կ.գ.թ., դոցենտ
- 3.Գրիգորյան Ասնելդա Լևոնի - կ.գ.թ., դոցենտ
- 4.Պետրոսյան Ջոյա Վազգենի - դոցենտի պաշտոնակատար
- 5.Հակոբյան Արմիդա Նիկոլայի - կ.գ.թ., դոցենտ
- 6.Գալստյան Հասմիկ Գրիգորիի - կ.գ.թ., դոցենտ
- 7.Բաբայան Գեղեցիկ Սերգեյի - դասախոս
- 8.Բաղդյան Քրիստինե Բորիսի - ավագ դասախոս
- 9.Դավթյան Նելլի Նորիկի - մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
- 10.Ծատրյան Մայա Մամվելի -գ.գ.թ., դոցենտ
- 11.Մաղաբեկյան Ջոյա Յակովի - բժ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
- 12.Բալայան Կարինե Վալերիի - կ.գ.թ., դոցենտ
- 13.Զհանգիրյան Մարատ Լյովայի - կ.գ.թ., ավագ դասախոս
- 14.Ավետիսյան Արթուր Էդուարդի - ք.գ.թ., դոցենտ
- 15.Ղուկասյան Տաթևիկ Վալերիկի - ք.գ.թ., դոցենտ
- 16.Ստեփանյան Աննա Վոլոդյայի - ք.գ.թ., ավագ դասախոս
- 17.Մանգասարյան Կարինե Համլետի - դասախոս

Համատեղությամբ աշխատողներ`

- 1.Միրզոյան Վալոդյա Սիմոնի - ք.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
- 2.Մարգարյան Գայանե Գեորգիի - կ.գ.թ., դոցենտ

Ժամավճարային հիմունքով աշխատողներ`

- 1.Մաղաբեկյան Ալյոշա Միքայելի - բժ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
- 2.Հայրապետյան Վահրամ Տորիկի - կ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
3. Գրիգորյան Սոնա Յուրիի - ասիստենտ
4. Մինասյան Հասմիկ Զուլդուդի - կ.գ.թ., դոցենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 10586 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնի ուսումնագիտական աշխատանքի հիմնական ուղղություններն են՝ Արցախի տարածաշրջանի ֆլորայի, ֆաունայի, հողի, խմելու և ոռոգման ջրի վրա էկոլոգիական գործոնների համակցված ազդեցության ուսումնասիրություն, ակտիվ կարգավորման չափանիշների մշակում, ինչպես բնական համակարգերում բնական ընթացքի, այնպես էլ մարդու գործունեության տարբեր ձևերի համար, գենոֆոնդի հարստացման, տեսակների և առանձին էկոհամակարգերի վերականգնման, պահպանման մեթոդների մշակում, որոնք գտնվում են վերացման վտանգի տակ, կոմպլեքսագոյացման ուսումնասիրություն, տարբեր սորբենտների մակերևույթի մոդիֆիկացում և ստացված կառուցվածքների հետազոտում, կենսաբանական ակտիվ հետերոցիկլիկ միացությունների մասս-սպեկտրների հետազոտություն:

Հրատարակությունների ցանկ

1. Աղապյան Ս.Ա., Ջհանգիրյան Մ.Լ., Գասպարյան Ա.Հ., *Մեղրատու մեղուն Արցախում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 233:
2. Հակոբյան Ա.Ն., *Արցախում տարածված մեղրատու բույսեր*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 211:
3. Բալայան Կ.Վ., Թորոսյան Ա.Հ., Առուշանյան Մ.Մ., Բեգլարյան Լ.Յու., *Արցախի ֆլորայի աստղաձաղկազգիները, նրանց կառուցվածքային առանձնահատկությունները*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 224:
4. Դավթյան Ն.Ն., Գրիգորյան Ս.Յու., *Բնոտեղծ ուսուցման կազմակերպումը կենսաբանության դասավանդման գործընթացում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022 Ստեփանակերտ, էջ 242:
5. Միրզոյան Վ.Ս., Այդինյան Լ.Գ., *Օրգանական նյութերի հետ կապված որոշ խնդիրներ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, էջ 254:
6. Միրզոյան Վ.Ս., Արզումանյան Ս.Յա., Պետրոսյան Մ.Գ., *Օքսիդավերականգնման պրոցեսների տեսական գիտելիքների կիրառումը գործնական աշխատանքների ժամանակ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, էջ 264:
7. Ստեփանյան Ա.Վ., Ավետիսյան Ա.Է., Մանգասարյան Կ.Հ., *Գծապատկերներ պահանջող մեթոդական վարժությունները որպես քիմիայի դասի արդյունավետության բարձրացման միջոց*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, էջ 271:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Դասախոսների կողմից գիտական սեմինարների անցկացում և քննարկում:
2. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:
3. Գիտական սեմինարների կազմակերպում բարձր կուրսի ուսանողների հետ:
4. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
5. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
6. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:
7. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Համագործակցություն՝ ՀՀ Երևանի պետական, Հայաստանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանների, ԱՀ գյուղատնտեսության և բնապահպանության նախարարությունների, Հայաստանի ազգային ագրարային և Շուշիի տեխնոլոգիական համալսարանների հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Մասնակցություն Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի գիտաժողովներին:
2. ԱրՊՀ գիտական տեղեկագրում հոդվածների տպագրում:

3. Դրամաշնորհային ծրագրով գիտական աշխատանքների իրականացում:

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
3. Ներամբիոնային դասալսումների անցկացում և քննարկում:
4. Թեստերի, հարցաշարերի, տոմսերի վերահսկում:
5. Ավանդական ստուգաթղթերի վերահսկում՝ ըստ դրանց անցկացման և գնահատման մեթոդաբանության:
6. Ինքնուրույն աշխատանքների վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
7. Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Բնագիտական ֆակուլտետի ուսանողների հետ ինտելեկտուալ խաղի կազմակերպում:
1. Միջոցառում «Կենսաբանության արդիականացումն Արցախում» ծրագրի շրջանակներում:
2. Առարկայական օլիմպիադաներ կենսաբանությունից :

Աշխարհագրության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի, ա.գ.թ., դոցենտ

Աշխարհագրության ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 2 դոցենտ, 5 դասախոս, 1 ասիստենտ՝ ժամավճարային աշխատող:

Հիմնական աշխատողներ՝

1. Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի-ա.գ.թ., դոցենտ, ամբիոնի վարիչ
2. Առաքելյան Յուրի Ալեքսանդրի-ա.գ.թ., դոցենտ
3. Մարգարյան Ռաֆիկ Յուրիկի-դասախոս
4. Թովմայան Ռուբինա Ստեփանի-դասախոս
5. Կարապետյան Հելեն Ռոմիկի-դասախոս
6. Գրիգորյան Հենրիկ Նիկոլայի-դասախոս
7. Բալայան Քրիստինե Բաբկենի-դասախոս

Ժամավճարային հիմունքով աշխատող՝

Միրզոյան Դիանա Վալերիի-ասիստենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 3931 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալել է ֆիզիկական աշխարհագրության, տնտեսական աշխարհագրության, հասարակական աշխարհագրության, քաղաքական աշխարհագրության, գեոէկոլոգիայի ուղղություններով:

Հրատարակությունների ցանկ

I. Մենագրություն

1. Գրիգորյան Ա.Վ., **ԱՀ գյուղական բնակավայրերի սոցիալ-ժաղովրդագրական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները**, Ստեփանակերտ, ԱՀ գիտական կենտրոն, 2021, 111 էջ:

II. Հոդվածներ

1. Առաքելյան Յու.Ա., **Խրամորթի քարանձավների ուսումնասիրման արդյունքները**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 77-85:

2. Առաքելյան Յու.Ա., Բաբայան Ա.Ա., **Արցախի տարածքի ռելիեֆը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» 2/2021, Ստեփանակերտ, էջ 94-108:

3. Առաքելյան Յու.Ա., Բալայան Ք.Բ., **Հետիոտն զբոսաշրջության նոր երթուղիների մշակումը Արցախի Հանրապետությունում** «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 115-125:

4. Գրիգորյան Ա.Վ., **ԱՀ տարաբնակեցման համակարգը և գյուղական բնակավայրերի տեղաբաշխումը**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 152-165:

5. Գրիգորյան Ա.Վ., **ԱՀ սոցիալ-տնտեսական բնագավառի բարեփոխումները՝ որպես ժողովրդագրական իրավիճակի բարելավման նախապայման**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, էջ 165-173:

6. Գրիգորյան Ա.Վ. **ԱՀ տարաբնակեցման նախադրյալները, բնակավայրերի ձևավորման և բնակչության տեղաբաշխման կարգավորումները**, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» 1/2022, Ստեփանակերտ, էջ 177-188:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Զրույցներ աշխարհագրության արդիական խնդիրների շուրջ:

2. Դասախոսների կողմից գիտական սեմինարների անցկացում և քննարկում (3 գիտական սեմինար, 1 գիտական ընթերցում):

3. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:

4. Մասնագիտական հետաքրքիր դասընթացների կազմակերպում հանրակրթական դպրոցներում:

5. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:

6. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:

7. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:

8. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Համագործակցություն է իրականացվում՝ ԵՊՀ-ի և Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, ՀՀ սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայության, ԱՀ բնապահպանության կոմիտեի, ԱՀ զբոսաշրջության վարչության, օդերևութաբանական կայանի հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Գրիգորյան Ա.Վ.- Արցախի գիտական կենտրոն-ի գիտական գործունեության մասնակից՝ «ԱՀ տարածքի բնակեցման, նոր բնակավայրերի ձևավորման և տեղաբաշխման նախադրյալները ու հեռանկարային կարգավորումները կայուն զարգացման համատեքստում» թեմայով:

2. ուսանողուհի Մայիլյան Մարիամ (4-րդ կուրս) – Գորիսի պետական համալսարանում Լեոնահայաստանի հռչակման 100-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակից՝ «Մարտակերտի

շրջանի բնառեսուրսային պոտենցիալը և արտադրողական ուժերի տեղաբաշխումը» թեմայով, մայիսի 11-12:

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
3. Ներամբիոնային դասալսումների անցկացում և քննարկում (7 դասալսում):
4. Թեստերի, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն և դրանց համապատասխանելիության վերահսկում ստուգումների և քննությունների համար սահմանված ընթացակարգին:
5. Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
6. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
7. Դասընթացային ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Շրջակա միջավայրի պաշտպանության օրվա առթիվ ինտելեկտուալ խաղ (Ռ. Թովմասյան)
2. Օդերևութաբանների օրվա առթիվ ինտելեկտուալ խաղ (Ռ. Թովմասյան)
3. Չորս մասնագիտական արշավներ՝ Ուլուքաբ, Երից Մանկան, Կոշիկ անապատ, Մեյդան ուղղություններով (Հ. Գրիգորյան), (Յու. Առաքելյան):
4. Արտալսարանային երկու դասընթաց
5. Այցելություն Ստեփանակերտի երկրագիտական թանգարան (Յու. Առաքելյան)
6. Այցելություն Պատարա գետի հովտի բնական հուշարձաններ (Հ. Գրիգորյան):
7. Դիմորդների համար մասնագիտական պարապմունքների անցկացում

Մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Պետրոսյան Գայանե Ալբերտի, ֆիզմաթ. գ.թ., դոցենտ

Մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 3 պրոֆեսոր, որից 1-ը ժամավճարային աշխատող, 6 դոցենտ, որից մեկը ժամավճարային աշխատող, 4 ավագ դասախոս, 1 դասախոս, 4 ասիստենտ, որից 1-ը ժամավճարային աշխատող:

Հիմնական աշխատողներ՝

1. Պետրոսյան Գայանե Ալբերտի-ֆիզմաթ. գ.թ., դոցենտ
2. Աբրահամյան Լիանա Ռուդիկի-ֆիզմաթ գ.թ., դոցենտ
3. Առաքելյան Ռուդիկ Լևոնի- մ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
4. Արամյան Կարեն Սարգսի-ֆիզմաթ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
5. Մինասյան Մելս Վաչագանի-ֆիզմաթ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
6. Նալբանդյան Գուրգեն Ասծատուրի-ֆիզմաթ.գ.թ., դոցենտ
7. Մարության Կարինե Լորիկի-դոցենտի պաշտոնակատար
8. Ապրեսյան Միքայել Եղիշեի-ավագ դասախոսի պաշտոնակատար
9. Բալասանյան Եվգենյա Մամվելի-ավագ դասախոս
10. Ավետիսյան Լաուրա Վեկսիկի-ավագ դասախոսի պաշտոնակատար
11. Օհանյան Արտավազ Դավիթի-ավագ դասախոս
12. Սարգսյան Նարինե Սուրենի-ֆիզմաթ.գ.թ., դասախոս
13. Գասպարյան Աննա Արթուրի-ասիստենտ
14. Գևորգյան Ռուզաննա Լավրենտի-ասիստենտ
15. Մանուկյան Անուշ Ռինկի-ասիստենտ

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Ռաֆայելյան Սպարտակ Գևորգի-ֆիզմաթ.գ.թ., դոցենտ
2. Առաքելյան Գայանե Գուրգենի-ասիստենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 10986 ժամ:

**Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների
ընդհանուր ուղղությունների**

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալում է սովորական գծային դիֆերենցիալ համակարգերի օսցիլացվող հատկությունների հետազոտման, կոմպլեքս անալիզի և դրա կիրառությունների, դիֆերենցիալ երկրաչափության, բարձրագույն հանրահաշվի և թվերի տեսության, մաթեմատիկայի տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումների, մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի, կոնդենսացված վիճակի ֆիզիկայի, ինֆորմացիոն համակարգերի, միկրո- և նանոէլեկտրոնիկայի, ֆիզիկայի դասավանդման մեթոդների ուղղություններով:

Ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակահատվածում մասնակցել են ԱՀ-ում և ՀՀ-ում կազմակերպված մի շարք գիտաժողովների, տպագրել են հոդվածներ, կազմել են մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թեստեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ:

Հրատարակությունների ցանկ

I. Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Պետրոսյան Գ.Ա., *Ֆունկցիաների գրաֆիկների կառուցումը, ուսումնական ձեռնարկ*, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2022, 48 էջ:
2. Աբրահամյան Լ.Ռ., *Դասախոսություններ թվերի տեսությունից*, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 2021, 80 էջ

II. Հոդվածներ

1. Պետրոսյան Գ.Ա., Ավանեսյան Դ.Ն., *Առաջին սեռի անհսկական ինտեգրալների հաշվումը Լապլասի ձևափոխության միջոցով*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», բնական գիտություններ, 2/2021, Ստեփանակերտ, էջ 35-41:
2. Աբրահամյան Լ.Ռ., Գրիգորյան Մ.Ա., *Քվադրիսիների տարրերի ներառման խնդիրը մանկավարժական բուհերի բարձրագույն հանրահաշվի դասընթացում*, Միջազգային գիտաժողովի նյութեր, Mathematical education 9, Erevan, 2021, էջ 6-9:
3. Աբրահամյան Լ.Ռ., Գաբրիելյան Ք.Ս., Բաբայան Ա.Վ., *Որոշ նկատառումներ ոչ ստանդարտ հավասարումների լուծման մասին*, Միջազգային գիտաժողովի նյութեր, Mathematical education 9, Erevan, 2021, էջ 3-6:
4. Աբրահամյան Լ.Ռ., Հարությունյան Ռ.Մ., Վարդանյան Վ.Զ., *Կառուցման խնդիրները մաթեմատիկայում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 14-20:
5. Սարգսյան Ն.Ս., *Դիֆերենցիալ հավասարումների կիրառումը մանրէաբանությունում և բուսաբանությունում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2/2021, էջ 72-81:
6. Արամյան Կ.Ս., Մանուկյան Ա.Ռ., *Պատահական օրենքների կապը տարածության-ժամանակի համաչափության հետ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 82-93:
7. Արամյան Կ.Ս., Գասպարյան Ա.Ա., *Հարաբերականության տեսության պարադոքսների մասին: Երկվորյակների պարադոքսը*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 94-104:
8. Արամյան Կ.Ս., Սողոմոնյան Ա.Ի., *О разном параметре*. «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 80-83:
9. Նալբանդյան Գ.Ա., Մարության Կ.Լ., *Չորրորդ աստիճանի որոշ նշանավոր գծեր*: «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 61-71:

10. Գևորգյան Ռ.Լ., *Ֆիզիկայից օլիմպիադան՝ որպես աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացումը խթանող ծանրակշիռ մեթոդ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 92-97:
11. Առաքելյան Ռ.Լ., *Բազմանիստի հարթ հատույթի կառուցման խնդիրներ*, Միջազգային գիտաժողովի նյութեր, Mathematical education 9, Erevan, 2021, էջ 22-26:
12. Առաքելյան Ռ.Լ., Աբրահամյան Լ.Ռ., Հարությունյան Ռ.Մ., *Կառուցման խնդիրները անմատչելի տարրերով*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 48-55:
13. Առաքելյան Ռ.Լ., *Պատմության խելացի մարդիկ*, Լուսարար, 2022, թիվ 26:
14. Առաքելյան Ռ.Լ., Հակոբյան Լ.Վ., *Պատմության ամենախելացի մարդիկ*, Լուսարար, 2022, թիվ 27:
15. Առաքելյան Ռ.Լ., *Իմաստուն մարդիկ*, Լուսարար, 2022, թիվ 28:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Ամբիոնի դասախոսների մասնակցությամբ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների արդիականացում:
2. Դասախոսների կողմից գիտական սեմինարների անցկացում և քննարկում (8 գիտական սեմինար, 14 աշխատանք):
3. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում (7 աշխատանք):
4. Մագիստրանտների հետ գիտական սեմինարների անցկացում:
5. Ուսանողների հետ անհատական խորհրդատվությունների կազմակերպում:
6. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Առկա է համագործակցություն ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Երևանի ճարտարագիտական համալսարանի, Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Գյումրիի ՀԱՊՀ-ի մասնաճյուղի, ՇՏՀ, Գյումրիի մանկավարժական համալսարանի հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի կազմակերպած *«Մաթեմատիկական կրթություն 9»* խորագրով միջազգային գիտաժողով (1 զեկուցում՝ Լ.Ռ.Աբրահամյան):
2. Գավառի պետական համալսարանի առցանց ձևաչափով կազմակերպած *ԳՊՀ հորեյանական՝ 25-րդ գիտաժողով* (1 զեկուցում՝ Լ.Ռ.Աբրահամյան):

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
3. Ներամբիոնային դասալսումների անցկացում և քննարկում (7 դասալսում):
4. Թեստերի, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն և դրանց ստուգումների և քննությունների համար սահմանված ընթացակարգին համապատասխանելիության վերահսկում:
5. Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
6. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:

7. Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

Ուսուցչի օրվան նվիրված միջոցառում:

1. ԱՀ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի անցկացում մաթեմատիկայից:
2. ԱՀ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի անցկացում ֆիզիկայից:
3. Ֆիզիկայի օլիմպիադայի խնդիրների քննարկման կազմակերպում դպրոցականների ներգրավմամբ:
4. Ուսումնամեթոդական սեմինար՝ «Վիճակագրական օրինաչափությունները ֆիզիկայում» թեմայով:

Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն **Ամբիոնի վարիչ՝ Առստամյան Վազգեն Վահանի, մ.գ.թ., դոցենտ**

Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 7 դոցենտ, 3 ավագ դասախոս, 4 դասախոս, 8 ասիստենտ:

Հիմնական աշխատողներ՝

1. Առստամյան Վազգեն Վահանի-մ.գ.թ., դոցենտ
2. Մանասյան Վոլոդյա Շմավոնի-դոցենտի պաշտոնակատար
3. Երիցյան Սվետլանա Լազարի-դոցենտի պաշտոնակատար
4. Մանդրյան Սերյոժա Նիկոլայի-ֆիզմաթ.գ.թ., դոցենտ
5. Ավետիսյան Ռազմելա Վազգենի-ավագ դասախոսի պաշտոնակատար
6. Զաքարյան Ժասմեն Զավենի-ավագ դասախոսի պաշտոնակատար
7. Հարությունյան Անուշ Խաչատուրի-դասախոս
8. Մնացականյան Արթուր Սերոբի-դասախոս
9. Հարությունյան Կարինե Համլետի-դասախոս
10. Հայրապետյան Օֆելյա Պավելի-դասախոս
11. Գալստյան Աննա Վիլենի-ասիստենտ
12. Մելքունյան Գոհար Էդվարդի-ասիստենտ
13. Գրիգորյան Շողիկ Արտակի- ասիստենտ

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Դավաթյան Գուրգեն Վանիկի-ֆիզմաթ. գ.թ., դոցենտ
2. Բալյան Արշակ Վրույրի-ասիստենտ
3. Պողոսյան Անահիդա Արտաշի-դոցենտ
4. Գրիգորյան Սուսաննա Արելի-ավագ դասախոս
5. Իսրայելյան Դիանա Էդուարդի-ասիստենտ
6. Սողոմոնյան Լիլիթ Կառլենի-ասիստենտ
7. Վարդանյան Վլադիմիր Սամվելի-ասիստենտ

Համատեղությամբ աշխատողներ՝

1. Սահակյան Գեորգի Հրանտի-ֆիզմաթ. գ.թ., դոցենտ
2. Աղայան Անահիտ Արամայիսի-ասիստենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 9620 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնը 2021-2022 ուս. տարվա առաջին երկրորդ կիսամյակներում կատարել է իր պարտականությունները և ուսումնական և գիտական աշխատանքների գծով՝ ցուցաբերելով անհրաժեշտ աշխատանքային և կատարողական կարգապահություն, լրիվությամբ իրականացրել է համապատասխան ուսումնական պլաններից և առարկայական ծրագրերից բխող բոլոր աշխատանքները:

Հրատարակությունների ցանկ

1. Առստամյան Վ.Վ., *Կրթության թվայնացումը հասարակության թվային վերափոխման գործընթացում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2022, Ստեփանակերտ, էջ 42-48:
2. Սահակյան Գ.Հ., *Միմետրիկ մատրիցով դիֆերենցիալ հավասարումների եռաչափ գծային համասեռ համակարգի լուծումների որոշ հատկությունների մասին*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 7-13:
3. Սահակյան Գ.Հ., *MATCAD ծրագրի օգտագործումը պատկերների մակերեսների որոշման համար*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2022, Ստեփանակերտ, էջ 13-20:
4. Ավետիսյան Ռ.Վ., Առստամյան Վ.Վ., *Նորարարական տեխնոլոգիաների օգտագործմամբ սովորողների ուսման որակի ապահովում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 25-30:
5. Առստամյան Վ.Վ., Երիցյան Ս.Լ., Հարությունյան Ա.Խ., *Ֆայլերի միաձուլման խնդրի իրականացման բազմահոսքային ծրագրի ստեղծումը ներածման /արտածման գործողությունների ասինխրոն եղանակի հիման վրա*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 55-65:
6. Սանթրյան Ս.Ն., Գալստյան Ա.Վ., *Բինար հարաբերության տրանզիտիվ փակման մասին հիմնական թեորեմի մեկ ապացույց և նրա կառուցման ալգորիթներ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 30-36:
7. Գրիգորյան Շ.Ա., *Նորարարական տեխնոլոգիաների կիրառությունը ԲՈՒՀ-ում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 37-41:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

2021-2022 ուս.տարում ամբիոնում սիստեմատիկորեն կազմակերպվել են դասալսումներ ամբիոնի վարիչի և ամբիոնի դասախոսների մասնակցությամբ և դրանց արդյունքների քննարկումներ:

Ամբիոնում հրավիրված դասախոսների, ինչպես նաև ամբիոնի դասախոսների կողմից անց են կացվել գիտական սեմինար պարապմունքներ և հրատարակվող հոդվածների քննարկումներ:

Ամբիոնի ոչ լսարանային հիմնական աշխատանքներն են՝ կուրսային և ավարտական աշխատանքները բակալավրիատում, մագիստրոսական թեզերի ղեկավարման աշխատանքները մագիստրատուրայում, պրակտիկաները և բակալավրիատում և մագիստրատուրայում:

Մեծ ուշադրություն է դարձվել նոր առարկաների դասախոսությունների անցկացմանը: Ժամանակին վերանայվել և կազմվել են ընթացիկ քննությունների հարցաշարերը ու դրանց տրամադրումը ուսանողներին:

Պետական քննության նորացված հարցաշարերը տրամադրվել են առկա բաժնի ուսանողներին: Անընդհատ վերահսկվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը և ժամանակին կազմակերպվել նախապաշտպանությունը (19.04.2022թ-20.04.2022թ):

Ամբիոնը ունեցել է բակալավրի 27 շրջանավարտ (5-ը ստացել են գերազանցության դիպլոմ) և 4 մագիստրանտ (3-ը ստացել են գերազանցության դիպլոմ):

Համագործակցություն

Համագործակցություն է իրականացվում Երևանի պետական համալսարանի (հրավիրվում են դասախոսներ), Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական

համալսարանի (հրավիրվում են դասախոսներ) և Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտի (հրավիրվում են դասախոսներ) հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Կառավարման ավտոմատացված համակարգերի նախագծում և ծրագրային ապահովում
2. Սովորական դիֆերենցիալ համակարգերի օսցիլացիոն հատկությունների ուսումնասիրություն
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում
4. Հեռավար ուսուցման կազմակերպումը ուսումնական գործընթացում

Ամբիոնից 3 թիմ մասնակցել է (13.12.2021) Եվրասիական տարածաշրջանային միջազգային (կիսաեզրափակիչ) ուսանողական ծրագրավորման օլիմպիադային և ցույց են տվել գերազանց արդյունք:

- Թիմ 1- Հենրիխ Հարությունյան-SS-4, Լևոն Առաքելյան- SS-2, Շահինե Մարտիրոսյան-ԻԿՄ-3,
- Թիմ 2- Մարատ Մարտիրոսյան -SS-4, Մարատ Փաշայան -SS-4, Վարդուհի Բեգլարյան-SS-3:
- Թիմ 3- Լիլիթ Աղաբեկյան -SS-2, Արարատ Բաբայան -SS-, Մարտիկ Ավագյան SS-2:

Ամբիոնից 9 ուսանող մասնակցել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում կազմակերպված «Անկախության գավաթ-30» ծրագրավորման մրցույթին (28.11.2021թ. առցանց, ժամը 11:00-14:00, թիմային ձևով) և ցուցաբերել գոհացուցիչ արդյունքներ, լուծելով 3-ական խնդիր:

Կազմակերպվել է դպրոցականների մասնակցությամբ «Ծրագրավորում»-ից օլիմպիադա: Մասնակցել է 15 աշակերտ (ֆիզմաթ դպրոցից, ՇՏՀ-ի քոլեջից և ՀՀ Աբովյան քաղաքից 1 աշակերտ):

Ամբիոնից 1 թիմ մասնակցել է Եվրասիական տարածաշրջանային միջազգային (եզրափակիչ) ուսանողական ծրագրավորման օլիմպիադային (մարզիչ Արթուր Մնացականյան, Հենրիխ Հարությունյան-SS-4, Լևոն Առաքելյան- SS-2 և Շահինե Մարտիրոսյան-ԻԿՄ-3) և ցույց են տվել գերազանց արդյունք (12-13.03.2022):

Ամբիոնը մարտի 22-ին կազմակերպել է ուսումնամեթոդական-գիտական սեմինար՝ «Ներդրումային ցանցերի մոդելավորման հիմունքները» թեմայով: Սեմինարը վարել է կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոս, ֆիզմաթ.գ.թ., դոցենտ Սերյոժա Սանդրյանը: Սեմինարին մասնակցել են դասախոսներ և ուսանողներ:

08.05.2022թ. Մարտակերտ քաղաքում կազմակերպվել է «Artsakh STEM Expo»-ի «գաղափարների մրցույթ», որի ընթացքում ընտրված երեք հաղթող գաղափարների թիմերն ունենալու են համապատասխան մենթորներ, ովքեր օգնելու են թիմերին զարգացնելու իրենց գաղափարները: Ակտիվ մասնակցություն է ունեցել SS մասնագիտության 3-րդ կուրսի 4 ուսանող և գրավել մրցանակային 2-րդ տեղը (Աննա Հարությունյան, Աննա Ներսիսյան, Անի Ավանեսյան և Ալյոնա Հայրապետյան):

Ամբիոնից 4 ուսանող մասնակցել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում կազմակերպված Վլադիմիր Եղիազարյանի անվան համահայկական բաց ծրագրավորման մրցույթին (22.05.2022թ., ժամը 12:00-17:00, թիմային ձևով) և ցուցաբերել է գոհացուցիչ արդյունքներ:

- Թիմ 1- Միլենա Առաքելյան -SS-1, Շահինե Մարտիրոսյան-ԻԿՄ-3,
- Թիմ 2- Ջուլիետա Քոչարյան - SS-1, Անատոլի Ալեքսանյան -SS-1:

Մարզիչ՝ Արթուր Մնացականյան

12-13--05.2022՝ առկա բաժնի ուսանողները մասնակցել են ուսանողական գիտաժողովին՝ ներկայացնելով 14 աշխատանք (մասնակցել է 16 ուսանող):

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության վերահսկում
2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման վերահսկում
3. Ներամբիոնային դասալսումների անցկացում և քննարկում (8 դասալսում)
4. Թեստերի և տոմսերի փորձաքննություն
5. Առանց եզրափակիչ գնահատումների անցկացման վերահսկում
6. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում
7. Կուրսային, ավարտական աշխատանքների և թեզերի կատարման վերահսկում

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Ծրագրավորողի միջազգային օրվա կապակցությամբ բրեյն-ոինգի կազմակերպում (15.09.2021թ.):
2. Ֆակուլտատիվ պարապմունքներ ծրագրավորումից (Մնացականյան Ա.Ս., Գրիգորյան Շ.Ա., I, II, III. IV օրերը – համակարգչային լսարաններ-4,23, 29*):
3. Կազմակերպվել է դպրոցական օլիմպիադա ծրագրավորումից (կազմակերպիչներ՝ Առստամյան Վ.Վ., Մնացականյան Ա.Ս., Հարությունյան Ա.Խ., Գրիգորյան Շ.Ա., Սարգսյան Ա. - SS4) հոկտեմբերի 28-ին:
4. Կազմակերպվել է ուսանողական օլիմպիադա <<Ծրագրավորում>>-ից (կազմակերպիչներ՝ Առստամյան Վ.Վ., Մնացականյան Ա.Ս., Երիցյան Ս.Լ., Հարությունյան Ա.Խ., Գրիգորյան Շ.Ա.):
5. Գիտական սեմինար մազիստրատորայի-1-ին, 2-րդ կուրսերի համար (նոյեմբեր-դեկտեմբեր):

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ Դեկանի պաշտոնակատար՝ Ալլինյան Շահեն Վարդանի, ավագ դասախոս

2021-22 ուսումնական տարում մանկավարժության և սպորտի ֆակուլտետում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել ու իրականացվել են անվտանգային համեմատաբար կայուն պայմաններում, չնայած տարվա ընթացքում Արցախի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության տարբեր բնակավայրերի ուղղությամբ տեղի են ունեցել ռազմական բնույթի միջադեպեր ու ընդհարումներ: Ուսումնական տարին ամբողջությամբ բարվոք չէր նաև համաճարակային հիվանդությունների պարբերաբար սրացումների առումով: Չնայած այս ամենին՝ ֆակուլտետում տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքները իրականացվել են կրթական ծրագրերի պահանջների և ստորաբաժանումների պլանների համապատասխան:

Ֆակուլտետի կառուցվածքը և կառավարման համակարգը

2021-22 ուստարում ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություն տեղի չի ունեցել: Ֆակուլտետում գործում է 2 ամբիոն: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ուս. տարում, ֆակուլտետի կառավարումը իրականացվել է Արցախի Հանրապետության օրենսդրության, ԱրՊՀ գիտխորհրդի որոշումների, ԱրՊՀ գործունեությունը կարգավորող իրավական ակտերի, ֆակուլտետի օրինակելի կանոնադրության ու խորհրդի որոշումների համապատասխան՝ կառավարման միանձնյա և կոլեգիալ սկզբունքների զուգակցմամբ:

Ուսումնական տարվա սկզբին, ելնելով ընտրությունների, շրջավարտների թողարկման արդյունքներից, ֆակուլտետի կառավարման մարմինները՝ ֆակուլտետի մեծ խորհրդի, խորհրդի ու դեկանատի կազմերը, ինչպես նաև ուսանողական ինքնավար կառույցների ղեկավար մարմինները ենթարկվել են համապատասխան փոփոխությունների, համալրվել ու հաստատվել: Ֆակուլտետը ներկայացված է ԱրՊՀ ղեկավարման օրգաններում ԱրՊՀ մեծ խորհրդում՝ 1, ԱրՊՀ խորհրդի կազմում՝ 3 ներկայացուցիչով:

Հաշվետու տարում հրավիրվել է ֆակուլտետի խորհրդի 7 և մեծ խորհրդի 1 նիստ: Անցկացված նիստերին քննարկվել ու որոշումներ են ընդունվել ֆակուլտետի կրթական, գիտական, ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքների, ընտրությունների կազմակերպման ու դրանց արդյունքների, ինչպես նաև ընթացիկ հարցերի վերաբերյալ:

Կրթական գործունեության կազմակերպում

2021-22 ուստարում ֆակուլտետի առկա համակարգի բակալավրիական 4 կրթական ծրագրերի իրականացման ուղղությամբ ձևավորվել էր 14 խումբ՝ 171 ուսանող թվակազմով, և մագիստրոսական 2 կրթական ծրագրերի ուղղությամբ 3 խումբ՝ 25 ուսանող թվաքանակով: Հեռակա համակարգում բակալավրիատում ուսուցումը իրականացվել է 3 կրթական ծրագրերի 10 խմբերում, ուսանողների թիվը՝ 145: Հեռակա ուսուցման մագիստրատուրայի համակարգում ունեցել ենք 1 խումբ՝ 13 ուսանող թվաքանակով: Հաշվետու ուստարում ֆակուլտետի ուսանողների ընդհանուր թիվը 354 էր:

Ուսումնական տարվա սկզբին ամբիոններում հստակեցվել են դասախոսների ծանրաբեռնվածությունները, մշակվել ու հաստատվել են պարապմունքների դասացուցակները, ամբիոնների ուստարվա պլանները, կազմվել են օրացուցային թեմատիկ պլանները:

Ընդհանրապես, կազմակերպչական միջոցառումների իրականացումը բնորոշ է ոչ միայն տարեսկզբին իրականացվելիք միջոցառումների, այլև ողջ ուսումնական տարվա համար: Դրանք են.

- տարվա ընթացքում ամբիոններում տարվել են աշխատանքներ էլեկտրոնային դասախոսությունների մշակման ու համապատասխան բազաներ մուտքագրման համար.
- ամբիոնների կողմից տրվել են առաջարկություններ՝ որոշ ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու համար.
- ամբիոններում մշակվել են ստուգումների հարցաշարեր, թարմացվել որոշ թեստային առաջադրանքների ու ինքնուրույն աշխատանքների բովանդակային պահանջներ.

• վերահսկվել է պլանային պարապմունքների ընթացքը, ուսանողների պարապմունքների հաճախումը.

• ընթացիկ ստուգումների նախօրյակին ուսանողների հետ անց է կացվել հարցում՝ հարցաշարերի առկայության, հարցաշարերում առաջադրվող պահանջների ու պարապմունքներին ուսումնասիրված նյութերի համապատասխանության վերաբերյալ և այլն:

Ֆակուլտետի 2021-22 ուսումնական տարվա բեռնվածքի ընդհանուր ժամաքանակը կազմել է 19820 ժամ:

Դիտարկելով վերջին 7 տարիների ֆակուլտետի տարեկան ուսումնական բեռնվածքի ժամաքանակը՝ արձանագրում ենք, որ 2017-18 ուս.տարվանից արձանագրված ժամաքանակի աճը սկսել է նվազել 44-օրյա պատերազմից հետո: Տվյալները ներկայացված են հետևյալ աղյուսակում:


Ամբիոն	Ուսումնական բեռնվածքի ժամաքանակը						
	20 15-2016	20 16-2017	20 17-2018	20 18-2019	20 19-2020	20 20-2021	20 21-2022
Մանկավարժ ության և հոգեբանության	99 00	86 98	10 075	10 364	10 418	95 67	96 14
ՖԴ և ՆԶՊ ամբիոն	95 86	96 98	10 166	10 097	10 645	10 417	10 206
Ընդամենը	19 486	18 396	20 241	20 461	21 063	19 984	19 820

Սեպտեմբեր ամսին ուսանողական խմբերում տեղի են ունեցել ուսանողների թվակազմի փոփոխություններ: Բանակ զորակոչվելու, այլ բուհեր տեղափոխվելու, ուսումը շարունակելուց հրաժարվելու, ակադեմիական արձակուրդից ժամանակին չվերադառնալու պատճառներով տարեսկզբին ունեցել ենք պարապմունքների հաճախելիության 72-78%:


Պլանային պարապմունքների անցկացումը բնականոն հունի մեջ էր մտնում, սակայն կորոնավիրուսային վարակի նոր ուժգնացումը հարկադրեց ուժեղացնել հակահամաճարակային միջոցառումների իրականացում առկա համակարգում: Հեռակա համակարգի *Ֆիզ.դաստիարակություն և սպորտային մարզումներ* կրթական ծրագրի 1-ին կուրսեցիների հետ մեկնարկային պարապմունքների 2-րդ շաբաթվա պարապմունքները (08-12.11) չկայացան, ուսումնական նյութը դասախոսների կողմից հանձնարարությունների տեսքով տրվեց ուսանողներին:

Ի պատասխան հոկտեմբերի 29-ից համավարակի առաջադրած խնդիրներին՝ ֆակուլտետը ևս անցավ առցանց ուսուցման: Նոյեմբերի 1-ից 27-ը պլանով նախատեսված՝ ՏՄՄ, ՆԶՊ, ՖԴ և ՄՄ 4-րդ կուրսերի համար մանկավարժական փորձուսուցումների անցկացման ժամկետները տեղափոխվեցին դեկտեմբերի 6-ից 24-ը:

Նաև կար մտավախություն, որ հակահամաճարակային միջոցառումների պատճառով առաջացած սահմանափակումները լուրջ բացասական հետևանք կունենան ստուգումների արդյունքների վրա: Համեմատելով 2-րդ փուլի ամփոփ արդյունքները 1-ին փուլի ամփոփ արդյունքների հետ՝ արձանագրվել է հետևյալ հարաբերությունը.



Առանց եզրափակիչ գնահատում ունեցող դասընթացների առումով ունենք հետևյալ պատկերը.



Հաշվետու ժամանակաշրջանում կարևորվել է փորձուսուցման կազմակերպման ու անցկացման գործընթացը: Պետք է նշել, որ փորձուսուցումների նախապատրաստման, խորհրդակցությունների անցկացման, ղեկավարների պլանների մշակման գործում կա դրական տեղաշարժ: Ստորև ներկայացվում են այն խնդիրները, ինչն այսօր շատ կարևոր է փորձուսուցումների առջև դրված նպատակներին հասնելու համար:

Փորձուսուցման ընթացքում ուսանողը պետք է կատարի կոնկրետ հանձնարարություններ, որը նրա տեսական գիտելիքների գործնական կատարումն պետք է լինի: Ըստ իմ կողմից անցկացված ստուգումների, Ֆիզ.դաստ. և ՆԶՊ ամբիոնի վարիչի կողմից կազմակերպված «Փորձուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայով կլոր սեղան քննարկման ժամանակ բարձրացված հարցերի, այսօր ղեկավարների, պատասխանատուների կողմից կոնկրետ չեն մշակվում հանձնարարականներ ու դրանց գնահատման չափորոշիչներ, որոնք պետք է դառնան ուսանողի մասնագիտական հմտությունների գնահատման հիմքը: Ուշադրությունից դուրս է մնում դասի բազմակողմանի վերլուծությունը, մատենավարությունը, ընթացիկ և ամփոփիչ գնահատումը, պարապմունքին նախապատրաստվելու ողջ ընթացքը, աշխատանք ծնողների հետ, արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների պլանավորումը և անցկացումը, օրագրերի ամենօրյա լրացումը, սեփական աշխատանքի վերլուծությունը և այլն:

Հարկ է նշել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում արձանագրվածը. ատեստավորման քննությունները անցել են կազմակերպված ու պատշաճ մակարդակով, հատկապես ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացները, որոնց արդյունքում գրանցվել են գերազանց և լավ գնահատականներ: Առաջարկությունները և դիտողությունները հիմնականում վերաբերում են հետևյալ ուղղություններին.

-առավել մեծ ուշադրություն դարձնել առարկաների դասավանդման մեթոդիկաներին.

-ուսուցման հեռակա համակարգի որակի բարելավման համար ուժեղացնել վերահսկողությունը տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման ուղղությամբ.

-մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության գործում կարևորել արդիական թեմաների անհրաժեշտությունը, առավելապես հաշվի առնել հետպատերազմական հոգեբանական ուսումնասիրությունների կարևորությունը.

-գործնական կապ ապահովել բուհ-ԱրՊՀ հոգեբանական կենտրոն -այլ գործող հոգեբանական կենտրոններ ուղղություններում, նույնականացնել մասնագիտական ծառայությունների արդիական հետազոտությունների արդյունքների կիրառումը:

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Բաղդասարյան Էլլադա Զավենի, մ.գ.թ., դոցենտ

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնում ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 2 պրոֆեսոր, 6 դոցենտ (որից 2-ը՝ ժամավճարային աշխատող), 3 ավագ դասախոս, 2 դասախոս, 4 ասիստենտ:

Հիմնական աշխատողներ՝

1. Բաղդասարյան Էլլադա Զավենի-մ.գ.թ., դոցենտ
2. Թովմասյան Արկադի Վարդանի-մ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
3. Սարգսյան Ժենյա Հակոբջանի-դոցենտի պաշտոնակատար
4. Աբալյան Արմենուհի Վաղարշակի-մ.գ.թ., դոցենտ
5. Բաղդասարյան Արմինե Ռուբիկի-մ.գ.թ., ավագ դասախոսի պաշտոնակատար
6. Ավանեսյան Արմինե Մարտինի-ավագ դասախոս
7. Մկրտչյան Իննա Լևոնի-դասախոս
8. Ավագիմյան Ռոզա Բորիսի-ավագ դասախոսի պաշտոնակատար
9. Հարությունյան Ռոզալյա Վիտալի-դասախոս
10. Մխիթարյան Արգիշ Մարտիրոսի-հ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար

Ժամավճարային հիմունքներով աշխատողներ՝

1. Ղարախանյան Լուսինե Գաչայի-հ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
2. Պետրոսյան Աննա Ալեքսանդրի-մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
3. Ադամյան Արմինե Արտակի-ասիստենտ
4. Հովսեփյան Սուսաննա Ալեքսանդրի-ասիստենտ
5. Աղաբաբյան Մարիամ Վաչիկի-ասիստենտ
6. Գասպարյան Մարիամ Վլադիմիրի-ասիստենտ

Համատեղությամբ աշխատող՝

Յարամիշյան Վիտյա Բենիկի-պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 9614 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Բարձրագույն կրթության բարեփոխումների պլանավորման և իրականացման պայմաններում հատկապես կարևորվել են մասնագիտական բարձր որակավորումը, ստեղծագործական մտածողությունը և հումանիստական արժեքավարձ ունեցող մանկավարժների հիմնախնդիրները, որոնց լուծմանն են միտված կրթական ծրագրի մանկավարժական, հոգեբանական մասնագիտությունների բովանդակություններն էապես վերափոխելու գործընթացները:

Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, զեկույցներով հանդես եկել տարբեր բուհերի կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովներում:

Հրատարակությունների ցանկ

1. Բաղդասարյան Ա.Ռ., *Բարձրագույն կրթության ռազմավարական ուղղություններն ու նրա հիմնարար արժեքները (մանկավարժի դիտարկումներից)*, Գրիգոր Նարեկացի համալսարանի «Դպրատուն» հանդես, 2022, էջ 114-118:
2. Յարամիշյան Վ.Բ., *PSYCHOLOGICAL FACTORS PROVIDING THE CONTINUITY IN HIGHER EDUCATION IN THE POST-WAR PERIOD (ON THE EXAMPLE OF ARTSAKH)*, «Արդի հոգեբանություն» գիտական հանդես, հմ 2 (9), Երևան, 2021, էջ 357-364:
3. Յարամիշյան Վ.Բ., *Վախի բացասական ազդեցության հաղթահարման ուղղությամբ տարվող հոգեբանական աշխատանքը*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, էջ 309-318:
4. Յարամիշյան Վ.Բ., *Զինվորական ծառայությանը դժվար հարմարվելու հոգեբանական պատճառները*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, էջ 291-298:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Ուսումնական տարվա ժամանակահատվածում ամբիոնում ամբողջությամբ փոխվել և նոր ձևաչափով են ներկայացվել առարկայական նկարագրերը, վերանայվել են նաև գործող ուսումնական պլանները:
2. Զրույցներ մանկավարժության և հոգեբանության արդիական խնդիրների շուրջ:
3. Բոլոր դասընթացների գծով առարկայական ծրագրերի, դասախոսությունների, ինքնուրույն աշխատանքների թեմաների և դրանց կատարման և գնահատման մեթոդաբանության ապահովում:
4. Ուսուցման ընթացքում կիրառվող մանկավարժական նորարարական տեխնոլոգիաների իրականացում:
5. Դասախոսների կողմից գիտական սեմինարների անցկացում և քննարկում:
6. Մասնագիտական հոդվածների քննարկումներ:
7. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
8. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
9. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:
10. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

1. Ամբիոնը համագործակցում է Հայաստանի Խ. Աբովյանի, Մ. Հերացու անվան ԵՊՀ, Գորիսի պետական մանկավարժական համալսարանների հետ:
2. Առկա է սերտ համագործակցություն ԱրՊՀ-ում գործող հոգեբանական կենտրոնի հետ. կազմակերպվել են տարբեր բնույթի միջոցառումներ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. ԱՀ և ՀՀ մի շարք համալսարաններում կազմակերպված գիտաժողովների մասնակցություն:

2. Ամբիոնի դասախոսների գեկույցների և թեզիսների ներկայացումը գիտական կոնֆերանսներում:

Վերահսկողական աշխատանքներ

1. Հետևողականորեն վերահսկվել է դասախոսների ծանրաբեռնվածության կատարումը:
2. Իրականացվել է պարապմունքների ընթացքի հետևողական վերահսկում:
3. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
4. Վերահսկվել է ստուգումների և քննությունների ընթացքը՝ ըստ նախօրոք սահմանված գրաֆիկի:
5. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
6. Թեստերի, հարցաշարերի, տոմսերի համապատասխանելիության վերահսկում:
7. Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:
8. Ամբիոնում պարբերաբար կազմակերպվել են դասալսումներ: Բոլոր դասալսումները քննարկվել են ամբիոնի նիստերում և արձանագրվել:
9. Մանկավարժական փորձուսուցման ընթացքի վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Ուսանողների ակտիվ մասնակցությամբ ամբիոնը ձեռնամուխ եղավ տարբեր ձևաչափերով միջոցառումների կազմակերպմանը՝ կլոր սեղաններ, բանավեճեր, գիտական, մանկավարժական ընթերցումներ, տարբեր թեմաներով քննարկումներ, հանդիպումներ շրջանավարտների հետ:
2. Մանկավարժական փորձուսուցման ժամանակ դաս-միջոցառում՝ ուսանողների և աշակերտների մասնակցությամբ:
3. Փորձուսուցման հաշվետու միջոցառում:
4. Հոկտեմբերի 5-ին կազմակերպվել է հուշ-ցերեկույթ՝ ի հիշատակ Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած հերոս ուսուցիչների:
5. Հոկտեմբերի 15-ին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Խաչատուր Աբովյանի 212-ամյակին:
6. Հոկտեմբերի 11-ին հոգեբանական կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ նվիրված հոգեկան առողջության միջազգային օրվան, որի ընթացքում վերլուծվել են հետպատերազմյան իրավիճակում հասարակության շրջանում տեղ գտած անորոշության ու տագնապի զգացումները:
7. Հունվարի 31-ին կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Հեռակա ուսուցման համակարգի դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները» թեմայով:
8. Փետրվարի 17-ին կազմակերպվել է կլոր սեղան- քննարկում՝ «Արդի պայմաններում հեռավար ուսուցման մարտահրավերները» թեմայով:
9. Ապրիլի 19-ին կազմակերպվել է բաց դաս տարիքային հոգեբանության դասընթացից՝ «Հոգեբանության մեթոդները և դրանց կիրառումը տարիքային հոգեբանության մեջ» թեմայով:
10. Ապրիլին կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Պաշտպանական մեխանիզմներ» թեմայով:
11. Մայիսի 3-ին կազմակերպվել է բաց դաս-միջոցառում՝ «Անձի սահմանային վիճակներ, խանգարումներ» թեմայով:
12. Մայիսի 8-ին 1-ին կուրսեցիների ակտիվ մասնակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ «Կին հոգեբանների ներդրումը հոգեբանության գիտության զարգացման գործում» թեմայով:
13. Մայիսի 12-ին կազմակերպվել է բաց դաս-միջոցառում՝ «Ուսուցչի մանկավարժական վարպետությունը» թեմայով:

Ֆիզիկական դաստիարակության և ՆԶՊ ամբիոն Ամբիոնի վարիչ՝ Հայրապետյան Սուսաննա Սլավայի, մ.գ.թ., ավագ դասախոս

Ֆիզ.դաստիարակության և ՆԶՊ ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 15 դասախոս, որից 1 մ.գ.թ. դոցենտի պաշտոնակատար, 2 դոցենտի պաշտոնակատար, 1 դոցենտ, 1 մ.գ.թ., ավագ դասախոս, 2 ավագ դասախոսի պաշտոնակատար, 3 դասախոս և 5 ասիստենտ:

Հիմնական աշխատողներ՝

1. Հայրապետյան Սուսաննա Սլավայի-մ.գ.թ., ավագ դասախոս
2. Հարությունյան Ստանիսլավ Ալեքսանդրի-մ.գ. թ. դոցենտի պաշտոնակատար, ԱՀ վաստակավոր գործիչ
3. Ուլուբաբյան Լարեն Գրիգորի-դոցենտի պաշտոնակատար
4. Առստամյան Արտո Ռուբենի- դոցենտ, ԼՂՀ և ՀՀ վաստակավոր մարզիչ
5. Բեգլարյան Լամոն Խորենի-դոցենտի պաշտոնակատար, ՀՀ Ֆիզկուլտուրա և սպորտի վաստակավոր աշխատող, ԱՀ վաստակավոր գործիչ
6. Գրիգորյան Ռուզաննա Օնիկի-դասախոս, սպորտի վարպետ
7. Գրիգորյան Արարատ Ռադոնի-ասիստենտ
8. Գրիգորյան Մավրիկ Վաղարշակի-ավագ դասախոսի պաշտոնակատար
9. Մարդիյան Հովարդ Արմայիսի-ասիստենտ
10. Ավանեսյան Լյոնյա Լենկոյի-ասիստենտ
11. Պետրոսյան Արթուր Սուրենի-դասախոս, սպորտի վարպետ
12. Ֆիրյան Արայիկ Ռոբերտի-հ.գ.թ., դասախոս
13. Հարությունյան Վլադիմիր Սերգեյի-ասիստենտ

Ժամավճարային հիմունքով աշխատող՝

Բեգլարյան Սամվել Իշխանի-ասիստենտ

Համատեղությամբ աշխատող՝

Այդինյան Շահեն Վարդանի-դեկանի պաշտոնակատար, ավագ դասախոսի պաշտոնակատար

Ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոնի ընդհանուր ծանրաբերնվածությունը կազմել է 10206 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները և ուսումնական դասընթացները ծավալել և այժմ էլ ծավալում է ֆիզիկական դաստիարակության տեսության ու մեթոդիկայի, սպորտային խաղերի, առողջ ապրելակերպի, առողջության ամրապնդման միջոցների, ռազմական փորձագիտական և վերլուծական գործունեության և այլ ուղղություններով:

Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, կազմել են մասնագիտական դասընթացների թեստեր ու ծրագրեր, առարկայական նկարագրեր և մասնակցել տարբեր կոնֆերանսների, գիտաժողովների:

Հրատարակությունների ցանկ

1. Հայրապետյան Ս.Ս., *Сдвиги показателей температуры тела после разминки, как критерий ее эффективности*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 1/2022, էջ 331-335:
2. Հայրապետյան Ս.Ս., Ֆիրյան Ա.Ռ. *Մահմանամերձ գոտում հոգեբանական պաշտպանության եզրույթի տեսամեթոդաբանական մեկնությունները*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2022, էջ 320-331:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Հաշվետու ուսումնական տարում որոշակի աշխատանքներ են կատարվել ամբիոնի ռազմավարական ծրագրերի, մասնագիտական կրթական ծրագրերի, հեռավար դասընթացների «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «ՆԶՊ» կրթական ծրագրերի ընդունելության քննությունների նորմացույցների, դասալսումների, մասնագիտական և ոչ մասնագիտական նորմացույցների, թեստերի, ինքնուրույն աշխատանքների ստուգման նոր մեթոդաբանության մշակման ուղղությամբ:
2. Յուրաքանչյուր կիսամյակում ոչ միայն իրագործվում են ուսումնական գործընթացները, այլ նաև կիսամյակների վերջում կատարվում է իրագործված աշխատանքների քանակական, որակական կողմերի վերլուծություն՝ կատարվում է վերլուծություն՝ թերությունների շտկման գործունեության բարեփոխման նկատառումներով:
3. Համաձայն ուսումնական պլանի՝ երկու կրթական ծրագրերի համար հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են ուսումնական և մանկավարժական փորձուսուցումներ բակալավրիատում առկա և հեռակա համակարգերում: Փորձուսուցման ավարտին կազմակերպվել է կյոթ սեղան-քննարկում՝ «փորձուսուցման արդյունավետության բարձրացման ուղիները» թեմայով:
4. Ամբիոնի մանկավարժական մեթոդական գործունեության կետերից մեկն է դասախոսների կողմից, դասերին պատրաստ ներկայանալը, դասապրոցեսը բարձր մակարդակով անցկացնելը:
5. Մի շարք դասախոսների կողմից թարմացվել են եզրափակիչ քննության թեստերի առաջադրանքները:
6. Դասալսումների համար կազմվել է գրաֆիկ, և ըստ ժամանակացույցի կազմակերպվել են դասալսումներ (5) հատկապես երիտասարդ դասախոսների մոտ: Բոլոր դասալսումները քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստերում:
7. Ավարտական, կուրսային աշխատանքների կատարման ընթացքի մասին ղեկավարները ներկայացնում են ամբիոնի նիստերում:
8. Ամբիոնի դասախոսները մասնակցել են ԱրՊՀ որակավորման ստուգման հանձնաժողովներում:
10. Class room-ի ծրագրի մասնակցություն և իրագործում:
11. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Համագործակցության շրջանակներում ամբիոնը որոշակի կապեր է հաստատել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հայկական պետական ինստիտուտի, ԵրՊՀ-ի ֆիզիկական դաստիարակության ամբիոնի հետ, Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի, ինչպես նաև Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի, սպորտդպրոցների, սպորտկոմիտեի և տարբեր սպորտաձևերի ֆեդերացիաների հետ, Ստեփանակերտ քաղաքի թիվ 1 միջնակարգ և թիվ 8 հոսքային ավագ դպրոցների հետ: Փետրվարի 17-ին մասնակցել ենք մանկավարժության և հոգեբանության ամբիոնի կողմից կազմակերպված կյոթ սեղան-քննարկմանը «Արդի պայմաններում հեռավար ուսուցման մարտահրավերները» թեմայով:

Գիտահետազոտական աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում ֆիզ.դաստիարակության և ՆԶՊ ամբիոնի դասախոս Ա.Ռ.Ֆիրյանը պաշտպանել է ատենախոսություն՝ «Մասնամամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանական պաշտպանության առանձնահատկությունները և զարգացման հնարավորությունները» թեմայով նրան շնորհվել է հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճան:

Ա.Ռ.Ֆիրյանը Դնեպր քաղաքում մասնակցել է 12-րդ միջազգային գիտապրակտիկ կոնֆերանսին:

Վ.Հարությունյանը մասնակցել է մեդիա-դիալոգ գիտաժողովին Թիֆլիս քաղաքի Կովկասյան համալսարանում:

Վ.Հարությունյանը մասնակցել է Լվովի ժուռնալիստիկայի համալսարանի Կիևի պետական համալսարանի ուսանողների և լրատվական միջոցների հետ կոնֆերանսին «Կոնֆլիկտային գոտիների խնդիրները» թեմայով:

Ավարտական աշխատանքների ղեկավարները և ուսանողները իրենց կատարած աշխատանքների ընթացքի մասին ներկայացրել են ամբիոնի նիստում: Ավարտական աշխատանքների հետազոտությունները կատարվել են թիվ 1,8,10 դպրոցներում և մանկական հիմնարկներում:

Վերահսկողական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված բոլոր աշխատանքները քննարկվել են ամբիոնի 10 նիստերում, ընդունվել են համապատասխան որոշումներ, մասնավորապես դասալսումների կազմակերպման և քննարկման, ուսումնական կիսամյակների նախապատրաստական աշխատանքների և դրանց իրականացման արդյունքների, կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների ընտրության, կատարման ընթացքի, նախապաշտպանության և պաշտպանության վերաբերյալ:

Ամբիոնի բոլոր դասախոսները կատարել են իրենց ուսումնական ծանրաբեռնվածությունը, ընթացիկ հարցումներն ու ստուգումները, ինչպես նաև եզրափակիչ քննությունները իրականացվել են համաձայն նոր ընդունված կարգի: Մուտքագրվել են էլեկտրոնային դասախոսությունները օնլայն դասընթացների կազմակերպման համար: Վերահսկվել է Class room-ի ծրագրի մուտքագրման ընթացքը:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

ԱրՊՀ ֆակուլտետների միջև մարզական միջոցառումների կազմակերպում:

Ֆուտբոլի մարզաձևից

- 1-ին տեղ - մանկավարժության և սպորտի ֆակուլտետ
 - 2-րդ տեղ - տնտեսագիտության ֆակուլտետ
 - 3-րդ տեղ - բնագիտական ֆակուլտետ
- Կազմակերպիչներ՝ Ա.Գրիգորյան, Ս.Բեգլարյան

Սեղանի թենիսի մրցույթ

աղջիկներ

- 1.Գասպարյան Լուսինե Պոբեդիկի – ՖԴԽՄՄ 3-րդ կուրս, 1-ին տեղ:
 - 2.Բաղդասարյան Արինա – Հոգ. 1-ին կուրս, 2-րդ տեղ:
 - 3.Գրիգորյան Սյուզաննա – Ֆինանսներ 1-ին կուրս, 3-րդ տեղ:
- Կազմակերպիչներ՝ Ա.Ֆիրյան, Ս.Հայրապետյան

տղաներ

- 1.Սարգսյան Արա – Իր. 2-րդ կուրս – 1-ին տեղ
 - 2.Գասպարյան Գուրգեն – Ֆին. 2-րդ կուրս – 2-րդ տեղ
 - 3.Բաղդասարյան Վահե – Տ/Տ-2-րդ կուրս – 3-րդ տեղ
- Կազմակերպիչներ՝ Ա.Պետրոսյան, Ս.Բեգլարյան

Ամբիոնի մասնակցությունը տարբեր միջոցառումներին

Ամբիոնի դասախոսները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ԼՂՀ-ում և ՀՀ-ում կազմակերպվող սպորտային միջոցառումներին:

1.<<ՀՀ վարչապետի գավաթ>> սիրողական սեղանի թենիսի մրցաշարի առաջին փուլում

Ա.Ռ. Ֆիրյանը գրավել է 1-ին տեղը, Ս.Ս.Հայրապետյանը գրավել է 2-րդ տեղը

2.Ստեփանակերտ քաղաքի կազմակերպությունների միջև մրցումներում սեղանի թենիս մարզաձևից ԱրՊՀ հավաքական թիմը գրավել է 3-րդ տեղը:

1. Սուսաննա Հայրապետյան – ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոնի վարիչ
2. Գեորգի Սահակյան – ԱրՊՀ ուսումնական գծով պրոռեկտոր
3. Արայիկ Ֆիրյան – ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոնի դասախոս
Անհատական ձևում Ս.Ս.Հայրապետյանը գրավել է 3-րդ տեղը
Ա.Ռ. Ֆիրյանը գրավել է 1-ին տեղը

Ֆիզդաստիարակության և ՆԶՊ ամբիոնի դասախոսների պատրաստած ուսանող-մարզիկները բարձր ցուցանիշներ են ցուցաբերել հետևյալ մրցումներում

1. ՀՀ հանրապետական ուսանողական խաղեր
Աթլետիկա, հնգամարտ մարզաձևից
ԱրՊՀ հավաքական թիմ
Տղաներ – 2-րդ տեղ
Աղջիկներ – 3-րդ տեղ
Ընդհանուր – 2-րդ տեղ
անհատական
1. Հակոբյան Արման – ՖԴՆՍՄ-4 1-ին տեղ
2. Բաղդյան Մանուշակ – ՖԴՆՍՄ-3 3-րդ տեղ

2. ՀՀ բաց առաջնություն

- Գաբրիելյան Գևորգ – Իր-4 – 400 մ – 2-րդ տեղ

3. ՀՀ կրոսավազքի առաջնություն, ք. Վանաձոր

1. Հակոբյան Արման – ՖԴՆՍՄ-4 3000 մ – 1-ին տեղ
2. Առստամյան Ալեն – ՖԴՆՍՄ-3 էստաֆետա 4x500 – 2-րդ տեղ
3. Գաբրիելյան Գևորգ – Իր-4 էստաֆետա 4x500 – 2-րդ տեղ

4. Մեյրան Հարությունյան հուշամրցաշարը

1. Հակոբյան Արման – ՖԴՆՍՄ-4 – 400 մ – 2-րդ տեղ
2. Բաղդյան Մանուշակ – ՖԴՆՍՄ – 3 – 100 մ – 2-րդ տեղ
3. Առստամյան Ալեն – ՖԴՆՍՄ-3 – 100 մ – 1-ին տեղ,
հեռացատկ-2-րդ տեղ
4. Գաբրիելյան Գևորգ – Իր-4 – 400 – 1-ին տեղ
5. Պողոսյան Արամ – ՖԴՆՍՄ-4 – 800 մ – 3-րդ տեղ

5. ԱՀ անկախության օրվա կապակցությամբ մրցումներ

1. Առստամյան Ալեն – ՖԴՆՍՄ-3 – 100 – 1-ին տեղ
2. Գաբրիելյան Գևորգ – Իր-4 – 500 – 1-ին տեղ
3. Հակոբյան Արման – ՖԴՆՍՄ – 4 – 500 մ – 2-րդ տեղ

6. Ֆիզկուլտուրնիկի օրվա կապակցությամբ մրցումներ

1. Գաբրիելյան Գևորգ – Իր-4 – 100 – 1-ին տեղ
2. Հակոբյան Արման – ՖԴՆՍՄ – 4 – 100 մ – 2-րդ տեղ
400 մ – 2-րդ տեղ
3. Բաղդյան Մանուշակ – ՖԴՆՍՄ – 3 – 100 մ – 1-ին տեղ,
400 մ – 3-րդ տեղ

Մարզիչներ՝ Ա. Առստամյան, Ա. Պետրոսյան

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Խաչատրյան Արմինե Բորիսի, պ.գ.թ., դոցենտ

Ֆակուլտետի կառուցվածքը և կառավարման համակարգը

Պատմության և իրավագիտության ֆակուլտետում գործում է երեք ամբիոն: Ֆակուլտետի կառավարման մարմիններն են՝ ֆակուլտետի խորհուրդը, մեծ խորհուրդը: Աշխատանքները տարվում են ըստ ֆակուլտետի խորհրդի կողմից ընդունված և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից հաստատված ծրագրի և ֆակուլտետի ռազմավարության:

Հաշվետու տարում հրավիրվել է ֆակուլտետի խորհրդի 9 նիստ, որտեղ քննարկվել են ընթացիկ ուսումնագիտական հարցերը: Ուսանողական խորհրդի նախագահին էր իրավագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Աստղիկ Բաբայանը, ուսանողական գիտական ընկերության նախագահը՝ պատմության 4-րդ կուրսի ուսանողուհի Աշխեն Ասրյանը:

Ուսումնական տարվա սկզբին ամբիոններում հստակեցվել են դասախոսների ծանրաբեռնվածությունները, մշակվել ու հաստատվել են պարապմունքների դասացուցակները, ամբիոնների ուստարվա պլանները, կազմվել են օրացուցային թեմատիկ պլանները:

Իրականացվել են մի շարք կազմակերպչական աշխատանքներ.

1. տարվա ընթացքում ամբիոններում տարվել են աշխատանքներ էլեկտրոնային դասախոսությունների մշակման ու համապատասխան բազաներ մուտքագրման համար.
2. ամբիոնների կողմից մշակվել և ֆակուլտետի խորհրդի նիստում ամբողջացվել է տարվա ընթացքում իրականացվելիք միջոցառումների ցանկը.
3. ամբիոնների կողմից տրվել են առաջարկություններ՝ որոշ ուսումնական պլաններում փոփոխություններ կատարելու համար.
4. ամբիոններում մշակվել են ստուգումների հարցաշարեր, թարմացվել որոշ թեստային առաջադրանքների և ինքնուրույն աշխատանքների բովանդակային պահանջները.
5. վերահսկվել է պլանային պարապմունքների ընթացքը, ուսանողների պարապմունքների հաճախումը.
6. ընթացիկ ստուգումների նախօրյակին ուսանողների հետ անց է կացվել հարցում՝ հարցաշարերի առկայության, հարցաշարերում առաջադրվող պահանջների ու պարապմունքներին ուսումնասիրված նյութերի համապատասխանության վերաբերյալ և այլն:

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի տեսլականն է՝ բարձրացնել ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը, նպաստել ֆակուլտետի մրցունակության բարձրացմանը, ապահովել կրթական բարձրորակ մշակույթի ձևավորումը, մատուցվող կրթական ծառայությունների համապատասխանությունը և համադրելիությունը միջազգային չափանիշներին:

Կրթական գործունեություն

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է 25545 ակադեմիական ժամ, որը բաշխվել է 3 ամբիոնների միջև:

2021-2022 ուստարում ֆակուլտետի առկա ուսուցման համակարգում ուսանում էր բակալավրիատի 211, մագիստրատուրայի 43, հեռակա ուսուցման համակարգում՝ 86 ուսանող: Ֆակուլտետում ձևավորված էր 26 խումբ. բակալավրիատի 3 մասնագիտությունների գծով առկա էր 20 խումբ՝ 11-ը առկա, 9-ը հեռակա, 4 մասնագիտացումներով՝ մագիստրատուրայի 6 խումբ, որոնցից մեկը՝ հեռակա:

Ունեցել ենք 97 շրջանավարտ, առկա բաժնից՝ 81, հեռակա բաժնից՝ 16: Նշվածներից բակալավրիատի 15 ուսանող և մագիստրատուրայի 13 մագիստրանտ ստացել են գերազանցության դիպլոմ: Ըստ այդմ.

բակալավրիատ՝ գերազանցության դիպլոմ 20,8 % .

մագիստրատուրա՝ գերազանցության դիպլոմ 52% .

ֆակուլտետում՝ գերազանցության դիպլոմ 28,8 % :

3. Միջոցառումներ

Ա.Կազմակերպվել է «Արցախ, մեր տուն» խորագրով միջոցառում, որի գաղափարական հիմքում ընկած էին ազգային արժեքների պահպանման ու ամրապնդման, միասնականության, ժամանակակից զարգացումների համատեքստում ավանդույթների ու ժողովրդական

իմաստության վերաբերման, ինքնության պահպանման, դժվարություններին դիմակայելու, բայց հայրենի հողից չհեռանալու անկոտրուկ կամքի հարցերը :

Բ.Մարտի 7-ին ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ մեկնարկել է *համալսարան-դպրոց* կապն ամրապնդող միջոցառումների ծրագիրը: Մարտի 7-ին և 8- ին պատմության կրթական ծրագրի ուսանողներն այցելել են Ստեփանակերտի Վ. Զհանգիրյանի անվան 11-րդ ավագ դպրոց:

Ինքնավերլուծություն: Ֆակուլտետի ուժեղ և թույլ կողմերը

Ֆակուլտետի ուժեղ կողմերն են.

Ա. *ուսանող- դասախոս – ամբիոն - դեկանատ* փոխհամագործակցության ամուր հենքը.

Բ. ուսանողների ներգրավվածությունը համալսարանական, արտահամալսարանական միջոցառումներին.

Գ. ուսման գործընթացի բարելավմանն ուղղված աշխատանքները:

Ֆակուլտետի թույլ կողմերն են.

Ա. փոխադարձ դասալսումների և քննարկումների, առաջավոր մանկավարժական փորձի ներդրման ոչ բավարար մակարդակը.

Բ. *բուհ-գործատու* կապի ոչ լիաժեռ գործարկումը.

Գ. իրավունքի ամբիոնի պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի սահմանափակ լինելը:

Ֆակուլտետում գործող ամբիոններ՝ 3:

Պատմության և քաղաքագիտության ամբիոն Ամբիոնի վարիչ՝ Սարումյան Նունե Պուշկինի, պ.գ.թ., դոցենտ

Պատմության և քաղաքագիտության ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են պատմական գիտությունների 2 դոկտոր, պրոֆեսորի պաշտոնակատար, 1 փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսորի պաշտոնակատար, 1 պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պաշտոնակատար, 7 պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, 1 պատմական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, 1 փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտի պաշտոնակատար, 2 դոցենտի պաշտոնակատար, 1 քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտի պաշտոնակատար, 1 քաղաքական գիտությունների թեկնածու, ավագ դասախոս, 4 ավագ դասախոս, 1 դասախոս, 1 ասիստենտ: 2021-22 ուսումնական տարում ամբիոնում առկա էր 1 ասպիրանտ, 1 հայցորդ:

Հիմնական աշխատողներ՝

1. Սարումյան Նունե Պուշկինի-պ.գ.թ., դոցենտ
2. Սաֆարյան Վարդգես Արամայիսի-պ.գ.թ., դոցենտ
3. Պետրոսյան Անդրեյ Պողոսի-դոցենտի պաշտոնակատար
4. Մարգարյան Գարուշ Լևոնի-ավագ դասախոս
5. Հակոբյան Աննա Գառնիկի-փ.գ.թ., դոցենտ
6. Սողոմոնյան Նաիրա Գրիգորի-դոցենտի պաշտոնակատար
7. Կարաբեկյան Դավիթ Պավելի-ավագ դասախոս
8. Աբրահամյան Ալվարդ Գարեգինի-ք.գ.թ., ավագ դասախոս
9. Ավանեսյան Իսկուհի Նիկոլայի-պ.գ.թ., ավագ դասախոս

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Բալայան Վահրամ Ռազմիկի-պ.գ. դ., պրոֆեսորի պաշտոնակատար
2. Մանասյան Ալեքսանդր Սարգսի-փ.գ.դ., պրոֆեսորի պաշտոնակատար
3. Դադայան Ստեփան Վաղարշակի-պ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
4. Հովհաննիսյան Լեոնիկ Լենտրուշայի-ավագ դասախոս

5. Սարգսյան Արմեն Թեմուրի-ավագ դասախոսի պաշտոնակատար
6. Պետրոսյան Արևիկ Վանիկի-պ.գ.թ., դոցենտ
7. Բալայան Մելանյա Գուրգենի-պ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
8. Բաղդասարյան Նելլի Էդուարդի-պ.գ.թ., դոցենտ
9. Հարությունյան Մհեր Ալեքսանդրի-պ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
10. Հակոբյան Տարոն Վլադիկի-պ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
11. Բաբայան Դավիթ Կլիմի-պ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
12. Փաշայան Հրայր Աբրիկի-ք.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
13. Բարսեղյան Վարդուհի Ռուբենի-դասախոս
14. Մխիթարյան Էլինա Մանվելի- ասիստենտ

Համատեղությամբ աշխատողներ՝

1. Ավանեսյան Վալերի Միքայելի- պ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար
2. Խաչատրյան Արմինե Բորիսի- պ.գ.թ., դոցենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 9115 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Չնայած 2020 թվականի մարտահրավերները մեծապես վնասեցին կրթական համակարգին, համավարակով պայմանավորված՝ փոփոխություններ տեղի ունեցան կրթական ողջ համակարգում և ուսումնական գործընթացը հիմնականում տեղափոխվեց առցանց հարթակ, ինչպես նաև սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմը առավել խորացրեց երկրի ներսում տիրող ճգնաժամը, այնուամենայնիվ, պատմության և քաղաքագիտության ամբիոնում շարունակվեցին ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները նշված ուսումնական տարում՝ հայոց պատմության, ազգագրության, հնագիտության և ընդհանուր պատմության մի շարք հիմնախնդիրների ուսումնասիրության և պատմության դասավանդման մեթոդիկայի ուղղությամբ:

Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, մենագրություններ, ժողովածուներ, կազմել են մասնագիտական ծրագրեր, թեստեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ:

Ամբիոնի դասախոսները ղեկավարել են ուսանողների գիտական հոդվածներ, որոնք, ուսանողական գիտաժողովներին ներկայացվելով, երաշխավորվել են տպագրման:

Ամբիոնի նախաձեռնությամբ 2021թ. հոկտեմբերի 8-ին մեկնարկել է ուսանողների «Պատմաբանների ակումբը»:

Տարվա ընթացքում կազմակերպվել են ուսումնական պլաններով նախատեսված բոլոր 7 փորձնականությունները, որից մանկավարժական՝ 2, ուսումնական՝ 2, հնագիտական-ազգագրական՝ 1, գիտամանկավարժական՝ 2:

Հրատարակությունների ցանկ I. Մենագրություններ, ձեռնարկներ

1. *Դադայան Ս.Վ., Արցախի անվանի գործիչներ, Հաղորդի շրջան*, գիրք III, «Ստեփանակերտ, 2022, 232 էջ:
2. *Դադայան Ս.Վ., Արցախի անվանի գործիչներ, Ասկերանի շրջան*, գիրք IV, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2022, 240 էջ:
3. *Дадаян С.В., Политическая история Арцах-Карабаха, Реальность и вымыслы (18 - первая четверть 20 вв.)*, «Արմավ» հրատ., Երևան, 2022, 639 էջ:
4. Բալայան Վ.Ռ., *Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական ու գաղափարական դրսևորումներն Արցախում (17-րդ դարի երկրորդ կես - 2021 թվական)*, մենագրություն, Երևան, 2022, 384 էջ:

5. Балаян В.Б., *История Арцаха с древнейших времен до наших дней*, монография, Ереван, 2022, 360 с.
6. Балаян В., *История Шуши*, монография, Ереван, 2022, 184 с.
7. Հակոբյան Տ.Վ., *ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1995 թթ.)*, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2021, 70 էջ:

II. Հոդվածներ

1. Սարումյան Ն.Պ., *Արցախի Հանրապետության վարչաքաղաքական դրությունը 1991-2021թթ., Արցախի հանրապետության և Հայաստանի (Երրորդ)Հանրապետության հռչակման 30-ամյակ*, Միջազգային գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբեր 2021), ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2022, էջ 101-120:
2. Սարումյան Ն.Պ., *Ադրբեջանի կողմից կիրառվող մշակութային եղանակները քաղաքականության շարունակական գործողություններն Արցախում (համեմատական վերլուծություն)*, *Կրթամշակութային կյանքը Արցախում*: Միջազգային գիտաժողովի (Մարտ 29, 2022) նյութեր, Երևան, 2022, էջ 317-341:
3. Сарумян Н.П., Аванесян В.М., *История Арцах- Карабаха и фальсификация исторических реалий*, Проблемы стран постсоветского пространства Центральной и Юго-Восточной Европы, Сборник научных статей, Выпуск 6, Воронеж, Издательский дом ВГУ, 2022, стр. 73-88:
4. Խաչատրյան Ա.Բ., *Արցախյան հիմնահարցը թուրք-ադրբեջանական զավթողական քաղաքականության համատեքստում (1918-1920թթ.): Ադրբեջանական պատմագիտության խեղաթուրումները*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 127-143:
5. Аванесян В.М., *Франко-русские отношения и проблема политических беженцев*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 115-126 :
6. Սաֆարյան Վ.Ա., *Սոս ցյուղի վաղ քրիստոնեական համալիրի պեղումները*, Հայաստանի (Երրորդ) Հանրապետության և Արցախի Հանրապետության հռչակման 30-ամյակ: Միջազգային գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբեր, 2021), ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2022, էջ 248-263:
7. Дадаян С.В., *Республика Арцах на пути к самоопределению в контексте его историко-геополитической реалии*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, 2022, էջ 202-217:
8. Дадаян С.В., *К вопросу о легитимности Панаха как „хана,, в крепости Шуши, Թուրքական էթնիկ տարրի Շուշիի ամրոց ներթափանցելու հարցի շուրջ (проникновении тюркского элемента в крепость Шуши)*, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», թիվ 2(28), 2022, էջ 14-27:
9. Բալայան Վ.Ռ., *Դիզակի բերդապահ գյուղերը (Խծաբերդ, Սպիտակաշեն, Արփագետիկ, Հին Թաղեր, Խանձաձոր), պատմության ուրվագծեր*, Գրիգոր Նարեկացի համալսարան, «Դպրատուն», Հասարակական գիտությունների հանդես, 1(11)-2021, Ստեփանակերտ, 2021, էջ 84-96:
10. Բալայան Վ.Ռ., *Գարեգին Նժդեհը և արցախահայ պետականության պահպանման հարցը*, «Լեոնահայաստան-100», հանրապետական գիտաժողով, 2021թ. Ապրիլի 21-27, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 1(22), Երևան, 2021, էջ 34-51:
11. Բալայան Վ.Ռ., *Արցախի Հանրապետություն (1991-2021թթ.), ձեռքբերումներ, կորուստներ*, «Արցախի Հանրապետության և Հայաստանի (Երրորդ) Հանրապետության հռչակման 30-ամյակ, Միջազգային գիտաժողովի նյութեր», (Ստեփանակերտ-Երևան, 19-23-ը սեպտեմբեր, 2021), Երևան, 2022, էջ 39-61:
12. Բալայան Վ.Ռ., *Շուշեցի հայ բարերարների դերը բերդաքաղաքի կրթամշակութային կյանքի զարգացման գործում (19-րդ դար - 20-րդ դարի սկիզբ)*, «Կրթամշակութային կյանքը Արցախում» գիտաժողովի զեկույցներ, Համազգային հայ կրթական և մշակութային միություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2022, էջ 43-60:
13. Балаян М.Б., *Этническая принадлежность агванской церкви и политические спекуляции*, Պետերբուրգի հայ համայնքի կողմից կազմակերպված միջազգային առցանց գիտաժողովի զեկույցներ, տեղադրված է համապատասխան կայքում /Օրագիրը կցվում է/. <https://agatribunal.info/m-balayan-2-11-2021/>

14. Բալայան Մ.Բ., *Աղբբեջանի էթնոմշակութային ցեղասպանական քաղաքականությունը արցախյան երրորդ պատերազմի համատեքստում*, «Կրթամշակութային կյանքը Արցախում» գիտաժողովի զեկույցներ, Համագրային հայ կրթական և մշակութային միություն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան 2022, էջ 31-43:
15. Բալայան Մ.Բ., *Աղվանից եկեղեցու էթնիկ պատկանելության հիմնահարցը և արդի քաղաքական շահարկումները*, ՀՀ և ԱՀ հոչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, (Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբերի, 2021), Երևան, 2022, էջ 264-276:
16. Հարությունյան Մ.Ա., *Շուշիում 1920 թ. մարտյան եղեռնագործության պատճառները և արդի մարտահրավերները (պատմական, քաղաքական, իրավական ու ռազմական տեսանկյուններ)*, *Աղբբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)*, Միջազգային առցանց գիտաժողով՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին (Շուշի, 2020 թ., հուլիսի 15-16), զեկույցումների ժողովածու, կազ. և խմբ.՝ Մ. Ա. Հարությունյան, Երևան, 2021, էջ 127-150:
17. Հարությունյան Մ.Ա., *Նոր սերնդի պատերազմների վարման մի քանի առանձնահատկությունների մասին (2020 թ. աշնանային պատերազմի լույսի ներքո)*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 213-224:
18. Հարությունյան Մ.Ա., *Ձեզ բացակա չենք դնի*, (համահեղինակներ՝ Վ.Ռ.Բալայան, Ռ.Ա.Բալայան, Զ.Գ. Սառաջյան, Լ.Ս.Մարգարյան): Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարան, 2021, 112 էջ :
19. Հարությունյան Մ.Ա., *Արցախի և Զանգեզուրի հայ ազգաբնակչության զինված ինքնապաշտպանության պատմությունից (1918-1920թթ.)*: Վավերագրեր և հուշագրություններ, կազմ.՝ Մ.Ա.Հարությունյան, «Կաճառ» տարեգիրք, Գիրք 15(179-190), Շուշի, 2021, 256 էջ:
20. Հարությունյան Մ.Ա., *Արցախի Հանրապետության դեմ աղբբեջանա-թուրքական ագրեսիայի հետևանքները վերացնելու մի քանի ուղիների մասին*, «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները. հնարավորություններ և մարտահրավերներ». Միջազգային գիտաժողովի (12 մարտի 2022 թ. Ստեփանակերտ,) նյութերի ժողովածու, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Ստեփանակերտ, 2022, էջ 42-45:
21. Հարությունյան Մ.Ա., *Արցախի Հանրապետության պաշտպանական-անվտանգային հիմնախնդիրների մասին*, Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հոչակման 30-ամյակ, միջազգային գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբեր, 2021 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022, էջ 80-101:
22. Ավանեսյան Ի.Ն., *Կին բուժաշխատողները Արցախյան առաջին պատերազմում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 156-167:
23. Ավանեսյան Ի.Ն., *Ինքնապաշտպանական ուժերի ձևավորումը և կանանց կամավորագրումը ջոկատներին 1988-1991թթ.*, Հայաստանի (երրորդ) Հանրապետության և Արցախի Հանրապետության հոչակման 30-ամյակ: Միջազգային գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ-Երևան 19-23 սեպտեմբեր 2021), Երևան, 2022, էջ 208-224:
24. Հակոբյան Տ.Վ., *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության հոչակումը որպես արցախյան շարժման նոր փուլի ձեռքբերում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, 2022, էջ 218-227 :
25. Հակոբյան Տ.Վ., *Ռազմաքաղաքական գործընթացները Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունում (1992թ. սպրիլ)*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 228-237 :
26. Մխիթարյան Է.Մ., *Ռուս-հայկական հարաբերությունների զարգացման ակունքները ռուսական պատմագիտության մեջ (Մաս 1)*, Գրիգոր Նարեկացի համալսարանի «Դպրատուն» հանդես, թիվ 2(12), 2021, էջ 76-83:
27. Մխիթարյան Է.Մ., *Փախստականների և ներքին տեղահանված անձանց վերադարձի խնդիրը դարաբաղյան հակամարտության շրջանակներում, միջազգային իրավունքի հոլովությունում*, «Գիտական Արցախ», թիվ 4(11), 2021, էջ 104-115:
28. Մխիթարյան Է.Մ., *Ռուս-հայկական հարաբերությունների զարգացման ակունքները ռուսական պատմագիտության մեջ (Մաս 2)*, Գրիգոր Նարեկացի համալսարանի «Դպրատուն» հանդես, թիվ 1(13), 2022, էջ 76-83 :

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Մասնագիտական հոդվածների քննարկում:
2. Ուսանողների և դասախոսների աջակցությամբ «Պատմաբանների ակումբի» ստեղծում և ակտիվ գործունեության ծավալում, *դպրոց-համալսարան* կապի ամրապնդում:
3. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
4. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
5. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:
6. Ասպիրանտների և հայցորդների կողմից դասընթացների կազմակերպում:
7. Մանկավարժական ճանաչողական, գիտամանկավարժական փորձուսուցման կազմակերպում:
8. Հնագիտական-ազգագրական փորձուսուցման կազմակերպում և ղեկավարում:
9. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Ամբիոնը համագործակցում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ ԳԱԱ պատմության և հնագիտության ու ազգագրության ինստիտուտի, Գորիսի պետական համալսարանի, Վորոնեժի պետական համալսարանի հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

1. Արցախի Հանրապետության և Հայաստանի (երրորդ) Հանրապետության հռչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբեր 2021:
2. «Հետխորհրդային տարածաշրջանը ԽՍՀՄ փլուզումից 30 տարի անց» խորագրով Վորոնեժի պետական համալսարանի կողմից կազմակերպված միջազգային առցանց կլոբ-սեղան:
3. Կրթամշակութային կյանքը Արցախում: Միջազգային գիտաժողով (մարտ 29, 2022) Երևանում:
4. Կլոբ սեղան-քննարկում՝ նվիրված Շուշիի 1920թ. Մարտյան ռճագործության 102-րդ տարելիցի հիշատակին կզմակերպված 2021թ. մարտի 23-ին:
5. Կարեն Դեմիրճյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողով, Երևան, 2022:

Վերահսկողական աշխատանքներ

1. Ամբիոնի կողմից նախատեսված միջոցառումների պլանի կատարման վերահսկում տարվա կտրվածքով:
2. Դասընթացների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
3. Դասընթացների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
4. Ներամբիոնային դասալսումների անցկացում և քննարկում:
5. Թեստերի, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն և դրանց համապատասխանելիության վերահսկում ստուգումների և քննությունների համար սահմանված ընթացակարգին:
6. Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
7. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
8. Կուրսային ու ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:
9. Դասախոսների և ուսանողների փոխգործունեության ակտիվացում
10. Ամբիոնի բոլոր դասախոսների և ուսանողների կողմից էլեկտրոնային «Classroom» հարթակի յուրացման վերահսկում:

11. Դասախոսների ծանրաբեռնվածության համապատասխան առարկայական նկարագրերի ու դասախոսությունների «Classroom» հարթակում տեղադրման վերահսկում:
12. Գործիսի պետական համալսարանում ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպված գիտաժողովին ուսանողների մասնակցության ապահովում և վերահսկում 2021-2022թթ.:
13. Ասպիրանտների և հայցորդների գիտական գործունեության վերահսկում և ատեստավորում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. Ուսանողական գիտաժողով՝ նվիրված Արցախյան հիմնահարցին ու պետության հռչակմանը:
2. 2021թ. հոկտեմբերի 8-ին ֆակուլտետի պատմության բաժնի ուսանողների ակտիվ աջակցությամբ «Պատմաբանների ակումբի» ստեղծում:
3. «Պատմաբանների ակումբի»-ի կողմից համացանցում արցախյան թեմատիկայով հրապարակումների ղեկավարում և վերահսկում:
4. 2022թ. փետրվարի 29-ին հուշ-ցերեկույթ՝ նվիրված 1988 թ. Ադրբեջանի իշխանությունների կողմից հայերի նկատմամբ կազմակերպված փետրվարյան ոճրագործության նահատակների հիշատակին:
5. «Մոսկվայի և Կարսի պայմանագրերը պատմաիրավական և քաղաքական տեսանկյունից» թեմայով կլոր սեղան-քննարկում՝ մասնակցությամբ ուսանողների և դասախոսների, նվիրված նշված պայմանագրերի պատմական, իրավական, քաղաքական տեսանկյունների բացահայտումներին (17.03.2022):
6. Շուշիի 1920 թ. մարտյան ոճրագործությունը հարյուր երկու տարի անց (պատմական անդրադարձներ), գիտական ընթերցումներ (22.03.2022):
7. «Հայոց ցեղասպանությունը երեկ և այսօր» թեմայով կլոր սեղան-քննարկում՝ նվիրված Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցին:
8. «Հայոց պատմություն» առարկայից դպրոցական հանրապետական օլիմպիադայի անցկացում երկու փուլով (դեկտեմբեր 2021, ապրիլ 2022):
9. Կլոր սեղան-քննարկում՝ նվիրված Արցախյան երրորդ պատերազմի ծավալման հարցին:
10. Գիտական սեմինար՝ նվիրված 2020թ. սեպտեմբերյան պատերազմի հետևանքով զոհված և անհայտ կորած արցախցիների հիշատակին:

Իրավունքի ամբիոն

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Գևորգյան Տաթևիկ Արմենի, ի.գ.թ., ավագ դասախոս*

Իրավունքի ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները իրականացրել են 4 դոցենտ, որոնցից երկուսը ժամավճարային հիմունքներով, 7 ավագ դասախոս, 6 դասախոս, 8 ասիստենտ.

Հիմնական աշխատողներ՝

1. Գևորգյան Տաթևիկ Արմենի-ի.գ.թ., ավագ դասախոս
2. Արզումանյան Գրետա Միքայելի-ի.գ.թ., դոցենտ
3. Առուստամյան Ռիտա Սերգեյի-ի.գ.թ., դոցենտ
4. Ավանեսյան Յանա Մերսիկի-ասիստենտ
5. Զաքարյան Սոսի Հրանտի-ավագ դասախոս

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Թադևոսյան Անատոլի Վլադիմիրի-ի.գ.թ., դոցենտ
2. Դանիելյան Արարատ Աշոտի-ի.գ.թ., դոցենտ
3. Առուստամյան Տիգրան Վլադիմիրի-ի.գ.թ., ավագ դասախոս
4. Արզումանյան Էրիկ Ալեքսեյի-ի.գ.թ., ասիստենտ
5. Ամիրյան Սեյրան Գրիգորի-ավագ դասախոս
6. Հարությունյան Հասմիկ Արտյուշայի-ավագ դասախոս

7. Խաչատրյան Հասմիկ Պարֆիոնի-ավագ դասախոս
8. Հակոբյան Դավիթ Էդիկի-ավագ դասախոս
9. Օհանյան Շուրա Սուրենի-դասախոս
10. Գրիգորյան Ալիսա Ռոբերտի-դասախոս
11. Զաքարյան Տաթևիկ Աշոտի-դասախոս
12. Պետրոսյան Արայիկ Համլետի-ասիստենտ
13. Ներսեսյան Լուիզա Վաչագանի-ասիստենտ
14. Գրիգորյան Գայանե Ավետիսի-դասախոս
15. Դանիելյան Արմինե Արմենի-դասախոս
16. Ներսիսյան Գուրգեն Գառնիկի-դասախոս
17. Երիցյան Ռոման Արթուրի-ասիստենտ
18. Սուլեյմանյան Լուսինե Սանթրուրի-ասիստենտ
19. Մկրտիչյան Անի Ժիրայրի-ասիստենտ
20. Գրիգորյան Նելսոն Գարիի-ասիստենտ

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնն ունեցել է 2 ասպիրանտ ու 2 հայցորդ:

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 7778 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների հիմնական ուղղությունների

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալել է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական իրավունքի, դատավարության ուղղություններով: Ամբիոնում դասավանդում են պրակտիկ իրավաբաններ՝ դատախազներ, դատավորներ, փաստաբաններ: Նրանց պրակտիկ փորձը լավագույնս է ազդում ուսումնական գործընթացի վրա: Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, թարմացրել թեստեր:

Հրատարակությունների ցանկ

1. Գևորգյան Տ.Ա., *Հանցագործությունների բազմակիության ինստիտուտը՝ ըստ ԱՀ քրեական օրենսգրքի և ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 345-351:
2. Զաքարյան Ս.Հ., *Պետության չճանաչվածության հանգամանքը որպես մարդու իրավունքների զանգվածային խախտման լրացուցիչ գործոն*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 351-360:
3. Արզումանյան Գ.Մ., *Դատական քննության հրապարակայնությունը*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 335-345:
4. Սուլեյմանյան Լ.Ս., *Էլեկտրոնային քրեական գործ*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 360-376:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

Իրավունքի ամբիոնի առաջնահերթ նպատակը հանրապետությունում բարձրորակ և մրցունակ իրավաբան կադրեր պատրաստելն է: Այդ նպատակի նվաճմանն են միտված ամբիոնում կազմակերպված ուսումնամեթոդական աշխատանքները:

1. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
2. Մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներ:
3. Անհատական խորհրդատվությունների անցկացում:
4. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Ուսումնական գործընթացն ամբիոնն իրականացրել է եռաստիճան կրթական ծրագրերով՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա, կրթական ծրագրերը՝ առկա

և հեռակա ուսուցմամբ: Մագիստրատուրայում ուսումնական գործընթացն իրականացվել է «Քրեական իրավունք և դատավարություն» (միայն առկա) և «Քաղաքացիական իրավունք և դատավարություն (հեռակա)» ծրագրերով:

Համագործակցություն

ԱրՊՀ իրավունքի ամբիոնը համագործակցություն է հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարանի, Կարմիր խաչի միջազգային կազմակերպության և իրավապահ մարմինների հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

Վերոնշյալ համագործակցության արգասիքը իրավագիտության բաժնի ուսանողների համար կազմակերպվող դասախոսություններն են, դատախաղերը, կոնֆերանսները, կլոր սեղանները, ամբիոններում կատարվող փոխադարձ գիտական քննարկումները, պարբերաբար այցելումները իրավապահ մարմիններ:

Վերահսկողական աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի վարիչի կողմից անց են կացվել ներամբիոնային դասալսումներ, իրականացվել է ամբիոնի դասախոսների ուսումնագիտական աշխատանքների և ծանրաբեռնվածության վերահսկում, միջանկյալ քննությունների համար նախատեսված թեստերի թարմացման աշխատանքներ, արդյունքների քննարկումներ, ինքնուրույն աշխատանքների հանձնարարում, ստուգում, ավարտական, մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ կամ միջոցառումների մասնակցություններ

1. 2021թ. սեպտեմբերի 27-ին ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ, իր.գ.թ. Տաթև Գևորգյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված 44-օրյա պատերազմում նահատակված ԱրՊՀ և ԵՊՀ իրավաբան ուսանողների հիշատակին:
2. 2021թ. հոկտեմբերի 15-ին ԱրՊՀ իրավունքի ամբիոնի և ԱՀ դատախազության համագործակցության շրջանակներում տեղի ունեցավ ուսանողների հանդիպումը գլխավոր դատախազ, իրավունքի ամբիոնի դասախոս Գ. Ներսիսյանի հետ:
3. 2021թ. հոկտեմբերի 15-ին իրավունքի ամբիոնը 1-ին կուրսեցիների հետ, կուրսդեկ Ս. Զաքարյանի գլխավորությամբ, այցելեց Ստեփանակերտի գիշերօթիկ դպրոց:
4. 2021թ. դեկտեմբերի 9-ին՝ ԱՀ Սահմանադրության օրվա նախօրեին, ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյանի նախաձեռնությամբ, Ստեփանակերտի հ. 3 հիմնական դպրոցում կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Սահմանադրության օրվան:
5. 2021թ. դեկտեմբերի 10-ին ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի կողմից կազմակերպված կլոր-սեղան քննարկմանը մասնակցել է նաև իրավունքի ամբիոնը, որի դասախոսներ իր.գ.թ. Ա. Դանիելյանը և Յ. Ավանեսյանը հանդես են եկել միջոցառման թեմային առնչվող ելույթներով:
6. 2021թ. դեկտեմբերի 15-ին Արցախի պետական համալսարանում իրավունքի ամբիոնի համագործակցությամբ Մորբոնի համալսարանի Արևելյան քրիստոնեության իրավունքների և հաստատությունների ամբիոնի իրավունքի պատմության պրոֆեսոր, EPHE-ի կրոնական գիտությունների բաժնի ուսումնական տնօրեն Արամ Մարտիրոսեանը հանդես է եկել առցանց դասախոսությամբ՝ «Հայ կանոնական իրավունքի քաղաքական-կրոնական հիմնախնդիրները. պատմությունից մինչև մեր օրերը» թեմայով:
7. 2021թ. դեկտեմբերի 25-ին իրավունքի ամբիոնի և «իրավագիտություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողների կողմից, կուրսդեկ Մոսի Զաքարյանի նախաձեռնությամբ, մեր սահմանապահ զինվորներին ուղարկվեցին ծանրոցներ, զինվորներին ոգևորող բացիկներ և բարեմաղթանքներ՝ գալիք տոներին ընդառաջ:

8. 2022թ. փետրվարի 17-ին ԱրՊՀ իրավունքի ամբիոնի և ԼՂՀ-ում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ երկար տարիների համագործակցության շրջանակներում «իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանողների համար հերթական դասընթացներ են կազմակերպել ԿԽՄԿ ներկայացուցիչներ Վ. Ավանեսյանը և Է. Մուսայելյանը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ 1863թ. փետրվարի 17-ի հիմնադրման կապակցությամբ, ԿԽՄԿ առաքելության և միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ:
9. 2022թ. փետրվարի 18-ին իրավունքի ամբիոնը, ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Ռիտա Առուստամյանի նախաձեռնությամբ, կազմակերպել է գիտական ընթերցումներ՝ նվիրված 2017թ. փետրվարի 20-ին հանրաքվեով ընդունված Սահմանադրության արդի հիմնախնդիրներին:
10. 2022թ. ապրիլի 16-ին, Սուրբ Զատիկի տոնին ընդառաջ, ԱրՊՀ *իրավագիտություն* մասնագիտության 1-ին կուրսն այցելել է Գանձասար՝ կուրսղեկ Ս. Զաքարյանի գլխավորությամբ:
11. 2021թ. ԱրՊՀ իրավագիտության մասնագիտության ուսանողների թիմը (ղեկ. Ռ.Երիցյան) Աղվերանում մասնակցել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպված «Քրեական իրավունք և դատավարություն» մրցույթ-դատախաղին:
12. 2021թ. ապրիլի 29-ից մայիսի 1-ը ԱրՊՀ իրավագիտության մասնագիտությամբ ուսանողների թիմը ՀՀ-ում մասնակցել է ՄՄԻ վերաբերյալ դատախաղ-մրցույթին և վերադարձել հաղթանակով:
13. 2022թ. մայիսի 9-ից մեկ շաբաթով, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի և ԱրՊՀ իրավունքի ամբիոնի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում, ԱրՊՀ այցելեց ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պատվիրակության գիտամանկավարժական անձնակազմը՝ ֆակուլտետի ղեկան, ակադեմիկոս պրո Դազինյանի գլխավորությամբ:
14. 2022թ. մայիսի 27-ին Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ մեկնարկել է դասախոսությունների շարք, որը վարում էր միջազգային իրավունքի դոկտոր Գոռ Սամվել Մովսիսյանը:
15. 2022թ. հունիսի 21-23-ը Ամբիոնայի հայ փաստաբանների միության հետ ԱրՊՀ իրավաբանական կլինիկայի համագործակցության շրջանակներում Երևանում տեղի ունեցավ հանդիպում-քննարկում, որին Արցախի պետական համալսարանից մասնակցում էր նաև իրավունքի ամբիոնի վարիչ, իր.գ.թ. Տաթև Գևորգյանը:

Կերպարվեստի ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Ղալայան Լավրենտ Բահաթուրի, ԱրՊՀ պրոֆեսորի պաշտոնակատար

Ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 1 պրոֆեսոր, 2 ավագ դասախոս, 1 դասախոս, 1 ասիստենտի պաշտոնակատար, ժամավճարային հիմունքներով աշխատող 1 ասիստենտ:

Հիմնական աշխատողներ՝

1. Ղալայան Լավրենտ Բահաթուրի-պրոֆեսորի պաշտոնակատար
2. Գասպարյան Ալեքսանդր Ավագի-ավագ դասախոսի պաշտոնակատար
3. Ղալայանց Մարինե Աբրիկի-ավագ դասախոսի պաշտոնակատար
4. Ծատրյան Արամ Ալեքսանդրի-դասախոսի պաշտոնակատար
5. Բաղդասարյան Սյուզաննա Արմոյի-ասիստենտ

Ժամավճարային հիմունքով աշխատող՝

Բարսեղյան Արկադի Մուշեղի-ասիստենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 4326 ժամ:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Զրույցներ արդիական խնդիրների շուրջ:
2. Նոր դասընթացների անցկացման պահել վերահսկողություն:
3. Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:

4. Ուսանողների հետ տարվող անհատական խորհրդատվություններ:

5. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Ամբիոնը համագործակցում է Հայաստանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հետ:

Վերահսկողական աշխատանքներ

1. Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:

2. Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:

3. Վերահսկում՝ ըստ ստուգումների և քննությունների համար սահմանված ընթացակարգի:

4. Ավանդական ստուգարքների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:

5. Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:

6. Դասընթացային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1. 2021-2022 ուսումնական տարում դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են ցուցահանդեսներ:

2. 2021-2022 ուսումնական տարում դասախոսները մասնակցել են ՀՀ-ում և ԱՀ-ում կազմակերպված ցուցահանդեսներին:

3. Ամառային՝ պլեներային փորձուսուցման հաջողված աշխատանքների ցուցադրում կրթական ծրագրի ուսանողներին:

4. Հաջողված ակադեմիական աշխատանքների ցուցադրում (գծանկար, գունանկար, կոմպոզիցիա):

5. Դասախոսների աշխատանքների ցուցադրում կրթական ծրագրի ուսանողներին (գրաֆիկա, քանդակ, գծանկար, գունանկար, կոմպոզիցիոն աշխատանքներ):

6. Առանձին ուսանողների անհատական նկարների ցուցադրում:

7. Միասնական ցուցահանդեսների կազմակերպում:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ Մանգասարյան Ռուզաննա Յակովի, տ.գ.թ.դոցենտ **Ֆակուլտետի մասնագիտությունները և կրթական ծրագրերը**

Հաշվետու տարում շարունակվել են տնտեսագիտության ֆակուլտետի ռազմավարական ծրագրով նախատեսված, խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքները, որոնք միտում են ֆակուլտետի առաքելության իրականացմանը՝ պատրաստել աշխատանքի շուկայի պահանջարկին համահունչ, մասնագիտական գիտելիքներով և հմտություններով մրցունակ, համամարդկային արժեքները ճանաչող, գիտելիքահենք տնտեսության կայացմանն աջակցող մասնագետներ՝ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Կառավարում (ըստ ոլորտի)», «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում և հարկում» (բակալավորիատ), «Ֆինանսներ», «Կառավարում» (մագիստրատուրա) կրթական ծրագրերով:

Ֆակուլտետի կառուցվածքը և կառավարման համակարգը

Հաշվետու ուստարում ֆակուլտետում կառուցվածքային փոփոխություն տեղի չի ունեցել: Գործում է 2 ամբիոն:

Ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերը կազմակերպվել են ըստ քննարկման ենթակա հարցերի կարևորության:

Հաշվետու տարում ֆակուլտետում հետևողական աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի բարելավման, գիտահետազոտական գործունեության ընդլայնման, ուսանողական միջոցառումների ակտիվացման ուղղություններով:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

2020-2021 ուստարում ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը կատարել է իր պարտականությունները և՛ ուսումնական, և՛ գիտական աշխատանքների գծով՝ ցուցաբերելով անհրաժեշտ աշխատանքային և կատարողական կարգապահություն:

Ֆակուլտետի ընդհանուր ծանրաբեռվածությունը կազմել է 14 338 ժամ, որի իրականացումը վերահսկվել է դեկանի և ամբիոնների վարիչների կողմից: Լրացուցիչ պարապմունքների միջոցով դասախոսները լրիվությամբ կատարել են 2021-2022 ուստարվա ուսումնական բեռնվածքը:

Հաշվետու տարում բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների թիվը կազմել է 301, որը նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ քիչ է 34-ով: Մագիստրատուրայում սովորողների թիվը 28 է, որը նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ նվազել է 29-ով:

Հաշվետու տարում բակալավրի առկա և հեռակա ուսուցման համակարգերում շրջանավարտների քանակը կազմել է 88, որից 27-ը՝ մագիստրատուրայում: Նախորդ ուսումնական տարվա ցուցանիշների համեմատությամբ դիտվել է կրճատում 24 տոկոսով:

Գերազանցության դիպլոմ է ստացել 25 շրջանավարտ, որից բակալավրում՝ 10, մագիստրատուրայում՝ 15:

Ուսուցումը փոփոխվող միջավայրի պայմաններին համահունչ դարձնելու նպատակով ամբիոնները պարբերաբար վերանայում և արդիականացնում են դասընթացների ուսումնական ծրագրերը: Ամբիոններում նաև իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների համապատասխանեցմանը ԱՀ հետպատերազմյան տնտեսության ժամանակակից խնդիրներին:

Բակալավրի ուսանողների վերլուծական մտքի զարգացման նպատակով, առանձին դասընթացների դասախոսություններում ներառվում են նաև կիրառական բնույթի խնդիրներ, որոնց դիտարկման ընթացքում օգտագործվում են պաշտոնական-տնտեսագիտական տվյալներ: Ստուգումների արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ հիշյալ թարմացումները տվել են իրենց արդյունավետությունը:

Առաջին կիսամյակում, պայմանավորված համավարակով, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դասավանդումն իրականացվել է առցանց եղանակով՝ Claassoom հարթակի օգնությամբ: Կարող ենք փաստել, որ առցանց ուսուցումն ունի որոշակի առավելություններ,

առանձնապես մագիստրատուրայի կրթական ծրագրի շրջանակում: Կարծում ենք, որ բավականին հարմար է տնային հանձնարարությունները, ինքնուրույն աշխատանքի գործնական առաջադրանքները հիմնականում ստուգել էլեկտրոնային հարթակում գոյություն ունեցող գործիքակազմերով: Այսպես տնտեսվում է լսարանային ժամանակը, որտեղ թեմատիկ վերլուծությունների ու քննարկումների համար ավելի շատ ժամանակ է մնում:

Այդ առումով, ուսուցման ավանդական և առցանց ձևերը լրացնում են միմյանց:

Հաշվետու տարում ամբիոնները մեծ աշխատանք են կատարել նաև *ուսումնական, արտադրական և գիտամանկավարժական* փորձուսուցումները ըստ հաստատված ժամանակացույցի կարգավորելու և դրանց նկատմամբ վերահսկողությունը ուժեղացնելու համար:

Միջոցառումներ

Ա. Կազմակերպվել է ֆակուլտետի առաջին կուրսեցիների երդման արարողությունը:

Բ. Ֆակուլտետի ուսանողական խորհրդի անդամները հանդիպել են առաջին կուրսեցիներին, նրանց ծանոթացրել դասընթացների բնույթին, գնահատման մեթոդաբանությանը և քննությունների անցկացման ընթացակարգին:

Գ. Ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպվել է սեմինար-պարապմունք՝ հետազոտական աշխատանք կատարելու հմտություններն ու իմացությունները զարգացնելու նպատակով: Միջոցառումը կազմակերպվել է ֆակուլտետի ՌԻԳԸ և ՌԻՄ նախագահների համատեղ ջանքերով:

Դ. Ֆակուլտետի տարբեր մասնագիտությունների ուսանողների հետ անց է կացվել ինտելեկտուալ խաղ, որի նպատակն էր մասնակիցներին ներգրավել ուսանողական ակտիվ կյանքին, նոր գիտելիքներ հաղորդել, բարձրացնել նրանց ինտելեկտուալ կարողությունները:

Ե. Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է ինտելեկտուալ-ժամանցային «Այլ կերպ» խաղ, որին մասնակցել են տարբեր կուրսերից հավաքական թիմեր: Նպատակն էր ստուգել ուսանողների իմացության աստիճանը մասնագիտական տերմինների յուրացման ուղղությամբ:

Ջ. Ֆակուլտետում *տնտեսագիտության տեսության և կառավարման, ֆինանսահաշվային* ամբիոնների համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է մասնագիտական օլիմպիադա, որին մասնակցել են բակալավրի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողները:

Ը. Կազմակերպվել է 2021-2022 ուստարվա շրջանավարտների դիպլոմների հանձնման արարողություն, որին ներկա էին ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գ. Սահակյանը, ամբիոնների վարիչներ և ուսխորհրդի անդամներ:

Ը. Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է «Ինչպե՞ս գրել գիտական հոդված» խորագիրը կրող սեմինար-պարապմունք:

Թ. Ֆակուլտետի ուսանողները մասնակցել են ԱրՊՀ-ում ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Մանասերյանի դասախոսությանը՝ նվիրված տնտեսական անվտանգությանն ու դիվանագիտությանը:

Ճ. Ուսանողները մասնակցել են Հայաստանի ամերիկյան համալսարանի կազմակերպած «Բիզնես Մոդել Կանվաս» դասընթացին:

Ի. Ուսանողները մասնակցել են «Ղուկաս Քորփորեյշն» ՓԲԸ-ի կազմակերպած հաշվապահական հաշվառման դասընթացներին:

Ինքնավերլուծություն

Ֆակուլտետի գործունեության ուժեղ կողմերն են.

- արդյունավետ և թափանցիկ վերահսկողական աշխատանքների իրականացում և կարգապահություն.

- *բուհ-գործատու* համագործակցության ամրապնդում և այդ ուղղությամբ տարաբնույթ միջոցառումների իրականացում.

- ԱՀ սոցիալ-տնտեսական զարգացման և կրթական համակարգին առնչվող հիմնախնդիրների շուրջ գիտահետազոտական աշխատանքների ծավալում.

- ներհամալսարանական և արտահամալսարանական գիտահետազոտական միջոցառումներին ուսանողների ակտիվ և պատշաճ մակարդակով մասնակցություն.
 - ՄԿԾ-ներում ներառված մասնագիտական դասընթացներից ստացված գիտելիքների ամփոփումը գիտական ընթերցումներով, մրցույթներով, խմբային աշխատանքներով.
 - առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն.
 - բարձր առաջադիմությամբ և վերլուծական մտքով աչքի ընկնող ուսանողների առկայություն.
 - մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներում ժամանակի կրթական պահանջի հաշվառումը և ուսանողության կարծիքի կարևորումը.
 - տնտեսության իրական հատվածից փորձառու և անհրաժեշտ գիտական կարողություններով մասնագետների ներգրավումը ուսումնական գործընթացին:
- Ֆակուլտետին գործունեության թույլ կողմերն են՝**
- դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների բարելավման պահանջը, որը հաղթահարելի է.
 - ✓ դասախոսների կողմից մենագրությունների, ուսումնական ձեռնարկների, հոդվածների տպագրության աճով, էլեկտրոնային դասախոսությունների ժողովածուների պատրաստումով,
 - ✓ հանրապետությունից դուրս վերապատրաստման դասընթացների կազմակերպումով,
 - ✓ դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման ժամանակակից կրթափորձի մշտապես ուսումնասիրությամբ՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:
 - դասախոսական կազմի տարիքային սահմանը (դասախոսների միջին տարիքը 48 է). ֆակուլտետի շրջանավարտների մեծամասնությունը նախընտրում է գործունեության այլ ոլորտներ՝ հաշվի առնելով գիտական բնագավառի բարդ և աշխատատար լինելը.
 - կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման անկատարությունը.
 - արտաքին համագործակցության թույլ կապերը:

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2:

Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոն

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Մանգասարյան Ռուզաննա Յակովի, տ.գ.թ., դոցենտ*

Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնում ուսումնասիրվարժական և գիտական աշխատանքները 2021 – 2022 ուսումնական տարում իրականացրել են 7 դոցենտ, որից վեցը՝ ժամավճարային հիմունքներով աշխատող, 1 տ.գ.թ.՝ դասախոս (ժամավճարային հիմունքներով աշխատող), 3 ավագ դասախոս, 1 դասախոս և 3 ասիստենտ, որից 2-ը՝ ժամավճարային հիմունքներով աշխատող:

Հիմնական աշխատողներ՝

1. Իշխանյան Իրինա Հովիկի-դոցենտ, տ.գ.թ.
2. Գասպարյան Անյուտա Արծրունու-ավագ դասախոսի պաշտոնակատար
3. Հայրապետյան Ադա Խանտիի-ավագ դասախոսի պաշտոնակատար
4. Իշխանյան Գրիգորի Հովիկի-ավագ դասախոսի պաշտոնակատար
5. Հովսեփյան Կարեն Ալեքսանդրի-դասախոս
6. Խաչատրյան Մարիաննա Կամոյի-ասիստենտ

Ժամավճարային հիմունքով աշխատողներ՝

1. Մինասյան Մանուշ Մառլեստի-տ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
2. Աղաջանյան Դավիթ Էդուարդի-տ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
3. Հակոբյան Տիգրան Սեյրանի -տ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
4. Բեգլարյան Լիլիկ Մխիթարի-տ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար
5. Վերդյան Տաթև Վլադիմիրի-տ.գ.թ., դասախոս
6. Սարգսյան Սերգեյ Սերգեյի-ավագ դասախոսի պաշտոնակատար
7. Ադամյան Արուսյակ Սերգեյի-ասիստենտ
8. Զարգարյան Մասիս Արտակի-ասիստենտ
9. Պարսյան Սուրեն Հակոբի-տ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար

Համատեղությամբ աշխատող

Մանգասարյան Ռուզաննա Յակովի-դոցենտ, տ.գ.թ.

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 7993 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարած գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ամբիոնն իր գիտական ուսումնասիրությունները ծավալել և այժմ էլ ծավալում է Արցախի Հանրապետության սոցիալ – տնտեսական հիմնախնդիրների շուրջ՝ կազմակերպելով գիտական բանավեճեր, կլոր սեղաններ, գիտական ընթերցումներ՝ ներկայացնելով գիտական հոդվածներ, տարաբնույթ միջոցառումներ (մասնագիտական ինտելեկտուալ խաղեր):

Ամբիոնի դասախոսները տպագրել են հոդվածներ, կազմել մասնագիտական դասընթացների ուղեցույցներ, ծրագրեր, թեստեր, էլեկտրոնային տարբերակով դասախոսություններ:

Հրատարակությունների ցանկ

1. Մանգասարյան Ռ.Յա., *Մարդկային կապիտալի զարգացման արդի միտումները*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021. Ստեփանակերտ, էջ 404 -418:
2. Մանգասարյան Ռ.Յա., Բեգլարյան Լ.Ս., *Ներկա տնտեսական պարադոքսը, որպես պատերազմի հետևանք*, Միջազգային գիտաժողով «(Նորակազմ) չճանաչված պետությունները պատերազմից հետո. Խնդիրները ու դրանց լուծման ուղիները», 2021. Ստեփանակերտ, էջ 117-126:
3. Մինասյան Մ.Ս., *Կենսանվագագույն շեմի ապահովման հիմնախնդիրը ԱՀ-ում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021. Ստեփանակերտ, էջ 419 -435:
4. Աղաջանյան Դ.Է., *Антикризное управление на предприятиях в период кризиса*, III Всероссийская научно-практическая конференция с международным участием «Социально-экономические и финансовые аспекты развития Российской Федерации и ее регионов в современных условиях», 2022. Грозный, стр. 183-186:
5. Խաչատրյան Մ.Կ., Ավետիսյան Մ.Ս., *Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերը և դրանց արդյունքները*, «Գիտական Արցախ», 2022, Երևան, էջ 174 -187:
6. Վերդյան Տ.Վ., *Էներգետիկ համակարգի արդյունավետության բարձրացումը որպես ԱՀ տնտեսության անվտանգության երաշխիք*, «Այլընտրանք գիտական հանդես», 4/2021, Երևան, էջ 133-140:
7. Վերդյան Տ.Վ., Սարգսյան Գ.Վ., *Անձնակազմի կառավարման մշակույթի իրագործման առանձնահատկությունները և անհրաժեշտությունը*, «Տարածաշրջան և աշխարհ», գիտավերլուծական հանդես, 4/2022, Երևան, էջ 144-146:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Առաջին և երկրորդ կիսամյակների դասապարապմունքների և ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպում:

- 2.Քննարկումներ հետպատերազմյան Արցախի սոցիալ -տնտեսական արդիական խնդիրների շուրջ:
- 3.Դասախոսների կողմից գիտական սեմինարների և ընթերցումների կազմակերպում և ամփոփում (2 կլոր սեղան, 5 գիտական ընթերցում):
- 4.Մասնագիտական հոգվածների շուրջ քննարկումներ (7 հոգված):
- 5.Ուսանողների գիտական աշխատանքների ղեկավարում:
- 6.Մագիստրանտների հետ գիտական սեմինարների անցկացում:
- 7.Ուսանողների հետ անհատական խորհրդատվությունների անցկացում:
8. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:

Համագործակցություն

Ամբիոնը աշխատանքներ է կատարում գիտահետազոտական նախագծերում պրոֆեսորադասախոսական կազմը ներգրավելու համար:

Այդ առումով, սերտացվում են կապերը ՀՀ գործընկերների հետ և իրականացվում համատեղ աշխատանքներ: Ամբիոնը մշտական կապ ունի Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի հետ: Այդ համագործակցությունն արտահայտվում է մասնագիտական նոր գրականության, ուսումնական պլանների ձեռք բերման համեմատության նպատակով, մասնագետների հրավիրման և դասախոսությունների վարման, տարբեր արդիական թեմաների շուրջ միջազգային գիտաժողովների մասնակցության միջոցով:

Վերահսկողական աշխատանքներ

- 1.Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության կատարման վերահսկում:
- 2.Դասախոսների գիտական, ուսումնամեթոդական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկում:
- 3.Ներամբիոնային դասալսումների անցկացում և քննարկում (4 դասալսում):
- 4.Փոխադարձ դասալսումների անցկացում և քննարկում (2 դասալսում):
- 5.Թեստերի, հարցաշարերի, տոմսերի փորձաքննություն և դրանց համապատասխանելիության վերահսկում՝ ըստ ստուգումների և քննությունների համար սահմանված ընթացակարգի:
- 6.Ավանդական ստուգաքնների անցկացման վերահսկում՝ ըստ դրանց անցկացման ու գնահատման մեթոդաբանության:
- 7.Ինքնուրույն աշխատանքների ստուգման վերահսկում՝ ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի:
- 8.Ուսումնական պարապմունքների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերահսկում:

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

1.Ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ռ. Յա. Մանգասարյանի նախաձեռնությամբ «Միկրոտնտեսագիտություն» դասընթացի շրջանակում «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3 - րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում *բիզնես ոլորտի հիմնախնդիրները* թեմատիկայի շուրջ:

2. Ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ի. Հ. Իշխանյանի և ավագ դասախոս Գ. Հ. Իշխանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են ուսանողական գիտական ընթերցումներ.

- ղեկտեմբեր ամսին «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 3 - րդ կուրսի և «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 4 – րդ կուրսի ուսանողների հետ՝ «Առանձին երկրների դերը համաշխարհային տնտեսության համակարգում», «Մարքեթինգը և զբոսաշրջության ֆեռմենը» թեմատիկայի շուրջ,

- մայիս ամսին «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 2 - րդ կուրսի ուսանողների հետ՝ «Հետաքրքիր մարքեթինգ» թեմատիկայի շուրջ:

3. Ապրիլ ամսին ամբիոնի՝ ՀՀ - ից հրավիրված մասնագետ, դոցենտ, տ.գ.թ. Ս.Ն.Պարսյանի մասնակցությամբ տեղի է ունեցել կլոր-սեղան քննարկում՝ *հետպատերազմյան ԱՀ-ում բիզնեսի կազմակերպման, բիզնես մտածելակերպի ձևավորմանն ու զարգացման* թեմատիկայի շուրջ:

4. Ապրիլ ամսին ամբիոնի՝ ՀՀ - ից հրավիրված մասնագետ, դոցենտ, տ.գ.թ. Ս. Ն. Պարսյանը ներկայացրել է ընդլայնված դասախոսություն տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներին:

5. Ամբիոնի ասիստենտ Մ. Կ. Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են ուսանողական գիտական ընթերցումներ.

- նույնաբեր ամսին «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3 - րդ կուրսի ուսանողների հետ՝ «Սոցիալական մենեջմենթ» դասընթացի շրջանակում, «Սոցիալական հիմնախնդիրներ» թեմատիկայի շուրջ,

- ղեկավարել ամսին «Ֆինանսներ» մասնագիտության 4 - րդ կուրսի ուսանողների հետ՝ «Արհեստական բանականության կիրառումը տնտեսության տարբեր ոլորտներում» թեմատիկայի շուրջ:

6. Ապրիլ ամսին ամբիոնի դասախոսները կազմակերպել են հանդիպում – քննարկում տարածաշրջանի արդի տնտեսական զարգացումների շուրջ:

7. Ներքոհիշյալ ուսանողները մասնակցել են ԱրՊՀ՝ 44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված ուսանողական գիտաժողովին.

- Մարգարյան Սյուզաննա – «Մարդկային կապիտալի կառավարման արդի խնդիրները ԱՀ-ում»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան:

- Զաքարյան Իլոնա – «ՓՄՁ գործածության արդի հիմնախնդիրները ԱՀ-ում»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան:

- Դավթյան Լուսինե – «Ժողովրդագրական քաղաքականության արդի մարտահրավերները»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան:

- Գրիգորյան Զուլիետա – «Սոցիալական քաղաքականության դերը տնտեսությունում»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան:

- Թադևոսյան Փառանձեմ – «Բնակչության բարեկեցության բարելավման արդի հիմնախնդիրները ԱՀ-ում»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան:

- Ավանեսյան Աննա – «Գլոբալացման պայմաններում միջազգային զբոսաշրջության զարգացման միտումները և պետական կարգավորումը»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Բ. Իշխանյան:

- Հովսեփյան Նոննա – «Միջազգային տնտեսական ինտեգրացումը որպես համաշխարհային տնտեսության կայուն զարգացման նախադրյալ»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Բ. Իշխանյան:

- Ավանեսյան Անի – «ԱՀ-ում հյուրանոցային ինդուստրիայի զարգացման խնդիրները, հեռանկարները արդի պայմաններում»: Գիտ. դեկ.՝ ավագ դասախոս Ա. Սիմոնյան:

- Բաղդյան Լուսինե – «Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ԱՀ-ում արդի պայմաններում»: Գիտ. դեկ.՝ ասիստենտ Մ. Խաչատրյան:

Ֆինանսահաշվային ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Ավանեսյան Նարինե Հրանտի, տ.գ.թ., դոցենտ

Ֆինանսահաշվային ամբիոնում ուսումնամանկավարժական և գիտական աշխատանքները 2021-2022 ուսումնական տարում իրականացրել են 1 տ.գ.դ., պրոֆեսոր՝ Ժամավճարային հիմունքներով, 4 տ.գ.թ., դոցենտ, որից 2-ը՝ Ժամավճարային հիմունքներով, 1 ս.գ.թ., դոցենտ, 1 ավագ դասախոս, 2 դասախոս՝ 1-ը՝ Ժամավճարային հիմունքներով աշխատող, 3 ասիստենտ, 2-ը՝ Ժամավճարային հիմունքներով աշխատող:

Հիմնական աշխատողներ՝

1. Ավանեսյան Նարինե Հրանտի -տ.գ.թ., դոցենտ
2. Հայրիյան Եվգենյա Ռազմիկի-տ.գ.թ., դոցենտ
3. Մարգարյան Գոհար Գավրուշի-ավագ դասախոս
4. Ալեքսանյան Արևիկ Արվիդի- ավագ դասախոսի պաշտոնակատար
5. Գրիգորյան Գարիկ Շամիրի-դասախոս

6. Թաղնույան Միհրան Դարվինի-ասիստենտ

Ժամավճարային հիմունքներով աշխատողներ՝

1. Մաթևոսյան Աշոտ Վարագդատի-տ.գ.դ., պրոֆեսոր
2. Ներսիսյան Կարեն Արմոյի-տ.գ.թ., դոցենտ
3. Ղահրամանյան Հակոբ Շահրամանի-տ.գ.թ., դոցենտ
4. Խաչատրյան Վարդուհի Արեգի-դասախոս
5. Միքայելյան Սիլվա Մանվելի-ասիստենտ
6. Մկրտչյան Մանուշակ Վլադիմիրի-ս.գ.թ., դոցենտ
7. Շամխալովա Էլինա Սերգեյի-ասիստենտ

Ամբիոնի ընդհանուր ծանրաբեռնվածությունը կազմել է 5903 ժամ:

Ամփոփում ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ընդհանուր ուղղությունների

Ֆինանսահաշվային ամբիոնի հիմնական թեմատիկ ուղղվածությունն էր՝ ֆինանսական կառավարման, հաշվառման վերլուծության բարելավման ուղիները միկրո- և մակրո մակարդակում:

Հրատարակությունների ցանկ

1. Ավանեսյան Ն.Հ., *ANALYSES OF THE ACTIVITY OF AR HEALTHCARE SYSTEM*, «Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր», 4(18)/2021, Ստեփանակերտ, 2021, էջ 53-62:
2. Հայրիյան Եվ.Ռ., *Ֆինանսական ծառայությունների հասանելության ապահովման հիմնախնդիրները ԱՀ-ում*, «Գիտական Արցախ» N3(10), Երևան, 2021, էջ 276-284:
3. Հայրիյան Եվ.Ռ., *Թվային էկոհամակարգի դերը ՀՀ տնտեսության զարգացման գործում*, Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարավօտոմի աշխարհում միջազգային գիտաժողովի նյութերի հավաքածու, Երևան, 2022, էջ 287-296:
4. Ալեքսանյան Ա.Ա., *ՀՀ բյուջետային եկամուտների և մակրոտնտեսական այլ ցուցանիշների միջև փոխկապվածության վերլուծությունը*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2/2021, Ստեփանակերտ, էջ 386-397:
5. Ալեքսանյան Ա.Ա., *Արցախի Հանրապետության վարկային պորտֆելի կառուցվածքը հետապնդողական շրջանում*, «Այլընտրանք գիտական հանդես», 4/2021, 2021, էջ 42-49:
6. Ալեքսանյան Ա.Ա., *Interrelation between the indicators of the mortgage lending market of the Republic of Armenia*, «Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր», 1/19/ 2022, էջ 100-106:
7. Ալեքսանյան Ա.Ա., *Հիփոթեքային վարկավորման ֆինանսավորման մեխանիզմների ընդլայնման ուղիները ՀՀ-ում*, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 1/2022, Ստեփանակերտ, էջ 79-89:
8. Ալեքսանյան Ա.Ա., *Բնակարանային հիփոթեքային վարկավորման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում*, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2022, էջ 352-363:
9. Զաքարյան Մ.Է., *Հարկային վարչարարության իրականացման միջազգային փորձը*, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր», հումանիտար և հասարակական գիտություններ, Վանաձոր, 2022, էջ 346-362:

Ուսումնամեթոդական աշխատանքներ

1. Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում բոլոր դասախոսները լրամշակել են էլեկտրոնային թղթապանակները, որտեղ տեղադրված են աշխատողների CV-ները, կատարած աշխատանքների հաշվետվությունները, ինքնավերլուծությունը, ուստարվա աշխատանքային պլանները, ղեկավարվող հետազոտական ուսումնական աշխատանքների տվյալների ձևաթուղթը, ներկայացրել են առարկայական փաթեթներ, որոնց մեջ տեղայնացվել են առարկայական նկարագրերը, դասախոսությունները և էլեկտրոնային գրականությունը :

2. Ամբիոնում իրականացվել են աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են եղել դասախոսների կողմից գիտական ընթերցումների անցկացմանը և քննարկմանը, մասնագիտական հոդվածների քննարկմանը, ուսանողների գիտական աշխատանքների (հոդվածների) ղեկավարմանը, մագիստրանտների հետ անցկացվող գիտական սեմինարներին:
3. Ամբիոնի կողմից շարունակվում է ասպիրանտների ատեստավորման և ատենախոսությունների պարբերական քննարկման գործընթացը: Մագիստրանտները ակտիվորեն ներգրավված են գիտամանկավարժական փորձառության գործընթացում, ինչի համար ամբիոնում սահմանվել է աշխատանքային գրաֆիկ:
4. Ամբիոնային նիստերը կազմակերպվել են ըստ քննարկման ենթակա հարցերի կարևորության, հաստատվել են ինչպես ընթացիկ, կիսամյակային, այնպես էլ ամփոփիչ ատեստավորման հարցաշարերը:
5. Համալսարանում ներդրված Google for Education կրթական էլեկտրոնային համակարգում ամբիոնի հաշվետու ուստարվա էլեկտրոնային դասընթացների ստեղծում՝ հրավիրելով դասընթացի դասախոսին, համապատասխան ուսանողական խմբին, ամբիոնի վերահսկողին, ՈԻԳՎ բաժնին:
6. Առարկայական նկարագրերի հաստատում/վերահաստատում և տեղադրում:

Համագործակցություն

Համագործակցություն՝ ՀՊՏՀ ֆինանսների, ՀՊՏՀ կառավարչական հաշվառման ամբիոնների, «Ֆիդես Հիփոթեքային Ընկերություն» վարկային կազմակերպության ՓԲԸ-ն և Ստեփանակերտի Վ. Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի հետ:

Գիտահետազոտական աշխատանքներ

Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները և կրթական ծրագրերի ուսանողները պարբերաբար մասնակցել են ՀՀ և ԱՀ կազմակերպվող գիտաժողովներին:

Վերահսկողական աշխատանքներ

Ամբիոնը 2021-2022 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում լրիվությամբ իրականացրել է համապատասխան ուսումնական պլաններից, առարկայական նկարագրերից, աշխատանքային պլաններից բխող բոլոր աշխատանքները:

Բոլոր դասախոսները բարեխղճորեն և ժամանակին կատարել են իրենց վրա դրված պարտականությունները (հաճախումներ, դասախոսություններ, քննություններ, ստուգարքներ, սեմինարներ, խորհրդատվություններ):

Ամբիոնի կողմից անցկացված միջոցառումներ

- 1.19.11.2021-կազմակերպվել է «Միջազգային խնայողության օր» ուսանողական գիտաճանաչողական ընթերցումներ՝ հեռավար տարբերակով (կազմակերպիչ՝ տ.գ.թ., դոցենտ Ն. Ավանեսյան):
2. 13.12.21 -«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագրի մագիստրատուրայի 1-ին կուրսում կազմակերպվել է գիտական ընթերցումներ՝ նվիրված «ԱՀ ֆինանստնտեսական արդի հիմնախնդիրները և բարելավման ուղիները» թեմային (կազմակերպիչ՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Ավանեսյան):
- 3.22.12.2021- «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3-րդ կուրսում կազմակերպվել են «Ժամանակակից կազմակերպություններում անձնակազմի կառավարման հիմնախնդիրները» դասընթացի շրջանակներում գիտական քննարկումներ (կազմակերպիչ՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Ավանեսյան):
- 4.06.04.2022- «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողները «Ֆինանսական պլանավորում և կանխատեսում» դասընթացի շրջանակներում մշակել են գործարար գաղափարներ, որոնք հաջողությամբ ներկայացվել են (կազմակերպիչ՝ տ.գ.թ., դոցենտ Եվ. Հայրիյան):
- 5.16.12.2021-կազմակերպվել է մրցույթ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3-րդ կուրսում «Ֆինանսական հաշվառում» դասընթացի շրջանակներում (կազմակերպիչ՝ ավագ դասախոս Գ.Սարգսյան):

6.26.11.22- «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի առաջին կուրսի ուսանողների հետ «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» դասընթացի շրջանակներում կազմակերպվել է դաս-սեմինար՝ «ՀՀ և ԱՀ ֆինանսական շուկաների կառուցվածքը» թեմայով (կազմակերպիչ՝ ավագ դասախոս Ա. Ալեքսանյան):

7.04.05.22-«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողների հետ «Կորպորատիվ ֆինանսներ» դասընթացի շրջանակներում կազմակերպվել է գիտաճանաչողական ընթերցումներ (կազմակերպիչ՝ ավագ դասախոս Ա. Ալեքսանյան):

8.Ներքոհիշյալ ուսանողները մասնակցել են ԱրՊՀ՝ 44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված ուսանողական գիտաժողովին:

✓ Սարգսյան Էմմա-«Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերի վերլուծությունը և դրանց ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Ավանեսյան:

✓ Բեգլարյան Յանա-«ԱՀ հետպատերազմյան տնտեսության իրավիճակի վերլուծությունը»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Ավանեսյան:

✓ Գրիգորյան Կրիստինա-«ՀՀ ներառական աճի վրա ազդող արտաքին գործոնների հետևանքները արդի ժամանակաշրջանում»: Գիտ.դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Ավանեսյան:

✓ Անտոնովա Մարիա-«ՀՀ բանկային համակարգի կատարելագործման հիմնահարցերը և բարելավման ուղիները»: Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոցենտ Եվ. Հայրիյան:

✓ Սարգսյան Յուլիա-«ՀՀ պետական պարտքի կառուցվածքի վերլուծությունը»: Գիտ. դեկ.՝ ավագ դասախոս Ա.Ալեքսանյան:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Խաչատրյան Իրենա Սերգեյի

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Հաշվետու ժամանակաշրջանում բաժինն առաջնորդվել է գիտխորհրդի կողմից հաստատված ուսումնական գործընթացի կազմակերպման հրամանի ժամանակացույցով:

- Քննաշրջանի արդյունքների հիման վրա կատարվել է բակալավրիատի և մագիստրատուրայի փոխատեղման գործընթացը: Համակարգի փոփոխման են ենթարկվել բակալավրիատում՝ 168 ուսանող, ընդ որում, 97 ուսանող ուսուցման վճարովի համակարգից տեղափոխվել է ուսուցման անվճար համակարգ և 71 ուսանող՝ ուսուցման անվճար համակարգից՝ վճարովի համակարգ: Մագիստրատուրայում՝ 22 ուսանող, ընդ որում, 12 ուսանող ուսուցման վճարովի համակարգից տեղափոխվել է ուսուցման անվճար համակարգ և 10 ուսանող ուսուցման անվճար համակարգից՝ վճարովի համակարգ:

- Ընթացիկ տարում իրականացվել է ԱրՊՀ ուսանողական նպաստների, պետական կրթաթոշակների, դրամական փոխհատուցման հատկացման գործընթացը: Դրամական փոխհատուցում է տրվել 1-ին կիսամյակում՝ 329 ուսանողի և 2-րդ կիսամյակում՝ 323 ուսանողի՝ համապատասխան տեղեկանքներ (բնակության վայրից) ներկայացնելուց հետո:

- ԱՀ պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին կրթաթոշակ է տրվել 1-ին կիսամյակում բակալավրիատում՝ 414 ուսանողի (ներկայացվածին հավելվում է առաջին կուրս ուսուցման անվճար համակարգ ընդունված 96 ուսանող), որից՝ 59 գերազանց, մագիստրատուրայում՝ 65 մագիստրանտի (ներկայացվածին հավելվում է առաջին կուրս ուսուցման անվճար համակարգ ընդունված 74 մագիստրանտ), որից՝ 14 գերազանց և 2-րդ կիսամյակում բակալավրիատում՝ 491 ուսանողի, որից՝ 58 գերազանց, մագիստրատուրայում՝ 45 մագիստրանտի, որից՝ 19 գերազանց:

- Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի կողմից կազմակերպվել և իրականացվել է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների գործունեությունը: ԿԳՄՄ նախարարություն են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները՝ գիտական խորհրդում ամփոփվելուց հետո:

- 2021-2022 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 356 բակալավրիատի դիպլոմ, որոնցից 247-ը՝ առկա ուսուցման համակարգի, 109-ը՝ հեռակա ուսուցման համակարգի, նախորդ տարիների 3 շրջանավարտների (առկա ուսուցման համակարգ՝ 2 և հեռակա ուսուցման համակարգ՝ 1): Գերազանցության դիպլոմ տրվել է առկա ուսուցման համակարգի 51 շրջանավարտի: Ամփոփիչ ատեստավորմանը չեն ներկայացել առկա ուսուցման համակարգի 1 և հեռակա ուսուցման համակարգի 2 շրջանավարտ: Մագիստրատուրայում՝ 146 դիպլոմ, որոնցից 130-ը՝ առկա ուսուցման համակարգի, 2-ը՝ նախորդ տարիներից, 16-ը՝ հեռակա ուսուցման համակարգի: Գերազանցության դիպլոմ տրվել է առկա ուսուցման համակարգի 57 շրջանավարտի: Թեզի պաշտպանությանը չի ներկայացել 1 մագիստրանտ:

- Հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ձևակերպվել են ԱՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, գործուղման, հիվանդության պատճառով ակադեմիական արձակուրդի, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ 370 հրամաններ բակալավրիատում և 105 հրամաններ մագիստրատուրայում:

- պատերազմական գործողությունների հետևանքով և այլ պատճառներով դիպլոմները կորցրած կամ դիպլոմում սխալ գրառումներ կատարած 70 շրջանավարտի տրամադրվել են դիպլոմների կրկնօրինակներ:

- Պարբերաբար նախագգուշական աշխատանքներ են տարվել ակադեմիական արձակուրդից ուսանողների կողմից ժամանակին վերադառնալու և ուսանողական խմբերին կցված ուսանողների առարկայական պարտքերի հանձնման վերաբերյալ:

- 2021-2022 ուսումնական տարում համալսարանից հեռացված (ազատված) ուսանողներին տրամադրվել են ակադեմիական տեղեկանքներ:

- Ներքուհական տեղափոխություններ են կատարվել 45 ուսանողների կողմից:

- Հաշվետու տարում ԱՀ ԿԳՄՄ նախարարություն, ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն են ներկայացվել Ձև N 3-զմ վիճակագրական և այլ հաշվետվություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀԱՅՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Գասպարյան Գոհար Էդուարդի

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացի վերահսկման բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Վերահսկվել է ուսումնական պարապմունքների իրականացման ողջ գործընթացը, որն էլ ամփոփվել և ամենօրյա տեղեկությամբ ներկայացվել է ռեկտորին և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

2. Պարբերաբար ստուգվել են ուսանողների հաճախումները բակալավրիատի և մագիստրատուրայի առկա, հեռակա ուսուցման համակարգերում: Տեղեկատվությունը ներկայացվել է ռեկտորին և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

3. Իրականացվել է ամբիոնային ուսումնական բեռնվածությունների բաշխման ստուգում և կատարման վերահսկողություն:

4. Ստուգվել և համարակալվել են բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլաններով նախատեսված դասընթացների քննական և ստուգարքային ամփոփագրերը:

5. Վերահսկվել են դեկանատներում քննական և ստուգարքային ամփոփագրերը առաջին և երկրորդ կիսամյակների ավարտին, շտկվել անճշտություններն ու խախտումները:

6. Կազմակերպվել են բոլոր կրթական ծրագրերի ուսումնական պլաններով նախատեսված եզրափակիչ գնահատումով դասընթացների ստուգումները (1-ին և 2-րդ փուլերով) համակարգչային եղանակով և ամփոփվել արդյունքները: Իրականացվել են՝

1-ին կիսամյակում՝ 1-ին փուլ – 114 ստուգում, 1850 ուս.-քնն., 2-րդ փուլ – 114 ստուգում, 1837 ուս.-քնն.,

2-րդ կիսամյակում՝ 1-ին փուլ – 130 ստուգում, 2266 ուս.-քնն., 2-րդ փուլ – 130 ստուգում, 2251 ուս.-քնն.:

7. Կազմակերպվել է 1-ին կուրսեցիների խորհրդատվություն համակարգչային եղանակով ստուգումների անցկացման վերաբերյալ և անցկացվել փորձնական թեստի հանձնում:

8. Վերահսկվել է եզրափակիչ գնահատումով դասընթացների թեստերի մուտքագրման գործընթացը, տրվել են մեթոդական ցուցումներ մուտքագրման պահանջների վերաբերյալ, ինչպես նաև կատարվել են որոշակի ճշգրտումներ թեստերի բազայում:

9. Իրականացվել է ուսանողների ուսման առաջադիմության ցուցանիշների (ՄՈԳ-երի) հաշվարկման ստուգում:

10. Ստուգվել է որոշ նորմատիվային փաստաթղթերի առկայությունը ամբիոններում և դեկանատներում:

ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Առուստամյան Նանա Էդուարդի

2021-2022 ուսումնական տարում գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Կատարվել է ասպիրանտների ընդունելություն, հայցորդների ձևակերպում (նախապատրաստական աշխատանք, որն ընդգրկում է փաստաթղթերի, անձնական գործերի ընդունելություն, քննական ձևաթերթերի, հանձնաժողովների կազմերի և դիմորդների թույլատրման հրամանների՝ հաստատված ռեկտորի կողմից):

2. Կազմվել է ասպիրանտների և հայցորդների՝ կրեդիտային համակարգով նախատեսված դասընթացների ժամանակացույցը և վերահսկվել ընդհանուր պատրաստվածության դասընթացների ուսումնական գործընթացը, ինչի վերահսկողության նպատակով ստեղծվել է մատյան:

3. Պատրաստվել են ասպիրանտների (հայցորդների) և ԱրՊՀ-ի, ինչպես նաև նրանց գիտական դեկավարների և ԱրՊՀ-ի միջև կնքվող պայմանագրերը:

4. Անց է կացվել հանդիպում ընդունված ասպիրանտների, հայցորդների և բաժնի աշխատակիցների միջև, ներկայացվել են անելիքները:

5. Տարվել է աշխատանք ասպիրանտների և հայցորդների հետ: ՀՀ տարբեր բուհեր նամակներ են հղվել՝ գիտական ղեկավարների, ատենախոսության թեմաների հաստատման ուղղությամբ:

6. Ստեղծվել է ընթացիկ ուսումնական տարվա ասպիրանտների և հայցորդների տվյալների բազա:

7. Կազմակերպվել է կրեդիտային համակարգով նախատեսված ասպիրանտների քննաշրջանը (պատրաստվել են ժամանակացույցը, մասնագիտական դասընթացների քննական տեղեկագրերը) և անց են կացվել հայցորդների որակավորման քննությունները, ըստ այդմ՝ քննական տեղեկագրերը ներկայացվել են ռեկտորի հաստատմանը և բաշխվել ըստ անձնական գործերի:

8. Անց են կացվել ասպիրանտների և հայցորդների ամենամյա ատեստացիաները, որոնց արդյունքներով կազմվել են հրամաններ և ներկայացվել ռեկտորի հաստատմանը:

9. Կադրերի բաժին են ներկայացվել ասպիրանտների, հայցորդների գիտական ղեկավարների վարձատրման ժամաքանակների մասին ներկայացումները:

10. Ձևակերպվել և ռեկտորի հաստատման են ներկայացվել համապատասխան հրամաններ (ասպիրանտների և հայցորդների շարժի հետ կապված, ազատման, ակադեմիական արձակուրդից վերականգնման, կրթաթոշակների նշանակման, փոխադրման):

11. Կազմակերպվել է հայցորդների ուսման տարեկան վարձերի ժամանակին գանձումը (համալսարանի հաշվապահության հետ համատեղ):

12. Ասպիրանտի և հայցորդների աշխատանքային անհատական պլանները ստուգվել և համալսարանի գիտական խորհրդի հաստատման են ներկայացվել:

13. Ըստ բաժանմունքների և ամբիոնների՝ տրամադրվել են բոլոր հրամանների քաղվածքները:

14. Մայիս-հունիս ամիսներին համապատասխան ամբիոններ են ուղարկվել գրություններ՝ հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված ուսումնական ծանրաբեռնվածությունների մասին:

15. Սահմանված կարգով ընթացքավորվել են բաժնի գործառույթների շրջանակում ստացած դիմումները, կազմվել և տրամադրվել են անհրաժեշտ տեղեկանքներ, ասպիրանտների և հայցորդների հանձնած որակավորման ստուգաթիվ՝ քննությունների մասին ամփոփագրեր:

16. Համակարգվել է ասպիրանտուրայի ուսումնական գործընթացին մասնակցող ԱրՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը:

17. Կոորդինացվել են ամբիոնների լաբորանտների աշխատանքները ասպիրանտների և հայցորդների մասով, և ցուցաբերվել նրանց մեթոդական օգնություն:

18. Դեկանատների և ամբիոնների վարիչների միջոցով կազմվել է ասպիրանտուրայի ընդունելության հայտ՝ ԱՀ ԿԳՄՍ նախարարություն ուղարկելու համար:

19. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն, ԿԳՄՍ նախարարություն և այլ պետական մարմիններ են ներկայացվել տեղեկատվական կապերի և պահանջվող այլ տվյալներ:

20. Աշխատանք է տարվել համալսարանում կազմակերպված գիտաժողովների, աշխատաժողովների մասնակիցների կողմից ներկայացվող հոդվածների, նյութերի հավաքագրման գործընթացի ուղղությամբ:

21. Իրականացվել են աշխատանքներ ԱրՊՀ-ում կազմակերպված գիտաժողովներին ՀՀ և արտերկրների բուհեր մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի վարիչ՝ Սաղյան Շուշանիկ Պավլիկի , բ.գ.թ., դոցենտ

2021-22 ուս. տարվա ընթացքում որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ ՈԱԿ) իրականացրել է կանոնակարգային, ռազմավարական ծրագրով հաստատված մի շարք աշխատանքներ:

1. Ի կատարումն ռազմավարական ծրագրի նպատակ 1-ի մի շարք խնդիրների՝ անհրաժեշտություն է առաջացել կանոնակարգային միասնականության մեջ դիտարկել մասնագիտության կրթական ծրագրերի մշակման, հաստատման, իրականացման, մշտադիտարկման աշխատանքները: Ի լուծումն նշված խնդիրների՝ ՈԱԿ-ը 2021/22 ուս. տարվա

ընթացքում *ներքին կանոնակարգերի մշակման, որակի ապահովման* հանձնաժողովների քննարկմանն է ներկայացրել ՄԿԾ հաստատման, ՄԿԾ ղեկավարման կարգերը, Առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման ընթացակարգը: Կատարվել են քննարկումներ, շտկումներ, որից հետո կարգերը ներկայացվել են գիտխորհրդի հաստատմանը:

Ներքին կանոնակարգերի մշակման, որակի ապահովման հանձնաժողովների քննարկմանն են ներկայացվել նաև ՄԿԾ որակի ապահովման այլ գործիքներ՝ ՄԿԾ ընթացիկ մշտադիտարկման հաշվետվության ձևաթղթի նմուշը, դասընթացից բավարարվածության հարցման հարցաթերթը, բակալավրիատի ՄԿԾ որակից ՊԴ կազմի բավարարվածության աստիճանը պարզող հարցաթերթը, բակալավրիատի ՄԿԾ որակից արտաքին շահակիցների՝ գործատուների, շրջանավարտների բավարարվածության աստիճանը պարզող հարցաթերթերը, SWOT աղյուսակը: Նախատեսվում է հաջորդ ուսումնականում նշված գործիքները ներկայացնելու գիտխորհրդի հաստատմանը:

2. Համապատասխան կարգի համաձայն, իրականացվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի վերնագրերի (չպետք է կրկնվեն առնվազն երեք տարվա կտրվածքով), ինչպես նաև ավարտական աշխատանքների, առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի՝ գրագողության նկատմամբ վերահսկողություն:

Ստուգման ընթացքում վեր են հանվել գրագողության, վերնագրային անհամապատասխանությունների, տեխնիկական թերությունների դեպքեր: Ամբիոնների վարիչներին տրվել են համապատասխան ներկայացումներ, ղեկավարների վերահսկողությամբ նշված թերությունները շտկվել են:

ՈԱԿ-ն արձանագրել է նաև կանոնակարգային այլ խախտումներ, գիտխորհրդում հնչեցրել մագիստրոսական թեզերի հետ կապված այն խնդիրը, որ չնայած կրթական ծրագրերում ուսումնական պլանով նախատեսված չորս մոդուլով տասնհինգ կրեդիտանոց *հետազոտական աշխատանք* բաղադրիչին և *հետազոտության պլանավորում և մեթոդներ* դասընթացին՝ թեզերի որակի և կանոնակարգով հաստատված ժամկետում ներկայացվելու խնդիրներն ակնառու են:

3. Որպես ԱրՊՀ-ում Google for Education կրթական էլեկտրոնային համակարգի գործարկման պատասխանատու և կազմակերպիչ օղակ ՈԱԿ-ը շարունակում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

Ա. ուսումնական խմբերի համար կրթական հարթակների ստեղծում,

Բ. էլեկտրոնային դասացուցակի կադապարների ստեղծում և տրամադրում համապատասխան դեկանատներին, պատրաստի դասացուցակների տեխնիկական որակի վերահսկում, դասացուցակի տրամադրում ԱրՊՀ կայքը սպասարկող բաժնին,

Գ. էլեկտրոնային հարթակում ուսանողների տեխնիկական խնդիրների խորհրդատվություն,

Դ. Google for Education կրթական էլեկտրոնային համակարգի օգտատերերի գործառնությունների վերահսկում:

4. Կենտրոնին է վերապահված նաև առցանց ուսուցման որակի վերահսկումը: Հաշվետու ուսումնական տարվա առաջին կիսամյակում մագիստրատուրայի ութական խմբեր ունեցել են առցանց կամ հիբրիդ պարապմունքներ, երկրորդ կիսամյակում՝ երկու խումբ՝ առցանց, չորս խումբ՝ հիբրիդ, ինչպես նաև համավարակի հետևանքով համալսարանն առաջին կիսամյակում որոշակի ժամկետով անցել է առցանց ուսուցման: ՈԱԿ-ի կողմից վերահսկվել է *Meet* գործիքով իրականացվող առցանց դասերի որակը՝ խնդիրների վերահանման նպատակով: Արդյունքում, կենտրոնը ամբիոններին է տրամադրել «Meet գործիքի կիրառման համառոտ ուղեցույց»-ը, խորհրդատվություններ տրամադրել համակարգի առցանց պատասխանատուներին: Ստեղծված խնդիրները քննարկվել են դեկանների, ամբիոնների վարիչների հետ:

5. Հաշվետու տարում ՈԱԿ-ն անց է կացրել մի շարք հարցումներ:

Ա. *Պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման* հարցման արդյունքները, ըստ կանոնակարգի, տրամադրվել են պրոռեկտորներին, դեկաններին, ամբիոններին, ինչպես նաև հղվել դասախոսների էլեկտրոնային հասցեներին (ընդհանրական վերլուծությունները տե՛ս 24-40-րդ էջերի համապատասխան աղյուսակներում):

Բ. Առցանց ուսուցման արդյունավետության վերաբերյալ հարցումն արվել է դասախոսների և ուսանողների շրջանում (ընդհանրական վերլուծությունները տե՛ս 41-52-րդ էջերի համապատասխան աղյուսակներում):

Գ. Կենտրոնի կողմից կատարվել է նաև ավարտական կուրսերի մագիստրանտների հարցում՝ մագիստրոսական ուսուցման որակի գնահատման վերաբերյալ (ընդհանրական վերլուծությունները տե՛ս 52-55 էջերի համապատասխան աղյուսակներում):

ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Հայրապետյան Անուշ Վաչագանի

2021-2022 ուսումնական տարում բաժինը կազմակերպել է ուսումնական պլաններով նախատեսված բակալավրիատի ուսումնական՝ 16, մանկավարժական՝ 13, արտադրական՝ 8 և մագիստրատուրայի գիտամանկավարժական՝ 19 փորձուսուցում:

Բաժնում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

1. Կազմվել է ուսումնական տարվա փորձուսուցման գրաֆիկը:
2. Ամբիոնների հետ հստակեցվել են փորձուսուցման վայրերը:
3. Կնքվել են պայմանագրեր ԱՀ տարբեր գերատեսչությունների, հիմնակ-ձեռնարկությունների, բանկերի, հանրակրթական հաստատությունների հետ:
4. Փորձուսուցման ընդգրկված ուսանողների համար կազմակերպվել են նախապատրաստական և ամփոփիչ կոնֆերանսներ, ժողովներ:
5. Կազմակերպվել են հանդիպումներ փորձուսուցման ղեկավար-մեթոդիստների հետ:
6. Կազմվել են հրամանագրման նախագծեր:
7. Վերահսկվել է փորձուսուցման ողջ գործընթացը:
8. Հաշվապահությանն են ներկայացվել փորձուսուցման վայրից նշանակված ղեկավարների վարձատրման հետ կապված տեղեկագրերը:
9. Ներկայացվել են փորձուսուցման հետ կապված բոլոր հաշվետվությունները:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Առուշանյան Եղիշե Զավենի

2021-2022 ուսումնական տարում հրատարակչության աշխատանքները կազմակերպվել են՝ համաձայն կազմված պլանի՝ նպատակ ունենալով ապահովել համալսարանի համար անհրաժեշտ բոլոր տեսակի դասամատյանների, արձանագրությունների մատյանների, համալսարանի աշխատանքները բնականոն կազմակերպելու համար փաստաթղթերի, տոմսերի, թնստերի, պատվոգրերի, շնորհակալագրերի, բլանկների, դիպլոմների միջուկների ձևավորումը, տպագրությունն ու պատճենահանումը:

Հրատարակչությունը կատարում է մագիստրոսական, ավարտական, կուրսային աշխատանքների ձևավորման, տպագրման, կազմարարության, ինչպես նաև գունավոր տպագրության ու լամինացման աշխատանքներ: Հրատարակչությունում տպագրվել են «Արցախի համալսարան», «Քո ժամանակը» ամսաթերթերը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր. հասարակական գիտություններ», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր. բնական գիտություններ» հանդեսները, գիտաժողովների նյութերի ժողովածուները, գիտյոթրիդի կողմից հաստատված գիտական, գիտամեթոդական, ուսումնամեթոդական աշխատանքները:

Հրատարակչությունը շարունակում է կատարել է նաև ԱրՊՀ 50-ամյակին նվիրված «Արցախի ժողովրդագրությունը» մատենաշարի նյութերի համակարգչային հավաքման ու տեխնիկական խմբագրման աշխատանքները:

Հրատարակչությունը կատարել է նաև 611500 դրամի վճարովի ծառայություն:

ԿԱՂԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Միքայելյան Կարինե Լևոնի

2021-2022 ուսումնական տարում բաժնի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները:

1. Ձևակերպվել է 260-ից ավելի հրաման՝ աշխատանքի ընդունման, ազատման, տեղափոխման, աշխատանքային արձակուրդների, չվճարվող արձակուրդների, խրախուսման,

պարգևատրման, տույժի, փորձուսուցման և այլնի մասին: Հրամանների քաղվածքները բաժանվել են համապատասխան ֆակուլտետների, դեկանատներին, ամբիոններին և մյուս ստորաբաժանումներին, դրանց բովանդակությանը ծանոթացել են համապատասխան անձինք:

2. Կնքվել են 330-ից ավելի աշխատանքային և ժամավճարային հիմունքներով աշխատողների համար ծառայությունների մատուցման պայմանագրեր:

3. Գրանցվել է 560-ից ավելի դիմում և ներկայացում:

4. Լրացվել է 156 տեղեկանք, անաշխատունակության 151 թերթիկ, գործուղման 30 թերթիկ:

5. Աշխատանքի է ընդունվել 28 հիմնական և 90 ժամավճարային հիմունքներով աշխատող:

6. Իրենց դիմումների համաձայն աշխատանքից ազատվել են 21, պայմանագրի ժամկետը լրանալու հետ կապված՝ 15, թոշակային տարիքի հետ կապված՝ 3 աշխատողներ:

7. Նոր հիմնական աշխատանքի ընդունվողներից պահանջվել են աշխատանքային գրքույկներ, կատարվել գրառումներ: Գրառումներ են կատարվել նաև տարակարգերի փոփոխման, տեղափոխությունների, աշխատանքից ազատվողների աշխատանքային գրքույկներում:

8. ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն են ներկայացվել տեղեկություններ համալսարանի աշխատակազմի մասին:

9. Կազմվել է աշխատողների աշխատանքային արձակուրդների ժամանակացույցը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Հարությունյան Սվետլանա Վլադիմիրի

2021-2022 ուսումնական տարում ԱրՊՀ ընդհանուր բաժնի փաստաթղթերի ընդունման և հաշվառման ցուցանիշները ներկայացվում են ստորև:

Ելից գրությունների մատյանում գրանցվել է 387 գրություն, որից փոստային առաքանու միջոցով հանրապետությունից առաքվել է 126 (փոստային առաքանու միջոցով առաքված 126 գրությունից 111-ը ուղարկվել է նաև էլեկտրոնային տարբերակով), ԱրՊՀ ցրիչի միջոցով՝ 261 գրություն:

Փոստային առաքանու միջոցով առաքվել է դեկանատների կողմից տրամադրված 15 ծանուցագիր:

Մտից գրությունների մատյանում գրանցվել է 441, ներկայացումների, զեկուցագրերի և միջնորդագրերի մատյանում՝ 609 գրություն, դիմումների գրանցման մատյանում՝ 1633 դիմում և ներկայացվել մակագրության ու հանձնվել համապատասխան բաժիններ:

Ըստ արխիվում պահպանված տվյալների՝ տրամադրվել է շրջանավարտների ուսումնառության տարիների՝ 146, և աշխատած տարիների վերաբերյալ՝ 21 տեղեկանք:

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ավագ մասնագետ՝ Թովմասյան Վահագն Արկադիի

2021-2022 ուսումնական տարում Հայագիտական կենտրոնը կատարել է հետևյալ աշխատանքները՝

1. շարունակվել է համագործակցությունը Ռուսաստանում գործող «Հայագ» հիմնադրամի հետ՝ հայերի մասին ռուսալեզու խոշորագույն էլեկտրոնային հանրագիտարանը համալրելու հարցով:

Կենտրոնի տեղադրած տեքստեր, լուսանկարները և տեսանյութերը հնարավորություն են տալիս հարստացնելու հանրագիտարանը Արցախի պատմությանը վերաբերող նյութերով:

2. շարունակվում են Արցախյան հարցի կարգավորմանը վերաբերող նյութերի հավաքագրման աշխատանքները:

3. գործում է ընթերցասրահ, որից հնարավորություն ունեն օգտվելու ինչպես համալսարանի դասախոսները, ուսանողները, այնպես էլ քաղաքացիները:

Հաշվետու ժամանակաշրջանում համալրվել է նաև ընթերցասրահի գրադարանային ֆոնդը:

4. առկա է էլեկտրոնային գրադարան, որը շարունակաբար հարստացվում է:
5. մշտապես գիտամեթոդական օգնություն է ցուցաբերվում ուսանողներին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Էրիկ Հենրիկի Կազրամանյան

2021-2022 ուսումնական տարում տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժինը իրականացրել է համալսարանի տեղեկատվական համակարգի ենթահամակարգերի և օբյեկտների սպասարկման աշխատանքներ:

Հայտնաբերվել են վթարված համակարգչային տեխնիկայի խափանման պատճառները, ըստ անհրաժեշտության, վերանորոգվել, փոփոխվել, արդիականացվել, օպտիմալացվել և հզորացվել: Կատարվել են համակարգիչների համակարգային բլոկների մաքրման, պրոցեսորի ջերմային մածուկի փոխարինման, տեխնիկապես վնասված, այրված կամ այլ պատճառներով շարքից հանված դետալների, մեխանիզմների և ինտեգրալային սխեմաների ախտորոշման, վերանորոգման և փոխարինման աշխատանքներ, ինչպես նաև համակարգիչների հիմնական և լրացուցիչ սարքերի աշխատունակության պահպանման սպասարկման աշխատանքներ:

Համալսարանում ապահովվել է լոկալ և գլոբալ ցանցերի, ցանցային սարքերի, սերվերների և տվյալների բազաների անխափան աշխատանքը, որը ընձեռել է համացանցից օգտվելու, նյութերի տպագրման, դասախոսների կողմից տրամադրված ուսումնական և այլ նյութերից օգտվելու հնարավորություն և համալսարանի ներքին փաստաթղթաշրջանառության և կառավարման տեղեկատվական այլ համակարգերի աշխատանքները իրականացնելու հնարավորություն:

Կատարվել են համալսարանի ծրագրային բազայի թարմացում, համակարգիչների օպերացիոն համակարգերի, ծրագրերի և ցանցային ծրագրային միջոցների թերությունների վերացման, սխալների շտկման, թարմացման և արդիականացման աշխատանքներ: Ուսումնասիրվել և ձեռնարկվել են քայլեր համակարգչային ցանցի, սարքերի և սարքավորումների, համակարգիչների տեխնիկական և ծրագրային անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համակարգչային կենտրոնների պատասխանատվությունների կողմից կատարվել են լաբորատոր աշխատանքների թարմացումներ, անհրաժեշտության դեպքում լաբորատոր աշխատանքների ժամանակ օգնություն է ցուցաբերվել ուսանողներին: Պարապմունքների ժամանակ ի հայտ եկած ծրագրային և տեխնիկական անսարքությունները գրանցվել և ժամանակին վերացվել են: Կուրսային, ավարտական և ինքնուրույն աշխատանքների կատարման համար ուսանողներին տրամադրվել է լրացուցիչ պարապմունքների գրաֆիկ:

Համալսարանի 4 համակարգչային լաբորատորիաներն ապահովված էին ընդհանուր հաշվով 101 համակարգիչներով, 3 տպիչ սարքով, 4 պրոյեկտորով և 1 սենսորային գրատախտակով: Համակարգչային թեստավորման կենտրոնը ապահովված էր 86 համակարգչով և 1 տպիչ սարքով: Ամբիոններին պատկանող համակարգչային լսարաններն ապահովվել են ուսումնական գործընթացի պահանջները, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, համալրվել անհրաժեշտ հավելյալ սարքավորումներով (պրոյեկտոր, դիմամիկ, տեսախցիկ):

Ընդհանուր առմամբ, համալսարանի համակարգիչները գտնվում են վատ վիճակում: Մոտավոր տվյալներով՝ համակարգիչների 95%-ը վատ և 5%-ը հանդուրժելի վիճակում են:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բաժնի պետ՝ Հարությունյան Հասմիկ Նիկոլայի

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում գրադարանային ֆոնդերը համալրվել են նվիրատվությամբ և համալսարանի կողմից գնված գրքերով: 2021-2022 ուսումնական տարվա համալրած գրականության 4188(չորս հազար հարյուր ութսուն ութ) միավոր գրականություն՝ 16.025.106(տասնվեց միլիոն քսանհինգ հազար հարյուր վեց) դրամ 69 (վաթսունինը) լումա

արժողությամբ, ձեռք է բերվել կանխիկ՝ համալսարանի դրամական միջոցներով, որից զուտ գրքերը՝ 4180 (չորս հազար հարյուր ութսուն) միավոր: Որպես նվիրատվություն՝ մուտքագրել ենք 2262 (երկու հազար երկու հարյուր վաթսուն երկու) միավոր գրականություն՝ 3.656.721դր(երեք միլիոն վեց հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր քսանմեկ) դրամ 52 (հիսուներկու) լուսա արժողությամբ, որից 1570 (հազար հինգ հարյուր յոթանասուն) միավոր գիրք, 692 (վեց հարյուր ինսուներկու) ամսագիր: Ընդհանուր 6450 (վեց հազար չորս հարյուր հիսուն) միավոր մուտքագրած գրականության ընդհանուր արժեքը կազմում է 19.681.828 (տասնինը միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր քսանութ) դրամ 21 (քսանմեկ) լուսա: Գրադարան մուտքագրած նոր ստացած գրականության ցանկը տեղադրվում է համալսարանի ներքին ցանցում:

Ուսումնական տարվա վերջին՝ ընթերցողների ընթերցողական գրքույկներից դուրս ենք գրել 70 (յոթանասուն) միավոր գիրք, որոնք մնացել են պատերազմի հետևանքով կորցրած տարածքներում, մի մասն էլ կորցրած և փոխհատուցված է: Դուրս գրված գրքերից հայերենը կազմում է 52 (հիսուներկու) միավոր, ռուսերենը՝ 16 (տասնվեց), անգլերենը՝ 2 (երկու): Դուրս գրված գրքերի ընդհանուր արժեքը կազմում է 99.935 (ինսունինը հազար ինը հարյուր երեսունհինգ դրամ):

Համալրած գրականության հետ միասին, 2021-2022 ուսումնական տարվա վերջին գրքային ունեցվածքը կազմում էր 94.758 (ինսունչորս հազար յոթ հարյուր հիսունութ) միավոր, զուտ գրքերը՝ 84.250 (ութսունչորս հազար երկու հարյուր հիսուն) միավոր:

2021-2022 ուստարում նվիրատվություններ են արվել անհատ հեղինակներից, <<Ջենեսիս Արմենիա>> հիմնադրամի, <<Գ.Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմանդամ ընտանիքների հիմնադրամի>>, <<Համագգային հայ կրթական և մշակութային միության >>, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայ-ամերիկյան համալսարանի, ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Բյուրականի Աստղադիտարանի կողմից: Համալրած գրականության մի մասն էլ կազմում է բաժանորդագրությունը: Նշված ժամանակահատվածում գրադարանը բաժանորդագրվել է 6 (վեց) անուն թերթ, որոնց մի մասը կոմպլեկտավորվում է և համալրում գրադարանային ֆոնդը: Բացի նվիրատվություններից գրադարանային ֆոնդը համալրվել է զուտ պետհամալսարանի դրամական միջոցներով:

Ընթերցողների կազմը. ընթերցողների ընդհանուր թիվը հաշվետու ուստարում կազմում էր 1545, որից ուսանողները՝ 1109, պրոֆեսորադասախոսական կազմը՝ 197, աշխատողները՝ 147, մագիստրանտները՝ 59, ասպիրանտները՝ 2, այլ ընթերցողները՝ 31:

Ուսումնական տարվա ընթացքում գրանցել ենք 384 (երեք հարյուր ութսունչորս) նոր ընթերցող, ներքին ցանցում ենք տեղադրել մասնագիտական գրականության ցանկը՝ վերջին 6 (վեց) տարվա կտրվածքով:

Ընթերցողների հետ աշխատանքներն ավելի ծավալուն են դառնում ուսումնական տարվա վերջին, կապված ավարտական քննությունների հետ, այդ թվում նաև տեղեկանքների տրման և պարտքատերերի հետ կապված աշխատանքները:

Ընդամենը ավարտած 356 (երեք հարյուր հիսունվեց) բակալավրից գրանցված է եղել 212 (երկու հարյուր տասներկու) ուսանող, պարտքատեր է եղել 105-ը: Առկա ավարտած 128 (հարյուր քսան ութ) մագիստրոսներից գրանցված էին 59-ը, պարտքատեր էին 29-ը: Նախօրոք բոլոր դեկանատների միջոցով կուրսից կուրս փոխադրվողներին և ավարտական կուրսերին, հայտարարվել էր վերադարձնել գրքերը: Հաշվետու ուսումնական տարում ավարտական կուրսերից պարտքատեր չի մնացել:

Գրադարանի ընթերցասրահում ընթերցողներին են տրամադրվել գրադարանում եղած գրքերի մեկական օրինակները և բաժանորդագրությունից ստացած թերթերը: Մշտական գործում են նոր ստացած գրականության ցուցադրական, <<Մեր օրացույց>>, <<Օրվա պարբերականներ>>, <<Տոն օրերին նվիրված>>, ինչպես նաև <<Նշանավոր հոբելյաններ>> ցուցատախտակները:

2021-22 ուստարվա ընթացքում մասնակցել ենք սեպտեմբերի 17-ին Zoom հարթակով <<Գրադարանային-տեղեկատվական մշակույթի և թանգարանագիտական հարցերի ուսուցման դերն ու արդիականությունը>> թեմայով գրքի շնորհանդես քննարկմանը, փետրվարի 22-ին կազմակերպված առցանց հանդիպմանը՝ <<Բյուրականի աստղադիտարան. ականավոր նվաճումների 75 տարին>> նոր հրատարակված արժեքավոր գրքի գլխավոր խմբագիր, Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանի հետ: Միջոցառմանը ցուցադրվել է

կարճ տեսանկյունով, որտեղ ներկայացված էր Բյուրականի աստղադիտարանը իր ողջ հմայքով, իսկ մտքերի փոխանակման ժամանակահատվածում գրադարանների մի շարք փորձառու աշխատողներ ներկայացրել են իրենց տեսանկյունը միջոցառման կարգախոսի համատեքստում: Մարտի 14-ին ԱրՊՀ գիտական գրադարանում տեղի ունեցավ միջոցառում նվիրված մեծն Չարենցի 125 ամյակին: Միջոցառմանը ներկա էին բանասերներ:

Պատրաստ և ներքին ցանցում տեղադրված են 1998թ. մինչև 2022թ. ԱրՊՀ-ում հրատարակված գիտական տեղեկագրերի հոդվածների մատենագիտական ցանկերը հայերեն, ռուսերեն և անգլերեն տարբերակով: Ընթերցողներն օգտվում են <<Նրա մասին>> քարտարանից, <<Ազգային ազատագրական շարժումը Արցախում>>, <<Հայոց ցեղասպանությունը>> և <<Գիտական հոդվածներ>>-ի մատենագիտական ցանկերից:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Գալոյան Վահե Վազգենի

ԱրՊՀ ՈՒՀՏԱԿ բաժնի գործառնությունների մեջ է մտնում ԱրՊՀ ստորաբաժանումներում ուսանողների հետ տարվող աշխատանքների կազմակերպումը, դրանց արդյունավետության բարձրացումը, կոորդինացումը, մեթոդական ուղղորդումը: Բաժինը համակարգում է շրջանավարտների և գործատուների հետ աշխատանքները, կազմակերպում հանրային նշանակության տարաբնույթ միջոցառումներ:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ԱրՊՀ ՈՒՀՏԱԿ բաժինը պլանավորել, կազմակերպել և իրականացրել է ուսանողների մտավոր, գաղափարական, ֆիզիկական և հոգևոր զարգացմանը, նրանց աշխարհայացքի և մտահորիզոնի ընդլայնմանն ուղղված ուսումնագիտական, մշակութաժամանցային և մարզական տարաբնույթ միջոցառումներ, ուսումնասիրել ուսանողների սոցիալ-իրավական պաշտպանվածության և սոցիալ-կենցաղային պայմանները, մշակել և ներկայացրել դրանց բարելավման վերաբերյալ առաջարկություններ և երաշխավորություններ:

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և մասնագիտական աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով կատարվել են մի շարք աշխատանքներ:

- Կայացել է հանդիպում <<Ջենեսիս Արմենիա>> գիտահետազոտական ուղեղային կենտրոն-հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Հիմնադրամի ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնել համագործակցելու ԱրՊՀ-ի հետ՝ գիտակրթական տարբեր արդյունավետ ծրագրերի իրագործման համար, ինչպես նաև շրջանավարտների կարիերայի զարգացմանը նպաստելու ուղղությամբ:

- Պարբերաբար հանդիպումներ են կայացել <<Դասավանդի՛ր, Հայաստան>> կրթական հիմնադրամի ներկայացուցիչների հետ, ինչպես առցանց, այնպես էլ առկա ձևաչափով: Ներկայացվել են կրթական հիմնադրամի կողմից առաջիկայում իրականացվելիք ծրագրերը: Հիմնադրամը առաջարկել է կրթության ոլորտում կարիերա սկսելու հնարավորություններ:

- Հանդիպումներ են կայացել *Թումո* ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի Արցախի մասնաճյուղի ներկայացուցիչների հետ, ովքեր հանդես են եկել աշխատանքի առաջարկով:

- Բաժնի կողմից մշակված ծրագրով մուտքագրվել են շրջանավարտների տվյալները, նրանց աշխատավայրերը, ըստ ֆակուլտետների կազմվել է 2021-2022 ուսումնական տարվա վիճակագրական տվյալների աղյուսակ՝ «Շրջանավարտների բազա»:

Բաժինը կայքէջի միջոցով պարբերաբար հայտարարություններ է տարածում՝ ուսանողներին և շրջանավարտներին իրազեկելով սեմինար-դասընթացների, գործատուների հետ հանդիպումների, խորհրդատվությունների, աշխատաշուկայում թափուր աշխատատեղերի և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ:

Ընթացիկ տարում բաժինը ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով կատարել է հետևյալ աշխատանքները.

1. կատարվել է ուսանողների հասարակական ակտիվության միավորների հաշվարկում և կառավարում:

2. ընդունվել և ընթացավորվել են ուսանողական հանրակացարանում բնակվելու համար ներկայացված դիմումները:

3. կատարվել է ուսանողների խնդիրների վերհանում և ներկայացվել ԱրՊՀ ղեկավարությանը:

Միջոցառումներ

• «ԱրՊՀ-Պատարա 2021» ամառային միջազգային ճամբարի կազմակերպում՝ ՀՀ, ԱՀ, արտերկրի բուհերից շուրջ 100 ուսանողների մասնակցությամբ:

• Անկախության դաս՝ նվիրված Արցախի Հանրապետության հռչակման և Գիտելիքի ու դպրության օրվան:

• Առաջին կուրսեցիների դիմավորման աշխատանքների կազմակերպում:

• «Իրազեկ ուսանող» միջֆակուլտետային ինտելեկտուալ խաղի կազմակերպում:

• Առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողության, մշակութաժամանցային միջոցառման կազմակերպում:

• Միջֆակուլտետային սպորտային միջոցառումների կազմակերպում:

• «Ճանաչիր Արցախը» ծրագրի շրջանակներում արշավների կազմակերպում Արցախի տարբեր պատմամշակութային վայրեր:

• «Արցախ, մեր տուն», «Կյանքս Արցախին» խորագրով միջֆակուլտետային մշակութային միջոցառումների կազմակերպում:

• Այցելություն Գանձասարի վանական համալիր, բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողների խրախուսման արարողություն:

• Ստեփանակերտի գիշերօթիկ հաստատության սաների համար ամանորին ընդառաջ նվերների պատրաստում և մշակութային միջոցառման կազմակերպում:

• Ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպում. հանդիպումներ ՊԲ ներկայացուցիչների, զինվորների հետ, համերգային ծրագրերով այցելություն զորամաս, «Զինվորի հետ, զինվորի կողքին» նախաձեռնության շրջանակներում ծանրոցների պատրաստում սահմանապահ զինվորների համար:

• Բուհ-դպրոց համագործակցության շրջանակներում հանդիպումներ և ինտելեկտուալ խաղեր ավագ դպրոցների աշակերտների հետ:

• Արիության դաս՝ մայիսյան եռատոնին ընդառաջ:

• 44-օրյա պատերազմի հետևանքով զոհված, անհետ կորած ուսանողների տվյալների վերջնական հավաքագրում, հուշատախտակի և հուշաքարի պատրաստում, ուսանողական գիտաժողովի և հուշ-երեկոյի կազմակերպում:

• Շրջանավարտների դիպլոմների տրման և հրաժեշտի հանդիսավոր արարողության կազմակերպում:

• Համալսարանական և արտահամալսարանական տարաբնույթ հանրօգուտ աշխատանքների կազմակերպում՝ կամավորական խմբերի կազմավորում, աշխատանքներ ԱրՊՀ գիտական գրադարանում, եղբայրական գերեզմանոցում:

• Ընթացիկ տարում կազմակերպված երթերի ընթացքում ուսանողական համակազմի մասնակցության ապահովում:

Այսպիսով, 2021-2022 ուսումնական տարում բաժինը իրականացրել է մի շարք խնդիրների լուծման համալիր գործողություններ՝ ամրապնդելով համալսարանի կապը պետական կառույցների, գործատուների և այլ համակարգերի ներկայացուցիչների հետ, շարունակելով նպաստել ուսանողների ակտիվ մասնակցությունը հասարակական աշխատանքներին և երկրի զարգացմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի պետ՝ Սառաջյան Զարինե Գարեգինի

2021-2022 ուստարվա ընթացքում բաժինն աշխատանքներ է իրականացրել՝ ապահովելով արդյունավետություն և կատարելով նախանշած խնդիրները: Աշխատանքներ են իրականացվել հիմնականում հետևյալ ուղղություններով:

Հանրային կապեր: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք ուղղված են եղել ԱրՊՀ գործունեության և նրա վարկանիշի բարձրացմանը, տեղեկատվական և քարոզչական բնույթի միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, նպաստել

հանրային նշանակության տարաբնույթ միջոցառումների (այդ թվում՝ տոն օրերին նվիրված միջոցառումների, համաժողովների, հավաքների, երթերի) կազմակերպմանը, հանրապետության սահմաններում և դրանից դուրս գործող ուսումնական հաստատությունների հետ համագործակցային կապերի հաստատմանն ու ամրապնդմանը, համատեղ միջոցառումների կազմակերպմանը, հանրապետության երիտասարդական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցային ծրագրերի իրականացմանը: Բաժինը համագործակցում է ԱՀ-ում գործող տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների և անհատ լրագրողների, ինչպես նաև տարբեր բուհերի ուսանողների հետ տարվող աշխատանքների, այլ կառույցների հանրային կապերի և լրատվության բաժինների հետ:

Լրատվություն: Այս ուղղությամբ բաժինն իրականացրել է աշխատանքներ, որոնք նպաստել են ԱրՊՀ ինտերնետային ռեսուրսների ակտիվացմանը, պաշտոնական կայքի զարգացմանը, սոցիալական-տեղեկատվական ցանցերում ներկայացվածությանը, հետադարձ կապի ապահովմանը, «Արցախի համալսարան» պաշտոնաթերթի, «Քո ժամանակը» ուսանողական ամսաթերթի, ԱրՊՀ մասին պատմող տեսանյութերի, լուսանկարների և տպագրական նյութերի ստեղծմանն ու տարածմանը: Իրականացվել է տպագիր և էլեկտրոնային մամուլում ԱրՊՀ անդրադարձների դիտարկում, վերլուծություն և տեղայնացում: Իրականացվել է «Արցախի համալսարան» և «Քո ժամանակը» թերթերի տարածումը ԱՀ, ՀՀ համապատասխան կառույցներում, համալսարանի ֆակուլտետներում և ստորաբաժանումներում: Պարբերաբար կատարվել են անհրաժեշտ իրազեկման աշխատանքներ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի վարիչ՝ Գասպարյան Անահիտ Էդուարդի

2021-2022 ուսումնական տարում ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում իրականացվել են մի շարք աշխատանքներ:

1. Տեսական և պրակտիկ դասընթացներ, թրեյնինգներ

Նոյեմբերի 20-ին ԱրՊՀ ուսանողների և դասախոսների հետ առցանց հանդիպում է ունեցել նիդեռլանդահայ հոգեբան, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոլանդական *Մեթրիս* կազմակերպության տեխնիկական ղեկավար, Metris IT Solutions տնօրեն Լևոն Բադդասարյանը: Նա հանդես է եկել «Առողջության բաղադրիչները և արտաքին միջավայրի ազդեցությունը» թեմայով:

Փետրվարի 26-ին Լևոն Բադդասարյանը հանդես է եկել «Քաղաքական առաջնորդություն, միջավայրը և հակամարտությունների լուծում» թեմայով դասախոսությամբ:

Մարտի 13-ին ուսանողների համար կազմակերպվել է բաց դասախոսություն՝ «Խաղամոլության հոգեբանական նկարագիրը» թեմայով: Դասախոսությունը վարել է մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ավագ դասախոս Ա. Ավանեսյանը:

Ապրիլի 25-ին ուսանողների համար կազմակերպվել է բաց դասախոսություն՝ «Պայքար երջանկության համար» թեմայով: Դասախոսությունը վարել է հ.գ.թ., դոցենտ Վ. Յարամիշյանը:

Ապրիլի 26-ին մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Ռ. Հարությունյանի գլխավորությամբ «Հոգեբանություն» 3-րդ կուրսի ուսանողների համար կազմակերպվել է միջոցառում, որը վերաբերում էր «Տուրետի» համախտանիշին ու դրա մասին գիտելիքների տարածմանը հոգեբանություն ուսումնասիրող ուսանողների շրջանում:

Մայիսի 3-ին հ.գ.թ., դոցենտ Վ. Յարամիշյանը հանդես է եկել «Կյանքի իմաստ կամ էքզիստենցիալ փիլիսոփայություն» թեմայով դասախոսությամբ:

Մայիսի 16-ին տեղի է ունեցել *Արցախ-Հայաստան-Գանադա* առցանց հանդիպում-դասախոսություն՝ «Հետտրավմային աճ» թեմայով, որը վարել են Կանադայի Մոնթրեալի ՄըգԳիլ համալսարանի պրոֆեսոր, հոգեբույժ Ռիթա Սուլահյան-Կույումջյանը, ՀՀ «Բնթրա» հոգեկան առողջության կենտրոնի տնօրեն, ԵՊԲՀ բժշկական հոգեբանության ամբիոնի վարիչ Խաչատուր Գասպարյանը և «Բնթրա» հոգեկան առողջության կենտրոնի հոգեբան Անի Ազիզյանը: Առցանց հանդիպմանը մասնակցում էին ԱրՊՀ «Հոգեբանություն» մասնագիտությամբ սովորող ուսանողներ, հոգեբան դասախոսներ:

Մայիսի 26-ին հ.գ.թ., դոցենտ Վ. Յարամիշյանը հանդես է եկել հերթական դասախոսությամբ՝ «Շփվել այնպես, որ քեզ ճիշտ հասկանան» թեմայով:

2. Կենտրոնի զարգացմանն ուղղված միջոցառումներ

Մարտի 11-ին ՀՊՄՀ հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., դոցենտ Լևոն Սարգսյանի նախաձեռնությամբ ուսանողները, դասախոսները, հոգեբան մասնագետները առցանց հանդիպում են ունեցել Չիկագոյի համալսարանի հոգեբանության դպրոցի կողմից իրականացվող «Հետպատերազմյան շրջանում ընտանիքների և պատերազմի մասնակիցների հոգեկան առողջություն և բարեհարմարություն» թեմայով վերապատրաստման ծրագրին:

Ապրիլի 27-ին կազմակերպվել է «Արդի պայմաններում կրթության ոլորտում հոգեբանական աշխատանքի առաջնահերթ ուղղությունները» թեմայով գիտագործնական կոնֆերանս:

Հունիսի 3-ին կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Արցախում հոգեբանական հիմնախնդիրների լուծման ուղիները» թեմայով:

Փետրվարի 21-ից ապրիլի 30-ը հոգեբաններ Ա. Բաբայանը և Ռ. Հարությունյանը մասնակցել են ԵՊՀ կիրառական հոգեբանության կենտրոնի տնօրեն Դ. Գևորգյանի կողմից կազմակերպված «Կոգնիտիվ-վարքային հոգեթերապիա» թեմայով առցանց դասընթացին:

ԵՊՄՀ հոգեբանության ամբիոնի դոցենտ Մարինե Միքայելյանի և ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի համատեղությամբ մեկնարկվել է ծրագիր, որի նպատակն է հոգեբանական հետազոտություն-ուսումնասիրություն կատարել 6-ից 15 տարեկան այն երեխաների շրջանում, ովքեր այս կամ այն չափով տուժել են պատերազմից, որը կնպաստի առկա հոգեբանական խնդիրների լուծման ուղղությամբ ուղիներ գտնելուն:

Ծրագրի բաղկացուցիչ բաղադրիչներից է մանկական հոգեբան-մասնագետի կողմից մշակված «Արի զբոսներ» խորագրով տետրը, որն Արցախում աղապատացվում է ԱրՊՀ «Հոգեբանություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողների, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասպիրանտ և դասախոս Մարիամ Գասպարյանի միջնորդությամբ: Այդ աշխատանքներում ընդգրկվել են նաև Շուշիի Դանիել Ղազարյանի անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի սաները, ինչպես նաև ԱՀ սահմանամերձ շրջանների երեխաները:

Կենտրոնի կողմից 2018-19 ուս.տարում 1-ին կուրսեցիների շրջանում իրականացվել է ուսումնասիրություն՝ ուսանողների ուսումնական գործունեության մոտիվացիայի մակարդակը որոշելու նպատակով: Նշված ուսումնասիրությունն իրականացվել է նաև 2021-22 ուս.տարում՝ նույն կուրսերում (4-րդ կուրս), կատարվել է համեմատական վերլուծություն՝ բուհում սովորելու ընթացքում ուսումնական գործունեության մոտիվացիայի փոփոխությունների առանձնահատկությունները որոշելու նպատակով:

Կենտրոնը ամենամսյա աշխատանքներ է իրականացրել առաջին կուրսեցիների հետ, որի նպատակը ուսանողներին հոգեբանական օգնություն և աջակցություն ցուցաբերելն ու ուսանողական խմբերում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումն է:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի կուրսերի ուսանողների մասնակցությամբ մեկնարկված «Հոգեբանական ակնարկներ» տեսանախագծում լուսաբանվել են հետևյալ թեմաները՝

1. Վաղ տարիքի հոգեբանական նկարագիրը
2. Ո՞վ է հոգեբանը
3. Ի՞նչ է սերը
4. Հիշողություն

3. Համագործակցության զարգացում

Մեկտեմբերի 22-ին ԱրՊՀ և ԱՀ ՊԲ համատեղությամբ կազմակերպվել է գիտագործնական կոնֆերանս՝ նվիրված ինքնասպանությունների կանխարգելման համաշխարհային օրվան: «Ինքնասպանության և ինքնասպանության հասցնելու երևույթի պատճառները, նպաստող պայմանները և կանխարգելման ուղիները» թեմայով գիտագործնական կոնֆերանսին մասնակցել են միավորումների, գործառնների, գումարտակների հրամանատարների ԲՀԱ գծով տեղակալներ, սպա-հոգեբաններ, հոգևոր սպասավորներ, ռազմաիրավապահ մարմինների ներկայացուցիչներ, ԱրՊՀ դասախոսներ, հոգեբանական կենտրոնի աշխատակիցներ և ուսանողներ: Թեմային առնչվող ելույթներով հանդես են եկել Արցախի պետական համալսարանի ՈԻՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վ. Յարամիշյանը, հոգեբանության դասախոս Ա. Ավանեսյանը:

Նոյեմբերի 11-ին տեղի է ունեցել հանդիպում ԿԽՄԿ-ի հոգեբանների հետ:

Դեկտեմբերի 11-ին Խ.Աբովյանի անվան ԵՊՄՀ դասախոս, հ.գ.թ., դոցենտ Մարինե Միքայելյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում կազմակերպվել է առցանց սեմինար պարապմունք՝ «Կոնֆլիկտներ» թեմայով:

Դեկտեմբերի 15-ին կայացել է ԵՊՄՀ հոգեբանության ամբիոնի դոցենտ Մ. Միքայելյանի նախաձեռնությամբ կազմակերպված հերթական երկրորդ առցանց սեմինար պարապմունքը՝ «Բռնություն» թեմայով: Քննարկվել են հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ է բռնությունը
2. Որո՞նք են բռնության տեսակները
3. Ինչպիսի՞ք քայլեր կարող ենք ձեռնարկել բռնության կանխարգելման համար:

Դեկտեմբերի 20-ին կայացել է ԵՊՄՀ հոգեբանության ամբիոնի դոցենտ Մ. Միքայելյանի նախաձեռնությամբ կազմակերպված հերթական երրորդ առցանց սեմինար պարապմունքը՝ «Ի՞նչ է բնավորությունը» թեմայով: Քննարկվել և կատարվել են հետևյալ վարժությունները.

1. Ի՞նչ գույնի եմ ես
2. Ես պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա
3. Ես ինձ լավ եմ զգում

Մարտի 26-ին մի խումբ ուսանողներ և դասախոսներ հոգեբանական կենտրոնի և ԱՀ ՊԲ համապատասխան ստորաբաժանման նախաձեռնությամբ այցելել են Ադրբեջանի զինված ուժերի կողմից կիրառված ԱԹՍ-ների հարվածների հետևանքով վիրավորում ստացած ԱՀ ՊԲ զինծառայողներին:

4. Միջոցառումներ՝ նվիրված նշանավոր մարդկանց, տոն և հիշարժան օրերին

Հոկտեմբերի 11-ին մանկավարժության և հոգեբանության ամբիոնի և հոգեբանական կենտրոնի համատեղ ջանքերով կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում «Անորոշության զգացումը որպես հոգեկան առողջությունը վտանգող գործոն» թեմայով՝ նվիրված Հոգեկան առողջության միջազգային օրվան: Քննարկմանը ներկա էին ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ, հոգեբան-մասնագետներ ԱՀ-ից ու ՀՀ-ից:

Փետրվարի 15-ին «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողները կազմակերպել են միջոցառում՝ «Միտո հոգեբանության ուրվագծերը» թեմայով:

5. Անհատական և խմբային խորհրդատվություններ, շտկողական և թերապևտիկ աշխատանքներ

Անհատական խորհրդատվություն ստանալու նպատակով կենտրոն են դիմել 32 հոգի՝ հետևյալ խնդիրներով.

- վախ,
- ագրեսիվություն,
- տագնապայնություն,
- ներանձնային կոնֆլիկտներ,
- սթրեսներ, դեպրեսիա և այլն:

Խորհրդատվություններն անց են կացրել հոգեբաններ Ա. Բաբայանը, Մ. Գասպարյանը, Ռ. Մկրտչյանը:

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Նախագահ՝ Մարգարյան Արա Կարոյի

«Իրավագիտություն» կրթական ծրագրի II կուրսի ուսանող

ԱրՊՀ ուսանողական խորհուրդը (ՌԽ) գործունեությունը իրականացնում է իր կանոնադրությանը համապատասխան ակտիվորեն համագործակցելով ՌԵՀՀՏԱԳ պրոռեկտորի, ՌԻՀՏԱԿ բաժնի, ԱրՊՀ այլ ստորաբաժանումների հետ:

Ուսանողական խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա հաշվետվությունը կազմված է ֆակուլտետների ուսանողական խորհուրդների (ՖՈԽ) հաշվետվությունների հիման վրա: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետներում զգալի աշխատանքներ են կատարվել ուսանողների ակտիվ ստեղծագործական կյանքը բովանդակալից դարձնելու համար և ուսումնագիտական գործունեության ուղղությամբ կազմակերպվել են ուսումնական, մարզամշակութային, ժամանցային և այլ միջոցառումներ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ, որոնցից կարելի է առանձնացնել ԱրՊՀ ՌԽ և ՖՈԽ-երի ներկայացուցիչների հանդիպումները

ԱրՊՀ ղեկավարության հետ: Այդ ընթացքում քննարկվել և իրենց լուծումներն են ստացել ուսանողության կողմից բարձրացված կարևոր հարցերը:

Սեպտեմբերի 1-ին ուսանողական խորհուրդը կազմակերպել և իրականացրել է առաջին կուրսեցիների դիմավորման արարողություն: Հաջորդիվ, սեպտեմբերի 3-15-ը ընկած ժամանակահատվածում, կազմակերպվել են առաջին կուրսեցիների իրազեկման աշխատանքներ՝ նպատակ ունենալով նրանց ծանոթացնել համալսարանի կառուցվածքին, գործունեությանը, քննությունների կարգին և ուսանողական կյանքին:

Սեպտեմբերի 16-20-ը ՈԻԽ սպորտի հանձնաժողովի կողմից կազմակերպվել է ԱրՊՀ միջֆակուլտետային միևնույն ֆուտբոլի առաջնություն, որի նպատակն էր զարգացնել ուսանողների մարզամշակութային կյանքը և ներգրավել նրանց ակտիվ ուսանողական կյանքին: Սեպտեմբերի 23-ին կազմակերպվել ենք առաջին կուրսեցիների երդման արարողությունը:

Համագործակցելով ՈԻԳԸ-ի հետ՝ սեպտեմբերի 24-ին կազմակերպվել ենք «Իրազեկ ուսանող» խաղ-մրցույթ, որի նպատակն էր ստուգել առաջին կուրսեցիների իրազեկվածությունը համալսարանական և ուսանողական կյանքից:

Սեպտեմբերի 25-ին կազմակերպվել են մաքրման աշխատանքներ Եղբայրական հուշահամալիրում, որի նպատակն էր բարեկարգել մեր հերոս նահատակների հիշատակը հավերժացնող հուշահամալիրն ու հարակից տարածքը:

Սեպտեմբերի 27-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է «Իրազեկ ուսանող» ծրագրի վերջին փուլը: Պատմության և իրավագիտության, տնտեսագիտության ֆակուլտետների առաջին կուրսեցիները հրավիրվել են համակարգչային քննության սենյակ, որի նպատակն էր ծանոթացնել համակարգչային քննությունների անցկացման կարգին ու կանոններին: Նմանատիպ աշխատանքներ կատարվել են նաև ԱրՊՀ մյուս ֆակուլտետների առաջին կուրսեցիների համար:

Համապատասխան աշխատանքները կատարվել են՝ համագործակցելով ՈԻԳԸ և ՈԻՀՏԱԿ բաժնի հետ: Սեպտեմբեր ամսվա կատարած աշխատանքները հիմնականում միտված էին առաջին կուրսեցիների՝ կարճ ժամանակահատվածում ուսանողական կյանքին ինտեգրվելուն: Ըստ էության, բավարար չափով արդյունք գրանցվել էր: Սեպտեմբեր ամսում կատարված աշխատանքները նպատակային էին:

Հոկտեմբերի 13-14-ն ընկած ժամանակահատվածում ՈԻԽ սպորտի հանձնաժողովի կողմից կազմակերպվել է սեղանի թենիսի առաջնություն համալսարանի բոլոր ֆակուլտետների միջև, որն ուղղված էր ուսանողների մարզամշակութային կյանքի զարգացմանը:

Հոկտեմբերի 13-ին ՈԻԽ և ՈԻԳԸ համատեղ ջանքերով կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ-մրցույթ՝ համալսարանի բոլոր ֆակուլտետների առաջին կուրսեցիների միջև՝ նպատակ ունենալով զարգացնել ուսանողների մտաճանապարհը, այլ հետաքրքիր գիտելիքներով բարձրացնել նրանց ինտելեկտուալ մակարդակը:

Համավարակով պայմանավորված՝ նոյեմբեր ամսից մեկնարկել է առցանց հանդիպումների ծրագիրը: Նոյեմբերի 18-ին կազմակերպվել են հանդիպում-քննարկում լրագրող, հրապարակախոս, վերլուծաբան Նաիրի Հոխիկյանի, իսկ նոյեմբերի 1-ին՝ քաղաքագետ Էդգար Էլբակյանի հետ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են տարածաշրջանային մի շարք մարտահարվերների, հղել են իրենց հարցերը, ստացել դրանց սպառիչ պատասխանները:

Նոյեմբերի 23-ին կազմակերպվել է առցանց հանդիպում ԵՊԲՀ-ի 6-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Մարգարյանի հետ՝ «Առաջին բուժօգնություն» թեմայով, որի ընթացքում մեր ուսանողներին են ներկայացվել առաջին բուժօգնության հիմունքները՝ ինչպես վարվել տարբեր իրավիճակներում և այլն: Հանդիպման նպատակն էր ուսանողներին նախապատրաստել տարբեր իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու ճիշտ ձևերին:

Նոյեմբերի 26-ին պատմության և իրավագիտության ֆակուլտետի ՈԻԳԸ-ն հետ կազմակերպվել է առցանց հանդիպում աղբյուրաբան Անժելա Էլիբեգովայի հետ, որի ընթացքում բանախոսը ներկայացրել է Աղբյուրաբանի ներքին և արտաքին քաղաքական վիճակը, ինչպես նաև պատասխանել ուսանողներին հուզող հարցերին:

Դեկտեմբերի 12-ին ԱրՊՀ ղեկավարության և ՈԻՀՏԱԿ բաժնի աջակցությամբ կազմակերպվել է արշավ դեպի Գանձասար: Արշավի ընթացքում մոտ 150 ուսանող այցելել է Գանձասարի վանական համալիր, ինչպես նաև պարզնատրվել ԱրՊՀ ռեկտորի կողմից Ուսանողի միջազգային տոն օրվա կապակցությամբ:

Դեկտեմբերի 15-ին իրավունքի ամբիոնի հետ համատեղ կազմակերպվել է հանդիպում Ֆրանսիայի Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Արամ Մարտիրոսեանի հետ, որի ընթացքում

ուսանողներին ներկայացվել են հայ կանոնական իրավունքի քաղաքական-կրոնական հիմնախնդիրները:

Դեկտեմբերի 24-ին, համագործակցելով ԿԽՄԿ ԼՂ առաքելության հետ, կազմակերպվել է հանդիպում-քննարկում Հայ-ռուսական համալսարանի դասախոս, ՄԱԿՓԳՀ-ում, ԵԱՀԿ-ում՝ միջազգային իրավունքի փորձագետ Աննա Մելիքյանի հետ՝ «Ռազմագերիների իրավական կարգավիճակը» թեմայով, որի ընթացքում ուսանողներին են ներկայացվել ռազմագերիների իրավական կարգավիճակի մասին տեղեկություններ, նրանց երաշխիքներն ու հայրենադարձության ընթացակարգերը: Ուսանողները հղել են նաև իրենց հուզող հարցերը:

Դեկտեմբերի 25-ին ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ, ՌԻՀՏԱԿ բաժնի և ՌԻԳԸ-ի հետ կազմակերպվել է այցելություն Ստեփանակերտի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն, որի ընթացքում ուսանողները հանդես են եկել ամանորյա ժամանցային ծրագրով: Այցի նպատակն էր ապահովել հաստատության սաների նախատոնական տրամադրությունը:

Դեկտեմբերի 26-ին ԱրՊՀ ղեկավարության աջակցությամբ, ՌԻՀՏԱԿ բաժնի և ՌԻԳԸ-ի հետ կազմակերպվել է այցելություն ԱՀ Ռ գորամաս, որի ընթացքում ԱրՊՀ մի խումբ ուսանողներ շրջայց են կատարել գորամասում, ծանոթացել զինվորների ծառայության պայմաններին: Կազմակերպվել է ինտելեկտուալ խաղ զինվորների հետ, վերջում համալսարանի բոլոր ֆակուլտետների կողմից պատրաստված ծանրոցները հանձնվել են գորամասի զինվորներին: Նպատակն էր նաև մեկ անգամ հաստատելու այն գաղափարը, որ մենք մեր բանակի ու զինվորների կողքին ենք, ինչպես նաև ամրապնդել *բուհ-բանակ* կապը, ապահովել զինվորների նախատոնական տրամադրությունը:

ԱրՊՀ ուսանողական խորհուրդը նոր ուսումնական կիսամյակից վերսկսել է իր ակտիվ գործունեությունը՝ նպատակ ունենալով խթանել համալսարանի ուսանողական կյանքի աշխուժացումը:

Փետրվարի 17-ից իր գործունեությունն է վերսկսել բանավեճի ակումբը՝ «Ընտրությունները ժողովրդավարության լավագույն փորձությունը չեն» թեմայով, որի նպատակն էր ուսանողներին ընդգրկել ակտիվ ուսանողական կյանքին, խթանել վերլուծական մտածողության զարգացումը:

Փետրվարի 22-ին բնագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ իրականացվել է «Ամենախելացին» խաղ-մրցույթ: Խաղին ընդգրկված էին ուսանողներ բոլոր ֆակուլտետներից: Խաղ-մրցույթի նպատակն էր զարգացնել ուսանողների մտածողությունն ու վերլուծական միտքը, բացահայտել բազմակողմանի զարգացած ուսանողներին:

Փետրվարի 23-ին Հայրենյաց պաշտպանի օրվա առթիվ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում, որին հրավիրված էին նաև ՊԲ սպաներ ու ժամկետային զինծառայողներ: Նպատակն էր՝ ուսանողության շրջանում կարևորել բանակի դերը մեր երկրի անվտանգության ու պաշտպանության գործում, ամրապնդել *բուհ-բանակ* կապը:

Փետրվարի 23-ին *բուհ-դպրոց* համագործակցության շրջանակներում ուսանողական խորհրդի իրավական հանձնաժողովի և ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է դաս-սեմինար Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան թիվ 2 դպրոցում՝ «Վնասակար սովորությունները և դրանց հետևանքները» թեմայով, որը նպատակ ուներ աշակերտներին իրազեկել վնասակար սովորությունների, դրանց ազդեցության ու հետևանքների մասին, ինչպես նաև դրանցից ազատվելու ուղիները:

Փետրվարի 28-ին պատմության և քաղաքագիտության ամբիոնի հետ կազմակերպվել է հուշ-ցերեկույթ՝ նվիրված Սումգայիթյան ողբերգության 34-րդ տարելիցին: Միջոցառման ընթացքում ամբիոնի վարիչը և մի խումբ ուսանողներ հանդես են եկել զեկույցներով՝ Սումգայիթյան ցեղասպանության պատմական ու իրավական գնահատականների վերաբերյալ: Միջոցառման ընթացքում տեղի է ունեցել նաև ֆիլմի դիտում-քննարկում:

Մարտի 7-ից մեկնարկել ենք *բուհ-դպրոց* համագործակցության ծրագիրը, որի ընթացքում Ստեփանակերտի ու մի շարք համայնքների դպրոցներում կազմակերպվել են հանդիպումներ: Ծրագրին մասնակցում էին ուսանողներ բոլոր ֆակուլտետներից՝ տարբեր մասնագիտություններով: Ծրագրի ընթացքում ուսանողները ներկայացրել են իրենց մասնագիտության առանձնահատկություններն ու առավելությունները, ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների անհրաժեշտությունը, համալսարանական

կյանքն ու ուսանողական առօրյան, կատարած աշխատանքներն ու առաջիկա պլանները, որի նպատակն էր աշակերտներին օգնել՝ կողմնորոշվելու մասնագիտության ընտրության հարցում:

Մարտի 15-ին բնագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի հետ կազմակերպվել է կանանց միամսյակին նվիրված ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Մրցույթի նպատակն էր շարժել տղաների տրամաբանությունը, նոր գիտելիքներ հաղորդել կանանց վերաբերյալ ու ևս մեկ անգամ կարևորել կնոջ դերը ընտանիքում և, ընդհանրապես՝ աշխարհում:

Մարտի 16-ին ուսանողական խորհրդին կից ստեղծված լեզուների ակումբը մեկնարկել է իր գործունեությունը: Տեղի է ունեցել խաղ-մրցույթ, որի նպատակն էր սկզբանե եղել է ակումբի մասնակիցների համար հետաքրքիր ժամանցի ապահովումը, խաղի միջոցով անգլերենի իմացության ամրապնդումը, հետագայում սովորածի կիրառումը: Նման խաղերը ապահովում են հետաքրքիր ժամանցը, ամրապնդում են կապը տարբեր ֆակուլտետների ուսանողների միջև՝ միաժամանակ զարգացնելով նրանց թիմում աշխատելու հմտությունները, ինչպես նաև հնարավորություն են տալիս ստուգել իրենց լեզվական կարողությունները և ձեռք բերել նոր գիտելիքներ:

Մարտի 25-ին կազմակերպվել է առցանց հանդիպում քաղաքագետ Հոգար Էլբակյանի հետ՝ «ՀՀ և ԱՀ հիմնական մարտահրավերները և լուծման ուղիները» թեմայով, որի ընթացքում մասնագետը ներկայացրել է տարածաշրջանային հիմնահարցերն ու հետագա զարգացումները, դրանց դիմակայելու և լուծումների ուղիները, ինչպես նաև պատասխանել ուսանողներին հուզող հարցերին:

Մարտ ամսվա երկրորդ կեսին համալսարանի բոլոր ֆակուլտետների մասնակցությամբ ծանրոցներ են պատրաստվել ու ուղարկվել ԱՀ ՊԲ առաջնագծի դիրքեր՝ ի աջակցություն մեր զինվորների:

Ապրիլի 23-ին, Անգլերենի միջազգային օրվա կապակցությամբ, բանասիրական ֆակուլտետի ՌԻՖ-ի և լեզուների ակումբի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում, որի նպատակն էր ուսանողների շրջանում կարևորել անգլերենի իմացությունը, ինչպես նաև կազմակերպել նրանց ժամանցը:

Մայիսի 4-ին ուսանողական խորհրդի իրավական հանձնաժողովի և «Իրավագիտություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների նախաձեռնությամբ կազմակերպվել է դաս-սեմինար Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան թիվ 2 դպրոցի 8-րդ դասարանում՝ «Հայոց ցեղասպանություն» խորագրով՝ թեման անմիջականորեն կապելով Արցախի ներկայիս իրավիճակի հետ: Աշակերտների հետ զրույցում ուսանողները հանդես եկան ազգային գաղափարախոսությամբ, ապագայում իրենց մասնակցությամբ նոր հաղթանակների կերտման, ինչպես նաև Արցախում ապրելու ու արարելու, նրա շենագման մեջ մեծ դեր ունենալու և խելացի ու բանիմաց սերունդ դաստիարակելու, Արցախը հզոր դարձնելու մասին:

Մայիսի 12-13-ը ՌԻՀՏԱԿ բաժնի և ուսանողական գիտական ընկերության հետ կազմակերպվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված ԱրՊՀ 44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին, որին մասնակցում էին ուսանողներ ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի ու արտասահմանի բուհերից:

Մայիսի 12-ին ՌԻՀՏԱԿ բաժնի հետ կազմակերպվել է հուշ-երեկույթ՝ նվիրված ԱրՊՀ 44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին:

ՌԻՖ-ի մշտական հանձնաժողովները նույնպես աշխատանքներ են կատարել իրենց վստահված ուղղություններով: Հաշվետու ժամանակահատվածում քննարկվել և լուծվել են ուսանողների կողմից ներկայացված խնդիրները: Քննաշրջանի ժամանակ ծագած խնդիրները նույնպես լուծվել են:

Ուսանողական խորհուրդը, համագործակցելով ԱրՊՀ ՌԻՀՏԱԿ բաժնի, իրավաբանական բաժնի, ՌԻԳԸ-ի և համալսարանի այլ ստորաբաժանումների հետ, նպաստել ու ապահովել է բուհի ուսանողների մասնակցությունն ու ներգրավվածությունը ինչպես համալսարանական, այնպես էլ արտահամալսարանական միջոցառումներին, ինչպիսիք են ԿԽՄԿ-ի կողմից կազմակերպված էսսեների մրցույթը, ՄԻՊ-ի կողմից կազմակերպված «Մարդու իրավունքներ և անվտանգություն» թեմայով դասընթացների շաբթը, «Բեռզոֆ» հիմնադրամի «Հիշողությունը և պատմության հիմքը» խորագրով քննարկումներն ու հանդիպումները և այլն:

Ուսանողական խորհուրդը ակտիվ համագործակցել է ԱՀ ԿԳՄՍ նախարարության, Արցախում գործող հասարակական կազմակերպությունների և տարբեր բուհերի ինքնավար կառույցների հետ: Հաշվետու ուսումնական տարում ավելացել է ակտիվ ուսանողների քանակը՝ պայմանավորված ՌԻՖ-ի կողմից կազմակերպված տարաբնույթ միջոցառումների բնույթով:

Վերոնշյալ կազմակերպված միջոցառումներին մեծապես աջակցել են ԱրՊՀ ղեկավարությունը, ՈԻՇՀՀՏԱԳ պրոռեկտորը, ՈԻՀՏԱԿ բաժինը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախագահ՝ Ղահրամանյան Տաթևիկ Վարդանի

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի III կուրսի ուսանողուհի

Ուսանողական գիտական ընկերության 2021-2022 ուսումնական տարվա հաշվետվությունը կազմված է ՖՈԻԳԸ նախագահների հաշվետվությունների հիման վրա: Հաշվետու ժամանակահատվածում ուսանողական գիտական ընկերությունը, կառույցի ուղղվածությամբ պայմանավորված, կատարել է մի շարք աշխատանքներ:

Սեպտեմբերին ուսանողական խորհրդի հետ համատեղ իրականացվել է առաջին կուրսեցիների դիմավորման արարողությունը: Հաջորդիվ բոլոր ֆակուլտետներում իրագեկման աշխատանքներ են կատարվել՝ ծանոթացնելով համակարգչային քննության կարգին, սեմինարներ են կազմակերպվել՝ բուհում գիտական աշխատանք գրելու ակադեմիական հիմունքներին ծանոթացնելու նպատակով:

Սեպտեմբերի 24-ին ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է «Իրագեկ ուսանող» խաղ-մրցույթ՝ առաջին կուրսեցիներին համալսարանի պատմությանը, կառույցներին, ընդհանուր կանոնակարգին ծանոթացնելու, համալսարանական կյանքին ինտեգրելու նպատակով:

Նոյեմբերի 11-ին կազմակերպվել են ներֆակուլտետային ինտելեկտուալ խաղեր, որոնց հաջորդել է միջֆակուլտետային խաղի կազմակերպումը:

Նոյեմբերի 12-ին ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ՈԻԳԸ-ի հետ կազմակերպվել է ստեղծագործական մրցույթ, որին մասնակցել են և՛ ԵՊՀ-ի, և՛ ԱրՊՀ-ի ուսանողները: Նպատակը միջբուհական կյանքի ամրապնդումն էր և ստեղծագործ ուսանողների բացահայտումը:

Նոյեմբերի 19-ին հեռավար ձևաչափով կազմակերպվել է մեդիագրագիտությանը նվիրված սեմինար:

Ուսանողները ծանոթացան մեդիա դաշտին, մեդիագրագիտության գործիքներին, սովորեցին կեղծ և իրական տեղեկատվության տարբերակման ձևերը՝ զինվելով մեր օրերի համար արդիական գիտելիքներով:

Նոյեմբերի 26-ին ՈԻԳԸ և ՈԻԽ նախաձեռնությամբ կայացավ հանդիպում աղբյուրաբանական Անեժեյա Էլիբեգովայի հետ:

Փետրվարին ՈԻԳԸ-ի կողմից կազմակերպվել է մոտիվացիոն նամակների մրցույթ: Ուսանողները նամակի տեսքով ներկայացրել են իրենց սիրելի գիրքը, մեկնաբանել իրենց ընտրությունը:

Մայիսի 12-13-ը ԱրՊՀ-ում կազմակերպվել է ուսանողական գիտաժողով, որի նախապատրաստական, անցկացման և հետագա՝ տպագրման աշխատանքներին իր մասնակցությունն է ունեցել ուսանողական գիտական ընկերությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում մշտապես պահվել է ՈԻԳԸ-ՈԻԽ համագործակցության տանդեմը, ինչը կարևոր է ուսանողների գիտական, մշակութային, ժամանցային կյանքը ապահովելու գործում:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Կլինիկայի համակարգող՝ Մայիլյան Լիանա Լեոնիդի

2021-2022 ուսումնական տարում իրավաբանական կլինիկայում ընդգրկված են եղել 20 ուսանողներ: Իրավաբանական կլինիկա են դիմել 30 քաղաքացիներ, որոնց իրավական խնդիրների վերաբերյալ կազմվել են գործեր և տրվել համապատասխան լուծումներ:

Կլինիկա դիմած 13 քաղաքացիներին տրամադրվել է իրավական խորհրդատվություն, ուսանողների կողմից նախապատրաստվել են իրավական բնույթի տարբեր փաստաթղթեր, որոնք հայցապահանջներին կից ներկայացվել են դատարան: Բոլոր հայցապահանջները ընդունվել են դատարանի վարույթ ու ստացել են համապատասխան դատական լուծումներ: Հայցապահանջները եղել են տարբեր իրավական բնույթի, մասնավորապես՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր հաստատելու վերաբերյալ, ամուսնալուծության՝ 6, ալիմենտ

բռնագանձելու՝ 2, գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու՝ 4, ստածի վերականգնման՝ 5, և այլ պահանջներ:

Կլինիկա դիմած 30 քաղաքացիների իրավական խնդրին լուծում է տրվել պետական տարբեր մարմիններին համապատասխան դիմումներ պատրաստելու և ուղարկելու եղանակով: Փաստաբանական հարցումները կազմվել են ուսանողների կողմից, որոնք հաստատվել են փաստաբան-դասընթացավարի կողմից:

Փաստաբան-դասընթացավարի հսկողությամբ և աջակցությամբ կլինիկայի ուսանողների կողմից կազմվել են հայցադիմումների պատասխաններ, հաշվետվության համաձայնություն, վերաքննիչ բողոքներ:

ԱՐԽԻՎ

Արխիվարիտս՝ Ղահրամանյան Անահիտ Կիմայի

2021-22 ուսումնական տարում ԱրՊՀ-ի արխիվում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Բավարարվել է բուհն ավարտած կամ կիսատ թողած ուսանողների՝ միջնակարգ ընդհանուր կրթության ատեստատները վերցնելու վերաբերյալ 277 դիմումներից 220 դիմումը:

2. Բավարարվել է բուհն ավարտած կամ կիսատ թողած ուսանողների ուսումնառության տարիների վերաբերյալ 110 դիմումը, տրվել են համապատասխան տեղեկանքներ:

3. Ընդունվել և մշակման են ենթարկվել դեկանատների կողմից նախորդ տարիներից, արխիվ հանձնված, ինչպես նաև 2020-2021 և 2021-2022 ուս.տարվա փաստաթղթերը (բուհն ավարտած, կիսատ թողած, զոհված կամ մահացած ուսանողների անձնական գործեր, տեղեկագրեր), ստեղծվել նոր բաժիններ (ֆոնդեր):

4. Ընդունվել և մշակման են ենթարկվել ֆակուլտետների ամբիոնների կողմից հանձնված փաստաթղթերը (ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր):

5. Ընդունվել և մշակման են ենթարկվել բուհի ընդունելության հանձնաժողովի, ուսումնական գործընթացի կազմակերպման և կադրերի բաժինների կողմից հանձնված փաստաթղթերը:

6. Բավարարվել են բուհի ստորաբաժանումների կողմից ներկայացված պահանջները:

7. Մշակվել և թարմացվել են արխիվում գտնվող հին բաժիններից (ֆոնդերից) 8 բաժին (ֆոնդ): Դրանք են 2008թ.մինչև 2016թ ներառյալ բուհն ընդունված և ավարտած ուսանողների անձնական գործերը:

Արխիվում գտնվող հին բաժինների (ֆոնդերի) մշակումը և թարմացումը կրում է շարունակական բնույթ:

ԲՈՒԺԿԵՏ

Վարիչ՝ Սարգսյան Անուշ Էդուարդի

2021-2022 ուսումնական տարում բուժկետ է հաճախել 1159 մարդ, որից՝ 317 ուսանող, 842 աշխատող: Հաճախորդների թիվը 2020-2021 ուսումնական տարվա համեմատ նվազել է 132- ով:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ծավալը 19,5 տպ. մամուլ: Տպարանակ 100:

Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ.՝ (0749) 4-04-91, ֆաքս՝ (0479) 7-12-14

E-mail: rector@asu.am

ԱրՊՀ հրատարակչություն, e-mail: printery.asu@mail.ru,

կայք: www.asu.am

Арцахский государственный университет

г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5,

тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14

Издательство АРГУ, e-mail: printery.asu@mail.ru,

сайт: www.asu.am

Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert

Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14

ASU Publishing house, e-mail: printery.asu@mail.ru,

website: www.asu.am